


ԷԶՄԻԱԾԻՆ




Ժ
2015



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՍՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՍԱՅՐ ԱԹՈՈՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՆՆԻ

Հոկտեմբեր

2015
Ա. ԷԶՄԻԱՆՆԻ



ՀՐԱՄԱՆԱԻ
S. S. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«ԼԶՖԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական հանդէս

Խմբագրակազմ

Գլխավոր խմբագիր՝ Արսէն Բորոխեան

Խմբագիրներ՝

Ոսկան քահանայ Յովհաննիսեան, Արփինէ Չանթիկեան

Տեխնիկական խմբագիր՝

Անգելինա Ալեքսանեան

Լեզուաբանական խմբագիր՝ Վազգէն Սաֆարեան

Խմբագրական խորհուրդ

Վահան Եպիսկոպոս Յովհաննիսեան (*Ֆրանսիա*), **Անուշաւան Եպիսկոպոս Ժամկոչեան** (*Երեւանի պետական համալսարան, Ասորուծարանութեան ֆակուլտէտ*), **Գէորգ Եպիսկոպոս Սարոյեան** (*Գէորգեան հոգեւոր ձեմարան (ասորուծարանական համալսարան)*), **Դանիէլ վարդապետ Ֆնտրգեան** (*ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմ*), **Շահէ վարդապետ Անանեան** (*Գէորգեան հոգեւոր ձեմարան (ասորուծարանական համալսարան)*), **Գարեգին վարդապետ Համբարձումեան** (*Գէորգեան հոգեւոր ձեմարան (ասորուծարանական համալսարան)*), **Զաքարիա վարդապետ Բաղդումեան** (*Գէորգեան հոգեւոր ձեմարան (ասորուծարանական համալսարան)*), **Հրաչ սարկաւազ Սարգիսեան** (*Գէորգեան հոգեւոր ձեմարան (ասորուծարանական համալսարան)*), **Գէորգ Տէր-Վարդանեան** (*Մաշտոցի անուան Մարենտադարան, Գէորգեան հոգեւոր ձեմարան (ասորուծարանական համալսարան)*), **Գոհար Յարութիւնեան-Թումա** (*Գէորգեան հոգեւոր ձեմարան (ասորուծարանական համալսարան)*), **Պետրոս Յովհաննիսեան** (*Երեւանի պետական համալսարան, Գէորգեան հոգեւոր ձեմարան (ասորուծարանական համալսարան)*), **Անահիտ Աւագեան** (*Գէորգեան հոգեւոր ձեմարան (ասորուծարանական համալսարան)*), **Գոհար Մուրադեան** (*Մաշտոցի անուան Մարենտադարան*), **Ազատ Բոգոյեան** (*«Լաշէ եւ Թամար Մանուկեան Մարենտադարան»*), **ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ**), **Ալեքսան Յակոբեան** (*ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ*), **Մհեր Նաոյեան** (*Երեւանի պետական կոնսերւատորիա*), **Աննա Արեւշատեան** (*Երեւանի պետական կոնսերւատորիա*), **Արամ Մարտիրոսեան** (*Ֆրանսիա, Փարիզ-Նանսերի համալսարան*), **Իգաբէլ Էօմէ** (*Ֆրանսիա, Մոնպելիէի համալսարան*), **Աննա Շիրինեան** (*Բուլղարիա, Բոլոնիայի համալսարան*)

“Etchmiadzin”

Review of Religious Studies and Armenology

Editorial staff

Editor in chief - **Arsen Bobokhyan**

Editors

Fr. Voskan Hovhannisyan, Arpine Chantikyan

Technical editor - **Angelina Aleksanyan**

Linguistic-stylistic editor - **Vasken Safaryan**

Editorial Board

Bishop Vahan Hovannisian (*France*), **Bishop Anushavan Zhamkochyan** (*Yerevan State University, Faculty of Theology*), **Bishop Kevork Saroyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Archimandrite Daniel Findikyan** (*USA, Eastern Armenian Diocese*), **Archimandrite Shahe Ananyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Archimandrite Zakaria Baghumyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Archimandrite Karekin Hambardzumyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Deacon Hratch Sarkissian** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Kevork Ter-Vardanyan** (*Matenadaran, Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Gohar Harutiunyan-Thomas** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Petros Hovhannisyan** (*Yerevan State University, Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Anahit Avagyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Gohar Muradyan** (*Matenadaran, Yerevan*), **Azat Bozoyan** (“*Vatche and Tamar Manoukian Library*”, *Institute of Oriental Studies, National Academy of Sciences of the Republic of Armenia*), **Alexan Hakobyan** (*Institute of Oriental Studies, National Academy of Sciences of the Republic of Armenia*), **Mher Navoyan** (*Yerevan State Conservatory*), **Anna Arevshatyan** (*Yerevan State Conservatory*), **Aram Martirosian** (*France, University of Paris-Nanterre (Université Paris-Nanterre)*), **Isabel Augé** (*France, University of Montpellier (Université Paul Valéry-Montpellier)*), **Anna Sirinian** (*Italy, University of Bologna (Università di Bologna)*)



**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳԱԳԻԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ՈՐ Ի ՍՈՉԻ, ՌԴ**

Մեծարգոյ արն Պետրոսեան,

Համայն հայութեան հաւատի նուիրական օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Այսօր ուրախ առիթ ունենք Մեր բարձր գնահատանքը բերելու հաւատաւոր հայորդոյ Ձեր ազգօգուտ ու եկեղեցաշէն գործունէութեան համար: Լինելով քահանայական տոհմի ժառանգ՝ Դուք առ հայրենին եւ առ մեր Սուրբ Եկեղեցին որդիական անկեղծ, ինքնաբոլիս սիրով յանձն առաք հովանաւորել Գիւմրիի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու վերակառուցման, տարածքի բարեգարդման եւ երիցատան կառուցման աշխատանքները, նոր՝ լուսաւոր էջ յաւելելով Շիրակի թեմի պատմութեան մէջ:

Մենք գոհութիւն ու փառք ենք մատուցում առ Աստուած, որ խորհրդային անաստուածութեան տարիներին փակուած եւ երկրաշարժից խոնարհուած հնամենի ուխտավայր եկեղեցին վերստին իր դռներն է բացում հաւատացելոց առջեւ, որի օրհնաբեր կամարների ներքոյ Շիրակ աշխարհի Մեր սիրեցեալ զաւակները պիտի փառաբանեն Տիրոջ Սուրբ անունը՝ երախտագիտութեամբ յիշելով նաեւ Ձեզ եւ Ձեր եկեղեցասէր ընտանիքը:

Բարձր գնահատելով Ձեր եկեղեցանուէր բարի վաստակը եւ սիրով ընդառաջելով Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Միքայէլ եպս. Աջապահեանի խնդրանքին, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու վերածման

առիթով Հայրապետական այսու կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻԶ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մաղթում ենք, որ շնորհեալ պարգևը Ձեզ համար դառնայ խանդավառութեան նոր առիթ, որպէսզի Դուք շարունակէք օրինակելի նուիրումով ու հաւատարմութեամբ Ձեր բարի ծառայութիւնը ի բարօրութիւն մեր ժողովրդի եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Տիրոջ ամենատաա շնորհները Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ մաղթելով կենաց քաջառողջութիւն եւ առաքինազարդ գործոց յարանոր յաջողութիւններ:

Ասրուած յուսոյ՝ լի՛ արասցէ՛ զՁեզ ամենայն խնդրութեամբ եւ խաղաղութեամբ, ստաւելո՛ւ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ (Հռոմ. ԺԵ. 13):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14-ն հոկտեմբերի
յամի տեառն 2015 եւ ի թուին հայոց ՌՆԿԴ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 924



**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱԽԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍԵՐԳԵՅ ՍԱՐԿԻՍՈՎ
ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ**

Մեծարգոյ պրն Սարկիսով,

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերելու Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ տեղեակ ենք Ձեր ազգանուէր եւ եկեղեցաշէն բազմարդիւն վաստակին: Դիւանագիտական գործունէութեամբ Դուք կարեւոր ջանքեր էք ներդնում ի խնդիր մեր երկրի զօրացման ու առաջընթացի, նաեւ ազնիւ բարերարութիւններով սատարում հայրենաշէն տարբեր ծրագրերի իրականացմանը՝ նախանձախնդիր լինելով, որպէսզի առաւել բարօր ու բարգաւաճ լինի մեր ժողովրդի զաւակների կեանքը Հայաստանում եւ Արցախում:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ եկեղեցասէր ոգով ու սրտաբուխ ընծայաբերումով Դուք կարեւոր ներդրում բերեցիք նաեւ Վրաստանի Հայոց Թեմի Առաջնորդանիստ Սուրբ Գեորգ եկեղեցու վերանորոգութեան աստուածահաճոյ գործին: Փառաբանական աղօթքն է Մեր հոգում, որ Տիրոջ օրհնութեամբ եւ հաւատաւոր Մեր զաւակներիդ օժանդակութեամբ բարեգարդուեց պատմական սրբավայրը, որ դարեր շարունակ իր օրհնաբեր յարկի ներքոյ է միաւորում վիրահայ բարեպաշտ մեր ժողովրդին:

Բարձր գնահատելով Ձեր ազգանուէր ծառայութիւնները մեր ժողովրդին ու Սուրբ Եկեղեցուն, սիրով ընդառաջ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգէն եպս. Միրզախանեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ շնորհներն ու օգնակա-

նությունն ենք հայցում Ձեզ և մաղթում, որ Ամենախնամ Տէրը պարգևի Ձեզ քաջատողջ արեւշատություն և աստուածահաճոյ գործերի նորանոր յաջողություններ:


Թող Տիրոջ օրհնությունն ու առատ ողորմությունը անպակաս լինեն Ձեր կեանքից և ընտանեկան Ձեր յարկից:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգոյն և յաւեր օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ կոնդակս ի 30-ն հոկտեմբերի
յամի տեառն 2015 և ի թուին հայոց ՌՆԿԴ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 928



**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԲԻԶԻՆԱ ԻՒԱՆԻՇՈՒԻԼԻ
ՈՐ Ի ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆ**

Յարգարժան Տիար Բիձինա Իւանիշուիլի,

Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ վրաց ժողովրդի արժանատի զաւակիդ, Հայրապետական Մեր օրինութիւնն ու ջերմ բարեմաղթանքները:

Հայաստան կատարած Ձեր պաշտօնական այցելութեան ժամանակ առիթ ունեցանք ճանաչելու Ձեզ եւ մեծապէս տպաւորուելու Վրաստանի առաւել զօրացմանն ու առաջընթացին անմնացորդ ծառայելու Ձեր ազնիւ յանձնառութիւնից:

Այսօր գոհունակութիւն է Մեզ համար Մեր բարձր գնահատանքը բերել Ձեզ հայ-վրացական հարաբերութիւնների առաւել խորացման ու արդիւնատրման գործին բերած նշանակալի աւանդի համար: Վրաստանի վարչապետի պատասխանատու պաշտօնում Ձեր ծառայութեան տարիներին նոր յաջողութիւններ արձանագրուեցին մեր պետութիւնների փոխգործակցութեան ասպարէզում, հնարաւոր դարձաւ լուծումներ գտնել վիրահայ համայնքի առջեւ ծառացած բազմաթիւ խնդիրների:

Առանձնակի ուրախութեամբ ենք անդրադառնում, որ Դուք մեծ աջակցութիւն բերեցիք Թբիլիսիի նորաշէն Սուրբ Աստուածածին եւ Վիրահայոց թեմի առաջնորդանիստ Սուրբ Գեորգ եկեղեցիների վերանորոգութեան աստուածահաճոյ գործին՝ վկայելով Ձեր անկեղծ հաւատն ու աստուածսիրութիւնը, նաեւ մեր ժողովրդի եւ մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ ազնիւ ու ջերմ վերաբերմունքը: Վիրահայ հաւատաւոր Մեր զաւակները մշտապէս երախտագիտութեամբ են յիշելու Ձեզ եւ աղօթքներ ու բարեմաղթանքներ ուղղելու առ երկնաւոր Տէրը Ձեր եւ Ձեր ընտանեաց համար:

Ի գնահատութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ազնիւ ծառայութեանց, սիրով ընդառաջ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանի խնդրանքին՝

Հայրապետական այսու կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻԶ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած Իր օրհնութեան ներքոյ նորանոր յաջողութիւններ պարգեւի Ձեզ՝ ի շինութիւն Վրաստանի օրհնեալ երկրի եւ ի բարօրութիւն նրա բարեպաշտ ժողովրդի:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ շնորհների եւ Բարձրեալի առատ ողորմութեան:

Ողջ լերութ ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 30-ն հոկտեմբերի
յամի տետոն 2015 եւ ի թուին հայոց ՌՆԿԴ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 929



**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱԼԲԵՐՏ ԱՌԻՈԼԵԱՆ
ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ**

Սիրելի՛ պրն Աղոլեան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ համայն հայության աստուածկառոյց հոգեւոր կենտրոնից, բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ տեղեակ ենք մեր ժողովրդի նուիրեալ գաւակիդ եռանդուն եւ նախանձախնդիր գործունէութեանը: Դուք երկար տարիներ բարեսիրական տարբեր ծրագրեր էք իրականացնում Հայաստանում եւ Ռուսաստանի Դաշնութիւնում, աջակցութիւն բերում բարեգործական հիմնադրամների ու կազմակերպութիւնների՝ հաւատարիմ առաքելական խօսքին. «Մի՛ մոռացէք բարեգործութիւնը եւ ձեր ունեցած բարիքներին միմեանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի պատարագներն են հաճելի Աստծուն» (Եբր. ԺԳ. 16):

Այսօր առանձնակի գոհունակութիւն է Հայրապետիս համար անդրադառնալ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շինութեանն ու պայծառութեանը մատուցած Ձեր ծառայութիւններին: Սրտաբովս յանձնառութեամբ Դուք մասնակից դարձաք Վիրահայոց թեմի առաջնորդանիստ Սուրբ Գեորգ եկեղեցու վերանորոգութեան աստուածահաճոյ գործին՝ արտայայտելով Ձեր հաւատն առ Աստուած եւ որդիական սէրը առ քրիստոսասէր մեր ժողովուրդը: Մենք փառք ենք մատուցում Բարձրեալն Աստծուն Ձեզ պէս հայորդեաց հաւատի, եկեղեցասիրութեան ու ազգասիրութեան համար:

Ձեր ազգօգուտ ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻԶ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:


Միաձնի Իջման Սուրբ Խորանի առջև Հայրապետիս աղօթքն է, որ ամենողորմ Տէրն Իր ամենագօր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ պարգևի կեանքի արեւշատ տարիներ, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք՝ նոյն նուիրումով եւ նորոգ քաջալերութեամբ շարունակելու Ձեր ազգանպաստ եւ եկեղեցաշէն գործունէութիւնը:

«Առանկ լերուք ի գործ Տեսուն յամենայն ժամ. գիտաւջիք՝ զի վաստակքն ձեր ոչ են ընդունայն սուսջի Տեսուն» (Ա. Կորնթ. ԺԵ. 58):

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ կոնդակս ի 30-ն հոկտեմբերի
յամի տեառն 2015 եւ ի թուին հայոց ՌՆԿԴ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 930



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՄԱՍԻՍԻ ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ**
(4 հոկտեմբերի, 2015 թ. Մասիս)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

**«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ,
քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս»
(Շարական Սուրբ Էջմիածնի):**

Սիրելի հավատավոր հայորդիներ,

Հոգեւոր ուրախության զգացումներով ենք այսօր համակված ամենքս։ Առ Բարձրյալն Աստված փառաբանությամբ, ձեզ հետ միասնական աղոթակցությամբ կատարեցինք օծումը Մասիս քաղաքի Սուրբ Թադեոս եկեղեցու։

Սուրբ Էջմիածնի տոնին նվիրված գեղեցիկ շարականն արտահայտում է Հայոց առաջին Հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսավորչի կոչը. «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս»։ Նոր եկեղեցիների կառուցումը իրագործումն է այս կոչի՝ դառնալով ոգևորություն և խրախույս մեր կյանքում՝ վառ պահելու հավատքի լույսը, ապրելու բարեպաշտությամբ, գործելու Աստծո կամքի համաձայն։ Նորակառույց և գեղեցկակերտ այս եկեղեցին կրում է Սուրբ Թադեոս առաքյալի անունը, որին շարականագիրը կոչում է «Հայրատունկ այգու հրեղեն պարիսպ, ոսկեղեն բաժակ, ժիր մատովակ և Հայաստանյայց հոգեւոր հայր»։ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները քրիստոնեության լույսը բերեցին Հայաստան և Տիրոջ կենարար շնորհներին արժանի դարձրեցին մեր ժողովրդին։ Օրեր առաջ Սուրբ Մյուռոնի օրինության արարողությանը Մենք հիշատակեցինք, որ Թադեոս առաքյալի ձեռամբ է Հայաստան բերվել Քրիստոսի կողմից օրհնված յուղը, որի զորությունը հաղորդվում է մեր սրբալույս Մյուռոնին և որով այժմ կատարեցինք օծումը այս եկեղեցու։ Թադեոս առաքյալի՝ մեր ժողովրդին մատուցած սպասավորության հիշատակները, հիրավի, մշտաբար կլինեն նաև Քրիս-

տոսի հավատարիմ աշակերտի անունը կրող եկեղեցում եւ այս եկեղեցի այցելող հավատացյալների սրտերում:

Սիրելիներ, հավատքը կենդանի եւ զորավոր է Բարձրյալն Աստծո հետ աղոթական հաղորդակցությամբ: Իր ամենակարողությամբ Աստված ամենուր է՝ երկնքում եւ երկրի վրա, եւ աստվածային հոգեպարար ներկայությունը զգալի է հատկապես Տիրոջը նվիրված սրբագործյալ տաճարներում: Այս իրողությունն է ուսուցանում Դավիթ մարգարեն սաղմոսի միջոցով՝ ասելով. «Տէր ի տաճար սուրբ իւրում. Տէր յերկինս յաթոռ իւրում – Տէրն իր սուրբ տաճարում է, Տէրը երկնքում է՝ իր գահի վրայ» (Սաղմ. Ժ. 5): Եկեղեցին Աստծո տունն է, պաշտամունքի սրբազան վայր, որտեղ հանդիպում են երկինքն ու երկիրը, ժամանակավորն ու հավիտենականը, որտեղ մարդը ներթափանցում է հավերժության խորհրդի մեջ, ստանում նաեւ պարգևը հավիտենական կյանքի: Մեր Տիրոջ եւ Փրկչի շնորհները հեղվում են հավատացելոց վրա եկեղեցիների օրհնյալ հարկի ներքո Սուրբ եւ Անմահ Պատարագի, սրբազան արարողությունների մատուցմամբ: Եւ եկեղեցու Սուրբ Սեղանից բաշխվող հոգևոր պարգևներով զորանալով՝ մեր ժողովրդի գավակները երկնային աջակցությամբ արդյունազարդում են իրենց կյանքի ընթացքը աստվածահաճո գործերով: Գովելի է, որ եկեղեցաշեն բարերարները, ընդառաջ մեր ժողովրդի հոգևոր պահանջին, կյանքի են կոչում նոր աղոթավայրերի, օրհնության նվիրական հարկերի, լուստ սուրբ խորանների կառուցումը:

Այսօր Սուրբ Թադեոս եկեղեցու օծման առիթով Հայրապետական բարձր գնահատանքն ենք բերում Վարդանյան ընտանիքի անդամներին, որոնց սրտերում արձագանքեց եւ իրականություն դարձավ Լուսավորչի կոչը. «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս»: Սուրբ Թադեոս առաքյալի անունը կրող այս եկեղեցու հիմքերը մենք օրհնել ենք տարիներ առաջ: Հիմնօրհների արարողությանը ներկա էր նաեւ եկեղեցու բարերարը՝ հոգելույս Հրանտ Վարդանյանը, ում կենդանության օրոք իրականացվեցին եկեղեցու շինարարական հիմնական աշխատանքները, եւ Մասիս քաղաքում վեր հանեց հոյակերտ այս եկեղեցին: Լուսահոգի բարերարի սկսած գործը բարեհաջող ավարտին հասցրեցին նրա գավակները՝ Տիարք Միքայել եւ Կարեն Վարդանյանները, որոնց հետևողականության եւ նախանձախնդրության շնորհիվ Սուրբ Թադեոս եկեղեցին այսօր իր դռներն է բացում հավատավոր մեր գավակների առջեւ եւ հրավիրում աղոթքի: Այս եկեղեցում հավատացյալ հայորդիներն իրենց աղոթքներով մշտապես պիտի հիշեն նաեւ բարե-



Այսօր կանգնեցաւ աւագան մկրտութեան
ի թողութեան մեղաց մերոց (Շարական)



Եկեղեցին Աստծո տունն է, պաշտամունքի սրբազան վայր,
որտեղ հանդիպում են երկինքն ու երկիրը



Մասիս քաղաքի Ս. Թադևոս նորակառույց եկեղեցին

հիշատակ Հրանտ Վարդանյանին՝ հայցելով Տիրոջից խաղաղություն ու հանգստություն նրա լույս հոգուն: Այս պահին Մենք եւս, աղոթելով բարերար հայորդու հոգու հանգստության համար, մաղթում ենք, որ Տերը միշտ հաջողություններ շնորհի բարեպաշտ Վարդանյան ընտանիքի ազգօգուտ, հայրենասեր գործերին:

Այս ուրախալի օրը ցանկանում ենք Մեր գնահատանքը հայտնել նաեւ Արարատյան Հայրապետական թեմի հոգեւոր դասին՝ գլխավորությամբ Առաջնորդական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի, գովելի սպասավորության իրականացման, թեմում հոգեւոր-եկեղեցական կյանքը աշխույժ պահելու եւ նման եկեղեցաշէն ձեռնարկներն ու բարերարությունները խրախուսելու համար:

Սիրելիներ, ողջունելով բոլորիդ աղոթական մասնակցությունը այս սրբազան արարողությանը՝ Մեր ուրախությունն ենք հայտնում, որ Սուրբ Թադեոս եկեղեցու օծման առիթով այստեղ ներկա են Հայաստանի Հանրապետության նախագահ Տիար Սերժ Սարգսյանը, պաշտոնատար անձինք, մեր Սուրբ Եկեղեցու բազում հավատացյալներ: Մեր բարեմաղթանքներն ենք բերում մեծարգո նախագահին՝ հայցելով Աստծո գորակցությունը հայրենանվեր ու ազգասեր բարձր առաքելության մեջ, եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ ամենքիդ:

Մեր աղոթքն է, որ Աստված խաղաղության մեջ նոր առաջընթաց ու շինություն պարգևի հայրենի մեր երկրին, պահի ու պահպանի մեր ժողովրդին՝ առաջնորդելով դեպի նոր ձեռքբերումներ: Թող Տերը Սուրբ Թադեոս առաքյալի բարեխոսությամբ Իր օրհնության ներքո պահի մեր այս եկեղեցին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու զավակներին՝ նորանոր հաջողություններ շնորհելով բոլոր ազգանվեր ու եկեղեցանվեր գործերին ու նախաձեռնություններին, ի պայծառություն ազգային-եկեղեցական մեր կյանքի, ի վայելումն համայն աշխարհասփյուռ հայության:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեսուն Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Բրիսարոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեւսն. ամէն:



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԳԱՄԸ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ 100.
ՃԱՆԱԶՈՒՄԻՑ-ՀԱՏՈՒՑՈՒՄ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ
(15 հոկտեմբերի, 2015 թ.)**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում ենք ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Երեւանի պետական համալսարանի համատեղ նախաձեռնությամբ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված՝ «Հայոց ցեղասպանություն 100. ճանաչումից-հատուցում» միջազգային գիտաժողովի կազմակերպումը և Հայրապետական Մեր օրհնությունը հղում գիտաժողովի բոլոր մասնակիցներին:

1915 թվականը հազարամյակների մեր պատմության ամենաողբերգական էջն է, որը հայրենագրկումի, մարդկային ու նյութական մեծ կորուստների անամոքելի ցավի դառը հիշողություններ է թողել մեր ժողովրդի հոգում: Ի. դարասկզբին ավելի քան մեկ ու կես միլիոն անմեղ հայորդիներ իրենց հավատի ու ազգային պատկանելության համար գոհ գնացին Օսմանյան կայսրության իրագործած անմարդկային ոճրագործությանը՝ Հայոց ցեղասպանությանը: Ավերվեցին մեր շենքերն ու բնակավայրերը, թալանվեցին և քանդվեցին մեր վանքերն ու եկեղեցիները, ոչնչացվեց մեր հայրերի ստեղծած մշակութային ժառանգությունը:

Պատմական իր հայրենիքի մեծագույն մասը կորցրած, մեծ դժվարությունների գնով իր կյանքը վերակառուցած մեր ժողովուրդը Յեղասպանության դաժան հետեւանքները զգում է առ այսօր: Որպես Յեղասպանություն վերապրած ժողովուրդ՝ մեր պայքարը, մեր ջանքերը նպատակաուղղված են ցեղասպանությունների ու բռնությունների դատապարտմանը, որպեսզի աշխարհում երբեք չփտանգվի ժողովուրդների ազատ և խաղաղ ապրելու աստվածաշնորհի իրավունքը:

Ցավալի է, որ մարդկության դեմ իրագործվող այսօրինակ հանցագործությունները տակավին տեղ ունեն մեր կյանքում: Այսօր միջազգային տարբեր հարթակներից լսում ենք կոչեր ու հորդորներ խաղաղ և ապահով աշխարհի կառուցման մասին, մինչդեռ աշխարհի տարբեր կողմերում, հատկապես՝ Մերձավոր Արևելքում, դաժանորեն խոշտանգվում ու

սպանվում են հազարավոր մարդիկ, շատերը ստիպված լքում են իրենց բնակավայրերը, անխնա ոչնչացվում են պատմամշակութային հնադարյա արժեքները: Արդյո՞ք հնարավոր է խաղաղության կառուցումը առանց արդարության, առանց նախկինում կատարված հանցագործությունների դատապարտման ու հատուցման: Փաստերով վկայված իրողություն է, որ չդատապարտված հանցագործությունը ծնում է նոր՝ ավելի մեծ հանցագործություն: Երկրորդ աշխարհամարտի ընթացքին որքան զոհեր խլեց ֆաշիզմը, որի առաջնորդները քաջալերված էին Հայոց ցեղասպանության հանդեպ համընդհանուր մոռացությամբ: Որքան անմեղ մարդիկ են մեր օրերում տառապում ահաբեկչությունների պատճառով, որոնց կազմակերպիչները վստահ են իրենց անպատժելիության վրա:

Մեր ժողովուրդը, որ վշտակից է մերօրյա պատերազմներից ու բռնություններից տուժած ժողովուրդներին, աննվազ նախանձախնդրությամբ պայքարելու է արդարության հաստատման համար, քանզի արդարության եւ համընդհանուր դատապարտման ճանապարհն է միայն, որ աշխարհը գերծ պիտի պահի նոր ցեղասպանություններից ու ոճրագործություններից:

«Հայոց ցեղասպանություն 100. ճանաչումից-հատուցում» միջազգային գիտաժողովը կարևոր քայլ է՝ քննարկումների միջոցով բարձրաձայնելու եւ առավել հանրայնացնելու մարդկության դեմ իրագործված հանցագործությունների հիմնախնդիրները: Վերստին Մեր գնահատանքն ու բարենաղթանքներն ենք յղում գիտաժողովի կազմակերպիչներին եւ բոլոր մասնակիցներիդ՝ կարևորելով ձեր առաքելությունն ի նպաստ խաղաղ ու բարօր աշխարհի կառուցման:

Առ Աստված աղոթքով հաջողություններ ենք մաղթում գիտաժողովի աշխատանքներին եւ հայցում, որ Տերն ամենակալ խաղաղություն եւ բարօրություն պարգևի բոլոր ազգերին ու ժողովուրդներին:



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ
ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՌԻԹՈՎ ԷԿՈՒՄԵՆԻԿ
ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
(28 հոկտեմբերի, 2015 թ., Անգլիա)**

Ձերդ Գերազանցություն ՀՀ նախագահ,
Ձերդ Արքայական Մեծություն,
Սիրելի՛ բարեպաշտ եղբայրներ եւ քույրեր.

Փառք եւ գոհություն ենք մատուցում առ Բարձրյալն Աստված, որ շնորհն ունենք հոգևոր ավանդույթներով հարուստ Վեստմինստերյան արքայությունում մասնակցություն բերելու Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակներին նվիրված էկումենիկ այս արարողությանը՝ Հայաստանի Հանրապետության մեծարգո նախագահ Տիար Սերժ Սարգսյանի, Հայ Եկեղեցու հոգևոր դասի ներկայացուցիչների եւ հավատավոր զավակների հետ:

Շնորհակալությամբ ողջունում ենք ներկայությունը Ուելսի արքայազն Նորին Մեծություն Չարլզի, ում սերն ու համակրանքը մեր ժողովրդի եւ մեր երկրի հանդեպ զգացել ենք տարբեր առիթներով, ինչպես վերջերս՝ Հայաստան նրա այցելության ընթացքում:

Եղբայրական Մեր սերն ենք փոխանցում Քենթերբերիի արքեպիսկոպոս Նորին Սրբազնություն Ջասթին Ուելբիին, ում հետ կոչված ենք՝ Տիրոջ Ավետարանի լույսը տարածելու եւ քրիստոսավանդ պատգամները իրագործելու մեր ժողովուրդների կյանքում:

Մխիթարություն ենք ապրում, որ միջեկեղեցական համատեղ այս աղոթքով Անգլիկան Եկեղեցին եւ Միացյալ Թագավորության ժողովուրդն իրենց եղբայրական համերաշխությունն են հայտնում մեր ժողովրդին՝ արտահայտելով իրենց հարգանքը Հայոց ցեղասպանության զոհերի եւ սրբադասված նահատակների նկատմամբ:

Սիրելի՛ հավատակից եղբայրներ եւ քույրեր, մեր ժողովրդի սրտում դեռ չի սպիացել վերքը քսաներորդ դարասկզբին Օսմանյան կայսրության իրականացրած ոճրի, որին իրենց ազգային պատկանելության եւ քրիստոնեական հավատքի համար զոհ գնացին մեկ եւ կես միլիոն հայորդիներ:

Մենք կորցրինք պատմական, հինավուրց մեր հայրենիքի մեծագույն մասը, հազարավոր հայեր տարագիր սփռվեցին ողջ աշխարհով: Մեր ժողովրդի նահատակ զավակները մարտիրոսության պսակն ընդունեցին՝ հավատարիմ առաքելական պատգամին. «Եթէ արդարութեան համար չարչարուէք էլ, երանի է ձեզ: Բայց... մի վախեցէք եւ մի խռովուէք, այլ Տիրոջը՝ նոյն Ինքը Քրիստոսին սո՛րբ պահեցէք ձեր սրտերում» (Ա. Պետ. Գ. 14):

Այսօր, երբ ոգեկոչում ենք 100-ամյա տարեկիցը Հայոց ցեղասպանության, վերստին մեր երախտագիտությունն ենք հայտնում Ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած, ինչպես եւ՝ Եղեռնից մազապուրծ հայորդիներին ապաստան տված բոլոր պետություններին, Քույր եկեղեցիներին՝ դատապարտման իրենց խոսքը աշխարհում բարձրաձայն հնչեցնելու համար: Այս շարքում խորը զգացվածությամբ ենք հիշում, որ Բրիտանական կառավարությունը Առաջին աշխարհամարտի տարիներին դաշնակից պետությունների հետ հայ ժողովրդի հանդեպ իրականացված եղեռնագործությունը որակեց հանցանք մարդկության դեմ: Համաշխարհային քաղաքակրթության մեջ Մեծ Բրիտանիայի ունեցած ներդրումը եւ մարդասիրական արժեքներին նվիրվածությունը վստահություն են ներշնչում, որ Միացյալ Թագավորությունը պիտի շարունակի իր եղբայրական գորակցությունն ու նպաստը բերել մեր ժողովրդի հանդեպ պատմական արդարության վերականգնման գործում:

Սիրելի բարեպաշտ եղբայրներ եւ քույրեր, Հայոց ցեղասպանության ճանաչումը ոչ միայն պատմական մի իրողության, մեկ ժողովրդի հանդեպ կատարված եղեռնագործության դատապարտումն է, այլեւ, առավելաբար, մերժումն ու բացառումն է մարդկության դեմ գործված եւ գործվող բոլոր տեսակի բռնությունների, ոճիրների, որոնց այսօր եւս զոհ են դառնում հազարավոր անմեղ մարդիկ, հատկապես՝ Մերձավոր Արեւելքի երկրներում: Ցեղասպանության ժխտումը կամ աջակցումը ժխտմանը, եղեռնագործ երկրների նկատմամբ զգուշավորության ու սիրաշահման քաղաքականությունը նոր խթան են ցեղասպանության կրկնման համար: Առաքելավանդ պատվիրանն ասում է. «Լուսոյ պտուղներն են բարութիւնը, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը: Ստուգեցէ՛ք, թէ որն է հաճելի Տիրոջը. եւ խաւարի անպտուղ գործերին մասնակից մի՛ եղէք, այլ մանաւանդ մերկացրէ՛ք դրանք» (Եփ. Ե. 9-11):

Մեզ համար հոգեւոր խորը գոհունակություն է, որ Վեստմինստերյան արքայությունում համատեղ աղոթքով ոգեկոչեցինք հիշատակը Հայոց ցեղասպանության զոհերի եւ հայցեցինք բարեխոսությունը սրբադասված



Եթե արդարության համար չարչարվեք էլ, երանի է ձեզ:
Բայց... մի՛ վախեցեք և մի՛ խռովեք, այլ Տիրոջը՝ նույն Ինքը Քրիստոսին սուրբ պահեցեք ձեր սրտերում (Ա. Պետ. Գ. 14)



Հայոց ցնդասպանության 100-րդ տարելիցի ոգնկոչման առիթով Էկումենիկ արարողություն Անգլիայում

նահատակների՝ հանուն մարդկության խաղաղ ու ապահով կյանքի: Հիշատակի արարողության կազմակերպման աշխատանքներում ներդրած ջանքերի համար Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Վեստմինստերյան արքայության վանահայր հոգեշնորհ դոկտոր Զոն Հոլին, Լոնդոնի եպիսկոպոս լորդ Ռիչարդ Չարթրեսին, Մեծ Բրիտանիայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանին:

Մեր գնահատանքն ենք հայտնում Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Տիար Արմեն Սարգսյանին արարողության նախաձեռնության և նշանակալի ներդրման համար:

Այս նվիրական պահին աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված գորացնի մեր եկեղեցիները՝ Քրիստոսի սիրով մեզ վստահված հոտին ծառայելու, հոգևոր միությամբ միմյանց գորավիզ լինելու և միասնաբար գործելու՝ հանուն բոնություններից ազատ, արդար ու համերաշխ աշխարհի կառուցման:

Մեր աղոթքն է նաև, որ Տերը օրհնի և պահպանի Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունը, նրա գահակալին՝ Նորին Արքայական Մեծություն Եղիսաբեթ Բ. թագուհուն, իշխանություններին, Անգլիկան Եկեղեցուն ու բարեպաշտ ժողովրդին, Իր երկնառաք խաղաղությունը շնորհի համայն մարդկությանը:

Թող Տիրոջ օրհնության ներքո առավել գորանան, արգասավորվեն բարի հարաբերություններն ու համագործակցությունը մեր երկրների և ժողովուրդների:

Եւ թող մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի սերն ու շնորհները լինեն մեզ հետ և ամենքի՝ այսօր և միշտ. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ԴԻԼԻՋԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՂՕՐՀՆԵՔԻ
ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ
(30 հոկտեմբերի, 2015 թ.)

Հայրապետական սիրով ողջունում եւ Մեր օրհնությունն ենք բերում բարեպաշտ Մեր գավակներին, հողօրհների այս արարողության բոլոր մասնակիցներին:

Հոգու բերկրանքով այսօր կատարեցինք հողօրհների արարողությունը Դիլիջանում կառուցվելիք եկեղեցու, որի կառուցումն իրականացվելու է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր գավակ Տիար Ռուբեն Վարդանյանի սրտաքույլ բարերարությամբ:

Դարեր շարունակ Հայաստանի բոլոր բնակավայրերում եկեղեցական կառույցներ, աղոթավայրեր են հիմնվել մեր բարեպաշտ հայրերի ջանքերով՝ հավատացյալ հայորդիներին հոգատարություն եւ հոգևոր խնամք ցուցաբերելու, Աստծո հետ հաղորդակցությունը մշտաբան ու կենդանի պահելու համար:

Խորհրդային եկեղեցահալած քաղաքականության տարիներին բազմաթիվ եկեղեցիներ եւ եկեղեցապատկան կառույցներ քայքայվեցին ու ավերվեցին, Հայաստանի շատ բնակավայրեր զրկվեցին աղոթավայրերից եւ սրբավայրերից, ինչպես՝ Դիլիջան քաղաքը: Այսօր մեր հայրենիքի տարբեր շրջաններում հայ եկեղեցական ճարտարապետական ավանդույթների պահպանությամբ նոր եկեղեցիներ են կառուցվում, նոր աղոթավայրեր են հառնում, որոնցից պիտի լինի նաեւ Դիլիջան քաղաքի եկեղեցին: Հայաստանի վերջին տասնամյակների պատմության մեջ Դիլիջանը ճանաչվել է որպես հանգստի ու զրոսաշրջության նշանակալի կենտրոն: Ուրախ ենք, որ այս տարիներին Դիլիջանում շարունակվել են արձանագրվել նոր հաջողություններ՝ կրթական, զրոսաշրջային եւ տարաբնույթ այլ կառույցների հիմնումով: Հավատում ենք, որ եկեղեցու կառուցումը պիտի ամբողջացնի զարգացող Դիլիջանի ընդհանուր պատկերը եւ աստվածային երկնառաք նոր օրհնություն բերի այստեղ բնակվող Մեր գավակների հոգևոր-եկեղեցական կյանքում:

Եկեղեցին սուկ ճարտարապետական կառույց չէ, այլ սրբազան ու նվիրագործված այն վայրն է, որտեղ հաղորդակցվում են մարդը եւ Աստված, բաշխվում են երկնային շնորհները, գորանում են հավատացելոց հոգիները, ամրապնդվում է վճռականությունը՝ աստվածաշնորհի կյանքը զարդարելու բարի եւ ազգանպաստ գործերով: Եկեղեցին հուշարարն է նաեւ մեր առաքելության՝ ապրելու Բարձրյալի կամքի ու պատվիրանների համաձայն, հեռու մնալու մեղքից եւ չարիքից, ազգային-եկեղեցական մեր անդաստանում առատացնելու հայրենաշեն ու ազգաշեն աստվածահաճո ձեռնարկումները:

Աստծո եւ Եկեղեցու հանդեպ հավատքի ամրությունը գրավականն է եղել ու շարունակելու է լինել մեր ժողովրդի գոյատևման եւ առաջընթացի, նոր ձեռքբերումների ամրագրման, հայոց լուսավոր, նոր գալիքի կերտման: Եւ Դիլիջանում կառուցվելիք եկեղեցին՝ հոգևորականների սպասավորությամբ, իր կարելու առաքելության արդյունավորմամբ, նշանակալի ներդրում է բերելու մեր ժողովրդի լույս հավատքի գորացմանը, հայորդյաց հոգևոր գիտելիքների ամրապնդմանը, նոր սերնդի քրիստոնեական դաստիարակության իրականացմանը:

Հայրապետական Մեր օրհնությունն ու բարձր գնահատանք ենք բերում կառուցվող եկեղեցու բարերարին՝ Տիար Ռուբեն Վարդանյանին, որ ազգասեր ու եկեղեցանվեր ոգով մշտապես բարի ձեռնարկումներով աջակից է մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելության արգասավորմանը: Արժանավոր հայորդու անվան հետ են կապված ազգանվեր ու եկեղեցաշեն մի շարք ձեռնարկումներ, ինչպես՝ Դիլիջանի միջազգային դպրոցի հիմնումը, Վրաստանի Ս. Գևորգ եկեղեցու նորոգումը, Տաթևի բարեկարգումը, Ցեղասպանության 100-ամյակին մեկնարկած «100 կյանք ծրագիրը»՝ կոչված երախտագիտություն արտահայտելու այն անհատներին ու կազմակերպություններին, որոնց հերոսական ջանքերի շնորհիվ Հայոց ցեղասպանության ժամանակ փրկվեցին բազմաթիվ հայեր, ինչպես եւ այլ ծրագրեր, որոնք կոչված են գորացնելու մեր ժողովրդի հոգևոր ու ազգային կյանքը:

Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Տավուշի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանին եւ տիրալնամ թեմի հոգևոր դասին՝ հավատավոր Մեր ժողովրդին իրենց նվիրյալ ծառայությունը մատուցելու, հավատքի լույսը, ազգանվիրումն ու հայրենասիրությունը բարեպաշտ հայորդյաց հոգիներում վառ պահելու համար:



Ամենայն հոգիք, օրհնեցէք զՏէր (Սաղմ. ճԾ. 6)



Դիլիջան քաղաքում կառուցվող նկնդնցու մանրակերտը



Եկեղեցին սրբազան ու նվիրագործված այն վայրն է,
որտեղ հաղորդակցվում են մարդը և Աստված



Օրհնելիք զՏէր խոստովանութեամբ,
սաղմոս ասացել նմա օրհնութեամբ (Մատթ. ՃԽԶ. 7)

Մեր գնահատանքը նաև մարգային իշխանություններին, մարգպետին, Դիլիջանի քաղաքապետին՝ մեր Սուրբ Եկեղեցու առաքելությանն ըստ ամենայնի աջակցելու և գորակցելու համար:

Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքն ենք բերում ձեզ, սիրելի հավատավոր գավակներ Մեր, և հայցում Բարձրյալի պահպանությունն ու հովանին ձեր կյանքին: Մաղթում ենք, որ Տերը աջակից լինի բոլորին, ովքեր նախանձախնդիր իրենց ջանքերն են ներդնելու եկեղեցու շինության աստվածահաճո ձեռնարկին՝ բարեհաջող իրականացնելու նվիրական աղոթավայրի կառուցման սրբազան գործը:

Ի խորոց սրտի աղոթում ենք առ Աստված, որ խաղաղության ու ապահովության մեջ պահպանի հայրենի մեր երկիրը ամենախնամ Իր Սուրբ Աջով, հաջողություններով պսակի եկեղեցաշեն ու ազգանպաստ կարևոր իրագործումները, երկնառաք բյուր պարգևներ շնորհի հավատավոր ազգիս հայոց ի հայրենիս և ի Սփյուռս աշխարհի:

«Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱսրուծոյ ի Հօրէ, և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդոյն Հօր, ճշմարտութեամբ և սիրով եղիցի ընդ ձեզ» (Բ. Յովհ. Ա. 3). ամէն:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ԹԲԻԼԻՍԻՒ ՍՈՒՐԲ ԳԵՒՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ
ՎԵՐԱԾԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ
 (31 հոկտեմբերի, 2015 թ., Թբիլիսի)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

*«Գոհանամք զՔէն Հայր Ամենակալ, որ պատրաստեցէր
 մեզ նաւահանգիստ սուրբ զեկեղեցի, տաճար սրբութեան,
 ուր փառաբանի Սուրբ Երրորդութիւնդ, ալէլուիա»*
 (Պատարագամատուց):

ՀՀ մեծարգո՛ւ նախագահ, Տիար Սերժ Սարգսյան,
 Հարգարժան պետական այրեր Վրաստանի եւ Հայաստանի Հանրապետության,

Սիրելի՛ հոգեւոր եղբայրներ եւ բարեպաշտ հավատավոր ժողովուրդ,

Մեր սուրբ հայրերի փառաբանական աղոթքով գոհություն ենք մատուցում Տիրոջը, որ շնորհը պարգեւեց Մեզ կատարելու Թբիլիսիի Ս. Գեորգ եկեղեցու վերածման արարողությունը: Նվիրական արարողության այս պահին վերապրեցինք Ս. Գեորգ եկեղեցու ութդարյա առաքելության հիշատակները, որ խոսուն վկայություններն են Վրաստանի օրինյալ հողում հայության հոգեւոր ու ազգային կյանքի զարթոնքի՝ միաժամանակ խորհրդանշելով հայ եւ վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Ս. Գեորգ գորավարը Քրիստոսի մեծագույն վկաներից է, ում անունը անխաղճիորեն կապված է նաեւ հայ եւ վրացի եղբայր ժողովուրդների քրիստոնեական անցյալի հետ: Ս. Գեորգը արդարության մարտիկ է՝ Քրիստոսի զինվոր, ով իր անձը ամբողջապես նվիրաբերեց քրիստոնեական հավատքի գորացմանը, Տիրոջ Ավետարանի լույս պատգամների տարածմանը: Շարականագիրը Ս. Գեորգ գորավարին կոչում է «քաջամարտիկ գորավար» եւ «մարդկային ազգի պարծանք»: Եկեղեցական պատկերագրության մեջ Ս. Գեորգը ներկայացված է որպես հեծյալ՝ վիշապին խորտակելիս, ինչը հոգեւոր խորհրդարանությամբ բարոյ հաղթանակն է ընդդէմ

չարի, լույսի հաղթանակը՝ ընդդեմ խավարի, ճշմարտության հաղթանակը՝ ընդդեմ կեղծիքի: Եկեղեցու պատմությունն ուսուցանում է, որ մեծահոյակ գորավարի նման անընկճելի նվիրյալների շնորհիվ է քրիստոնեությունը հաստատվել աշխարհում եւ գրավել մարդկանց սրտերն ու հոգիները: Ս. Գեորգ գորավարի հանդեպ ակնածանքով ու հարգանքով է, որ հայ եւ վրաց ժողովուրդների գավակները Սուրբ Գեորգին նվիրված հոգեւոր ու մշակութային նվիրական արժեքներ են ստեղծել եւ իրենց որդիներին անվանակոչել եւ անվանակոչում են Գեորգ անունով: Զորավար Սուրբի հանդեպ սերն է նաեւ վրաց ժողովրդին մղել՝ նրան հռչակելու Վրաստանի հովանավոր Սուրբ:

Ս. Գեորգ եկեղեցու վերածման հոգենորոգ այս առիթով մենք հիշում ենք մեր մեծանուն նախնիներին՝ հոգեւոր կյանքի, արվեստի, մշակույթի, գիր-գրականության հայազգի մշակներին՝ Ներսես Աշտարակեցի Հայրապետին, Նաղաշ Հովնաթանին, Սայաթ-Նովային, Մակար Եկմայանին, Հովհաննես Թումանյանին, Րաֆֆուն, Մուրացանին, Գաբրիել Սունդուկյանին, նշանավոր բազում հայ նվիրյալների, ովքեր աղոթել ու գործել են, ապրել ու ստեղծագործել են Վրաստանի հյուրընկալ հողում:

Վրացահայությունը Վրաստանը չի տարբերել պատմական իր հայրենիքից եւ գործել է ի սեր Վրաստանի բարօրության ու առաջընթացի, վրաց եղբայրական ժողովրդի հետ կրել է գրկանքները եւ տոնել հաջողությունները, իսկ անհրաժեշտության դեպքում լծվել վրաց սահմանների պաշտպանությանը թշնամիներից: Այսպես է, որ հայության համար Վրաստանը հարազատ աշխարհ է, սիրելի երկիր՝ քրիստոնեական կյանքի օրինակելի վկայություններով, ավանդական իր հյուրընկալությամբ, կյանքի ու կենցաղի գունագեղությամբ եւ ազգային յուրօրինակ արվեստով ու մշակույթով: Ուրախ ենք, որ այսօր եւս կենսունակ է վրացահայ համայնքը եւ նվիրված հոգեւոր կյանքի շինությանը՝ շարունակում է ջանքեր բերել Վրաստանի պայծառ ապագայի կերտմանը:

Մենք հավատում ենք, որ վերածված Ս. Գեորգ եկեղեցին հոգեւոր կյանքի նոր շունչ պիտի հաղորդի մեր ժողովրդի գավակներին եւ պիտի առավել ամրացնի հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամությունը: Հայերը եւ վրացիները՝ որպես քրիստոնյա հինավուրց ազգեր, անսասան հավատք ունեն հանդեպ Քրիստոսի Եկեղեցու սրբազան ու փրկարար առաքելությունը: Եկեղեցին երկնային ապաստարանն է երկրի վրա, ուր բնակվում են սերը, հաշտությունն ու խաղաղությունը, եւ ուր հանգչում են առօրյա հոգսերից բեկված հոգիները: Եկեղեցում է արձագանքում մեր Տիրոջ քաղցրա-

բարբառ կոչը. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք եւ ես հանգուցից գձեզ» (Մատթ. ԺԱ. 28): Եկեղեցում վերանում են թէ՛ ազգային, թէ՛ ռասայական, թէ՛ սոցիալական եւ թէ՛ մշակութային խտրականությունները. «Չիք խտիր ո՛չ հրեայի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ազատի եւ ո՛չ ծառայի, ո՛չ արուի եւ ո՛չ էգի, զի ամենեքեանդ դուք մի էք ի Քրիստոս Յիսուս», - ասում է առաքյալը (Գաղ. Գ. 28): Եկեղեցում մենք դառնում ենք մեկ ի Հիսուս Քրիստոս, կոչված՝ լինելու հոգեւոր քույրեր ու եղբայրներ, Քրիստոսի սիրով ապրելու, Քրիստոսի լույսը սփռելու ամբողջ աշխարհում:

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, Ս. Գևորգ եկեղեցու վերածման արարողությունը Մեր հայացքներն ուղղում է նաեւ Վրաց օրինյալ երկրում կառուցված մեր սրբավայրերին՝ վանքերին ու եկեղեցիներին, որոնք աստվածամերժության տարիներից մնացել են աղոթագուրկ ու անխնամ եւ երբեմն նաեւ այսօր ցավալիորեն փլուզվում են ու ավերակ դառնում, քանզի հնարավորություն չի ընձեռվում հոգածություն ցուցաբերելու: Այսօրվա արարողությունը Մեզ վստահություն է ներշնչում, որ վրաց իշխանությունների աջակցությամբ եւ Վիրահայոց թեմի եւ բարեպաշտ հավատացյալների ջանքերով վերստին պիտի բարեկարգվեն ու պայծառանան նվիրական մեր աղոթավայրերը:

Այս պատեհ առիթով Մեր շնորհակալությունն ու օրհնությունն ենք բերում վրաց իշխանություններին Ս. Գևորգ եկեղեցու նորոգության գործում դրսևորած սատարումի, ինչպես եւ՝ Վիրահայոց թեմին ցուցաբերած աջակցության համար՝ վերացնելու խորհրդային շրջանում Եկեղեցու կրած ավերների հետեւանքները:

Վրաց Ուղղափառ Սուրբ Եկեղեցին ներկայացնող Մեր հոգեւոր եղբայրների միջոցով ի Քրիստոս եղբայրական Մեր ողջունն ենք հղում Համայն Վրաստանի Պատրիարք Իլյա Երկրորդին՝ հայցելով Տիրոջ զորակցությունն ու օգնականությունը՝ ի պայծառություն Վրաց Ուղղափառ Եկեղեցու եւ ի բարօրություն աստվածասեր վրաց ժողովրդի:

Մեր ուրախությունն ենք հայտնում սրբազան այս արարողությանը Հայաստանի Հանրապետության նախագահ Տիգրան Սարգսյանի ներկայության առիթով, ով աջակցություն է բերում մեր Սուրբ Եկեղեցու առաքելությանը ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհասփյուռ հայության տարբեր համայնքներում: Մաղթում ենք Բարձրյալն Աստծո զորակցությունը մեծարգո Նախագահին՝ իր բարձր առաքելության իրականացման մեջ:

Բարձր գնահատանքով ու օրհնությամբ ենք հիշատակում մեր Եկեղեցու նվիրյալ զավակ տիար Ռուբեն Վարդանյանի անունը, ով «Հայաստա-

նի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի միջոցով իրականացրեց Ս. Գևորգ եկեղեցու նորոգության աստվածահաճո ձեռնարկումը:

Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում այս նախաձեռնությանը միացած բարերար անձանց՝ Ալբերտ Ավդոյանին, Բիձինա Իվանաշվիլին, Դանիլ Խաչատուրովին, Սերգեյ Սարկիսովին, Կոստանտին Մարգարյանին, Անդրեյ Մկրտչյանին, Բորիս Նահապետյանին, ովքեր իրենց ազնիվ նվիրաբերությամբ աջակցեցին հինավուրց այս աղոթավայրի նորոգությանը:

Մեր աղոթքն է, որ Տերը եկեղեցաշեն բարերարներին և նրանց ընտանյաց անդամներին պարգևի քաջառողջ ու երկար կյանք և մշտամնա հաջողություններ աստվածահաճո իրենց գործերում:

Հոգեպարար այս օրը Մեր բարձր գնահատանքն ու Հայրապետական օրհնությունն ենք բերում Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանին և հոգևոր բարեջան սպասավորներին, ովքեր ջանադիր ծառայասիրությամբ ու նախանձալնդիր ոգով սպասավորություն են մատուցում վիրահայ Մեր սիրեցյալ գավակներին:

Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքն ենք բերում նաև թեմական վարչության անդամներին, կրթական ու ազգային հաստատությունների նվիրյալներին և ձեզ բոլորիդ՝ հավատավոր ու հարազատ գավակներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Նաև Մեր օրհնությունն ու գնահատանքը՝ Ս. Գևորգ եկեղեցու վերանորոգմանը ջանքեր ներդրած հայ և վրացի ճարտարապետներին, վարպետներին, շինարարներին և աշխատավորներին:

Ի խորոց սրտի աղոթում ենք, որ Երկնավոր Տերը արդյունաշատ դարձնի Վիրահայոց թեմի առաքելությունը՝ ի նպաստ Վրաստանի հայության հոգևոր կյանքի զորացման: Թող Բարձրյալն Աստված Սուրբ Գևորգ զորավարի բարեխոսությամբ Իր օրհնության ներքո շեն ու պայծառ պահի Վրաց երկիրը, բարօրության մեջ՝ վրաց եղբայրական ժողովրդին, և հանապազ օրհնի մեր երկրների ու ժողովուրդների եղբայրությունն ու բարեկամությունը:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերը և ողորմությունը թող լինեն մեզ հետ և ամենքի այսօր և միշտ. ամեն:



ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԳԻՍԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(04 հոկտեմբերի, 2015 թ.)

Յանուն Հոր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի հավատացյալներ,

Այս ժամանակահատվածը Խաչի տոների շրջանն է: Մի քանի շաբաթ առաջ մենք տոնեցինք Վերացման Խաչի տոնը, ապա՝ Վարագա Սուրբ Խաչի տոնը, իսկ մի քանի շաբաթ անց պիտի տոնենք Գյուտ Խաչի տոնը: Երբ մենք հիշատակում ենք խաչը, նկատի չունենք միայն նյութական խաչը, այսինքն փայտից կամ մետաղից պատրաստված խաչը, այլ՝ Խաչյալը, որ այն տարավ մինչեւ Գողգոթայի բարձունքը ու գամվեց այդ խաչի վրա: Ուրեմն, երբ մենք խոսում ենք խաչի գործության մասին, խոսում ենք Խաչյալի գործության մասին, որ Գողգոթայի բարձունքում Իր խաչով մարդկանց ցույց տվեց երկրից երկինք բարձրանալու ճանապարհը: Եւ տակավին խաչով չավարտվեց մեր հավատքի ուժը կամ Քրիստոսի առաքելությունը, որովհետեւ Գողգոթային ու խաչին հաջորդում է դատարկ գերեզմանը եւ հարությունը, ինչպես առաքյալն է ասում. «Եթե Քրիստոս հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, իզուր է եւ ձեր հավատը» (Ա. Կորնթ. ԺԵ. 14): Ուրեմն՝ խաչը գերագույն զոհողության, գերագույն զոհաբերության եւ համբերության նշանն էր, երբ Քրիստոս այդ խաչը կրելով տարավ մինչեւ Գողգոթա եւ այնտեղ Իր արյամբ ու խաչելությամբ Իր հետ վերցրեց նաեւ մարդկային մեղքերը մարդկանց փրկության ճամփան ցույց տալու համար:

Ինչպես ասացինք, խաչելությանն ու Գողգոթային հաջորդում է դատարկ գերեզմանը, որը դարձյալ կյանքն է ու հարությունը: Ամբողջ տարվա ընթացքում մենք տոնում ենք խաչի չորս տոներ՝ Խաչի Երևում, Խաչ-



Խաչը գերագույն զոհողության,
գերագույն զոհաբերության ու համբերության նշանն է



Հոգի սուրբ նկնացէ ի քեզ, և գորութիւն Բարձրելոյն
հովանի լիցի ի վերայ քո (Ղուկ. Ա. 35)



Ձայն Տեառն ի վերայ ջուրց, և Աստուած փառաց որոտաց,
և Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց (Մատթ. ԻԸ. 3)

վերաց, Վարագա Սուրբ Խաչ եւ Գյուտ Խաչի, որոնց ժամանակ հիշատակում ենք Հարուցյալին՝ Քրիստոսին, որ Իր խաչով մարդկանց պարգևեց փրկություն եւ դեպի երկինք բարձրանալու ուղին: Այս է խաչի հիմնական խորհուրդը եւ այս ձևով է մեր ժողովուրդը իր ողջ կյանքի ընթացքում ըմբռնել ու կրել որեւէ տանջանք եւ դժվարություն: Մեր ժողովրդի մեջ պակաս չեն եղել դժվարությունները, հալածանքները, բայց նա իր հայացքը միշտ հառել է Գողգոթայի խաչին՝ հավատալով, որ այդ խաչի վրա գամվածը այլեւս չկա, այլ հարություն է առել: Մենք եւս մեր հավատքով, մեր հավատքի ուժով նայելով խաչին՝ կարողացել ենք հաղթահարել դժվարությունները, պահել մեր հավատքը, պահել մեր ոգին ոչ միայն հայրենիքում, այլեւ ամբողջ Սփյուռքում, ուր կա Հայ Եկեղեցի, ուր կա հայ ժողովուրդ, հայ համայնք՝ միշտ իր աչքերը ուղղած խաչին եւ Խաչյալին՝ հավատալով խաչից եկող հարությանը: Հիշատակելով խաչը, նայելով խաչին՝ հավատում ենք, որ խաչելությունից ու Գողգոթայից հետո գալիս է դատարկ գերեզմանը՝ հարությունը եւ կյանքը:

Ահավասիկ, սա է ողջ իմաստը խաչի, որ մենք տարին չորս անգամ հիշատակում եւ տոնում ենք, իսկ խաչի միջոցով եւ Խաչյալով միշտ մեր հավատքը նորոգվում է, մեր հայացքը միշտ ուղղվում է դեպի հարության հույսը, հարության հավատքը: Ցանկանում ենք մեր ժողովրդին, որ կրեց իր խաչը, շարունակել բարձր պահել խաչը Խաչյալի իմաստով, եւ հարության հավատքով՝ շարունակելու համար իր կյանքը թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում՝ միշտ նայելով դեպի դատարկ գերեզմանը, դեպի հարություն եւ հաղթություն, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:



ՀԱՅԿԱՐԱՄ ՍՐԿ. ՀԱԿՈՐՅԱՆ

ասարվածարանության մագիստրոս, ԳՀՃ

ԷԹՈՍԸ ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ ԵՒ ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔՈՒՄ

Էթոսը հունարեն բառ է (ἦθος), որը նշանակում է բնավորություն, բարք, հոգու պահեստանոց, իսկ երբեմն նաև «այն ներկայացնում է խոնողի վստահելիությունը»¹: Անտիկ փիլիսոփայության մեջ այն նշանակում էր սովորություններ, խառնվածք եւ ավանդության ազդեցությունը մարդու վրա. անտիկ հոնետորությունը լայնորեն կիրառում էր այն եւ դաստիարակում բարձր բարոյականություն՝ դարձնելով հոնետորներին ավելի արժանապատիվ, ազնիվ, արդար եւ կարգապահ:

Էթոսը իրենից ներկայացնում է հոնետորի ընդհանուր որակները, օրինակ՝ հանգստությունը, անկեղծությունը եւ ամբողջական բնականությունը, քանի որ հոնետորի ունեցած որակների հիման վրա էլ լսարանում ձեւավորվում է վստահությունը. «Էթոսով է պայմանավորված, թե մենք որքանով ենք արժանի վստահության»²:

Հին հունական տերմինաբանության մեջ *ֆոօս* նշանակում էր առաջին անփոփոխ բնություն, իսկ «էթոս»՝ մարդկային երկրորդ բնություն, որն ունի կատարելագործվելու տարբեր աստիճաններ եւ համարվում է բարոյական ընտրության առարկա³: Ըստ Արիստոտելի՝ էթոսը կապված է մարդու էթիկական տիպի հետ կամ բնավորության այն մասի հետ, որը ձեւավորվում է սովորույթների եւ ավանդությունների միջոցով⁴:

¹ P. Turpin, The moral rhetoric of political economy. Justice and modern economic thought, London, 2011, p. 14.

² С. Кови, Д. Колосимо, Карьерное преимущество. Практические рекомендации, Москва, 2012, с. 70.

³ О. Л. Гнатюк, Основы теории коммуникации, Москва, 2010, с. 108.

⁴ Аристотель, Поэтика, Петербург, 2000, с. 99.

Էթոսը արտացոլում է բնավորության յուրօրինակ եւ հիմնական այն գծերը, որոնք իրենց մեջ ներշնչման ուժ են պարունակում⁵: Եթե որեւէ բնագավառում կա մեկը, որին կարելի է համարել էթոսի մարմնավորում, ապա նրա շրջապատի մարդիկ սկսում են գործել վստահ եւ նպատակաուղղված:

Այն էթոսը, որը ելույթի ընթացքում ցուցադրվում է հոնտորի կողմից եւ չի համապատասխանում իրականությանը, սովորաբար չի արժանանում հանդիսատեսի վստահությանը⁶: Հայտնի հոգեբան Էրիկ Ֆրոմի խոսքերով՝ «գաղափարները իրենք իրենցով մարդկանց վրա խոր ազդեցություն չեն թողնում, երբ դրանք մատուցվում են որպես չոր մտքեր: Սակայն գաղափարները մարդկանց հոգեբանության վրա խորապես ազդում են այն ժամանակ, երբ նույն գաղափարախոսը ապրում է դրանցով»⁷:

Այդպես էր գործում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.: Նրա գաղափարները կարծես ձուլված լինեին իր անձին: Նրա խոսքի, գործի ու անձի միության վկան Խորհրդային Միության անկման շրջանում նրա ձեռնարկած քայլերն էին: Վերոնշյալ շրջանում, երբ անկում էր ապրում Հայաստանի տնտեսությունը, մեծն Հայրապետն իրեն չէր խնայում օգնության միջոցներ հայթայթելու, հայրենակիցների օրվա հացի խնդիրը հոգալու համար: Վազգեն Ա. ամեն կերպ մխիթարում էր ժողովրդին այդ նեղ օրերին, հուսադրում էր նրանց եւ տալիս խորհուրդներ՝ այդ վիճակից դուրս գալու համար: Իր խոսքերը ժողովրդի աչքում ամեն տեսակ դժվարությունից զուրկ ու նեղությանը անհաղորդ չթվալու նպատակով, Վեհափառը հաճախ պատմում էր իր կյանքի դժվար օրերի մասին: Այդպես 1991 թ. դեկտեմբերի 31-ի գիշերը Վեհափառը, ժողովրդին գոտեպնդելու նպատակով, մի փոքրիկ պատմություն է հիշում իր ծնողների կյանքից. «Մայրս ասում էր. -Մենք 1916-ի ձմռանը հասանք Օդեսա: Խստաշունչ ձմեռ էր: Սիբիրյան ձմեռ էր: Եւ, հիշում եմ, մի փոքրիկ սենյակ ճարեցինք Օդեսայի ծայրամասերում: Մենք մեկ սենյակի մեջ էինք, ոչ էլեկտրական լույս կար, ոչ ջեռուցում»⁸:

Հետո Վեհափառը իր կյանքի այս դրվագի եւ այդ ժամանակվա ծանր պայմանների միջեւ զուգահեռ է անցկացնում՝ ցույց տալով դրանց նմանությունը: Պատմության վերջում նա ասում է, որ իրենք այն ժամանակ ոչ ուրախացել են, ոչ էլ տխրել, այլ փառք են տվել Աստծուն ապահովության, խաղաղության եւ հանապազօրյա հացի համար:

⁵ А. Каптерев, Мастерство презентации, Петербург, 2005, с. 21.

⁶ E. Garver, Aristotle's rhetoric. An art of character, Chicago, 1994, p. 176.

⁷ Հմմտ. P. C. Хеклер, Додзе лидерства. Фундамент успеха в карьере и в жизни, Москва, 2010, էջ 31.

⁸ Պատմությունը ներկայացված է կրճատումներով:

Ահա այս պատմությանը Վեհափառ ժողովրդին ցույց է տալիս, որ ինքը նրանցից մեկն է, ով քաջ ծանոթ է ժողովրդին հուզող խնդիրներին, իր սեփական անձի վրա զգացել է այդ ողջ ծանրությունը, բայց եւ այնպես չի ընկրկել, այլ մխիթարվել է նրանով, ինչ որ ունեցել է եւ ձեռք է բերել ուրիշներին քաջալերելու կարողություն: Հենց այս դեպքին են համապատասխանում Սթիվեն Կովենի այս խոսքերը. «Մենք պետք է մեր ամբողջ ուժերը ներդնենք հասկանալու համար, թե ինչ խնդիրներ են հուզում մեր լսարանին, եւ ապացուցենք, որ մենք հենց այն մարդն ենք, որը կարող է գտնել լուծումներ այդ խնդիրների համար»⁹:

Էթոսը՝ որպես փաստարկման կայուն բարոյական տարր, հաճախ հակադրվում է պաթոսին, որը ժամանակավոր հուզական ապրում է: Այն հոեւտորի բնավորության պատկերումն է խոսքի ոճի եւ նպատակաուղղվածության միջոցով, որոնք հանդիսանում են մարդու գործունեության հիմնական նախանշանները:

Այդ պայմանները վերաբերում են տեղին, ժամանակին եւ խոսքը ներկայացնելու ժամկետին, որոնցով որոշվում է խոսքի բովանդակության մի մասը: Թեմայի եւ առանձին բառերի ընտրությունն էլ կազմում է խոսքի ծրագրի մեկ այլ մասը: Միջավայրին չհամապատասխանող խոսքը, նույնիսկ ուժեղ փաստարկման դեպքում, կարող է չընդունվել լսարանի կողմից: Համապատասխան խոսքի թեմա ընտրելու համար պետք է անպայման հաշվի առնել ժամանակը, պայմանները, տեղը եւ լսարանը, այսինքն՝ ում առջև ենք պատրաստվում ելույթ ունենալ: Էթոսը համապատասխանում է քաղաքացիական պատասխանատվությանը՝ ասված կամ գրված խոսքի համար:

Վազգեն Ա. Կաթողիկոսի քարոզները համապատասխանում են էթոսի վերոնշյալ պայմաններին: Այդպիսի մի օրինակի ենք հանդիպում Արցախյան շարժման ժամանակ Մայր Տաճարի խորանից հնչած Վեհափառի քարոզում, որով ժողովրդին հոգևոր զգոնության կոչ էր արվում. «Մանավանդ այս օրերին, երբ մեր ողջ ժողովուրդը հերոսական մարտ է մղում ընդդեմ մահվան, ընդդեմ անիրավության եւ ընդդեմ մեղապարտ ուժերի, մեր հոգիները, մեր գիտակցությունը վկայում են, թե Արցախի մեր եղբայրների եւ քույրերի մարտը հանուն ազատության եւ արդարության, մահվամբ մահը հաղթելու եւ նոր կյանքի լուսաբացը նվաճելու սխրանք է աստվածատուր»¹⁰:

⁹ С. Кови, Д. Колосимо, ук. соч., с. 70.

¹⁰ Քարոզի նյութը քաղել ենք «Շողակաթ» հեռուստաընկերության արխիվային տեսանյութից, որը նկարահանվել է Արցախյան շարժման ժամանակ:

Այս խոսքում տեսնում ենք, թե ինչպես է Վեհափառն իր քարոզը հմտորեն համապատասխանեցնում երկրում տիրող իրավիճակին (Էթոսի ժամանակային պայման): Վեհափառի քարոզի թեման (թեմայի պայման) Մայր Տաճարում (տեղի պայման) հավաքված հայորդիների (լսարանի պայման) սիրտը հուզող խնդիրն էր, իսկ հայորդիների մղած պայքարը, Վեհափառի դիպուկ բնորոշումով, անվանվում է աստվածատուր սխրանք (առանձին բառերի ընտրության պայման):

Առանց Էթոսի՝ հոռետրությունը ենթարկվում է ինքնառնչացման՝ վերածվելով ոչ թե մտքի ու զգացմունքների իրական արտահայտության, այլ խաբեության: Հոռետրը պետք է ունկնդիրների կողմից ընդունվի իբրև արժանավոր ճարտասան: Իսկ մեր օրերում ընդհանուր հոռետրության մասնագետները նոր են սկսել ուսումնասիրել հոռետրի էթիկական կողմը: Այն գնահատվում է լսարանի կողմից՝ հիմք ընդունելով հոռետրի խոսքի արդյունքները: Այդ գնահատականների իմաստային դիրքորոշումները, այսպես կոչված հոռետրական բարքերը, նշանակում են նաև բարոյական խնդիրներ, որոնք հոռետրը դնում է իր առջև: Արիստոտելը համոզված էր, որ իրականությունն ու արդարությունն ավելի գորեղ են, քան դրանց հակառակ հասկացությունները¹¹: Այդ պատճառով պետք է անխտոր կերպով հետևել դրանց:

Անտիկ հոռետրության սկզբունքների զարգացման արդյունքում Էթոսին հաղորդվեց այնպիսի առաքինություններ, ինչպիսիք էին, օրինակ, արիությունը, իմաստությունը, արդարությունը եւ չափավորությունը: Այդ առաքինություններից յուրաքանչյուրը նկարագրվում էր որպես ելույթ ունեցողի բնավորության գծերի մի խումբ, ինչպես նաև վարքի եւ գործունեության կանոններ, որոնք պետք է անձի բարոյականությունը տանեին դեպի կատարելություն: Այսպիսով, Էթոսը հոռետրական խոսքի համապատասխանությունն է ունկնդիրների բարոյական սպասելիքներին¹²:

«Էթիկա» հասկացությունը առաջացել է «էթոս»-ից: Ժամանակակից դիալոգի փիլիսոփայությունը Էթոսը մեկնաբանում է որպես «բարոյական իմպերատիվ»¹³ ամբողջություն: Այն հանդես է գալիս որպես գործնական բարոյականության փորձ, ուղղություն տվող ամբողջություն, որը անձին շնորհում է բնական իրավունք: Դրանով որոշվում են անձի հասարակական ակտիվության պայմանները:

¹¹ Տե՛ս **М. Л. Гаспаров**, Античная поэтика: риторическая теория и литературная практика, Москва, 1991, էջ 97:

¹² **К. Т. Борисовна**, Педагогическая риторика, Москва, 2003, с. 13.

¹³ Անպայմանական պահանջ:

Էթոսը կարող է օգտագործվել տեղեկություն փոխանցելու համար: Հոնետորները, կամա թե ակամա, խոսքի ընթացքում ցույց են տալիս իրենց բնավորությունը, որը կան հարգանքի է արժանանում լսարանի կողմից, կան էլ առաջացնում է անվստահություն: Խոսքի ընթացքում անպայման բերվում են փաստեր, դատողություններ, որոնք կան համոզում են մարդկանց, կան գնահատվում են կասկածամտորեն: Խոսքը ունկնդիրների մեջ առաջացնում է կան բարենպաստ տրամադրություն, կան էլ ելույթ ունեցողի նպատակների առաջ ստեղծում է պատնեշներ:

Ի տարբերություն քարացած եւ անփոփոխ, դատարկ ձեւերի՝ հոնետորության մեջ կա որոշակի ոճ եւ հստակ գեղագիտական կատեգորիա: Խոսքի ձեւի ազդեցությունը հենց ձեւի մեջ չի բովանդակվում, այլ առաջանում է ունկնդրի մեջ՝ որպես հստակ ազդակի պատասխան: Մետաբոլի եւ էթոսի տեսության մեջ եզրափակվում են գործնականապես ցանկացած ռազմավարական կառուցվածք, ստեղծագործություն եւ համոզիչ խոսքի ընկալում:

Ընդհանուր հոնետորական արվեստում էթոսի կառուցվածքը հանդես է գալիս երեք տարատեսակներով.

ա. Միջուկային էթոս. այն կապված է մետաբոլի կառուցվածքի հետ: Օգտագործվում է միայն մի կերպով՝ անկախ նրանից, թե խոսքը խորհրդագործության, համոզմունքի, որոշ արժանիքների բարձրացման, թե մեկ այլ բանի մասին է:

բ. Ինքնավար էթոս. այն կապված է ընդհանուր գոյության եւ հոգեբանական ու սոցիոլոգիական գործոնների հետ:

գ. Համատեքստային էթոս. այն միաժամանակ կապված է եւ՝ մետաբոլի կառուցվածքի, եւ՝ ընդհանուր գոյության, եւ՝ համատեքստի հետ: Տեքստը հանդես է գալիս տարածության տեսքով, որում անհրաժեշտ է ուսումնասիրել փոխկապակցվածությունը:

Էթոսը ներկայացնում է առաջնորդի այն հատկանիշները, որոնք կարող են ներագդել ուրիշների վրա. «Այն ներկայացնում է ելույթ ունեցողի վարկանիշը»¹⁴: Արիստոտելի կարծիքով, էթոսը այն չէ, ինչը խոսում կամ խոստանում է մարդը, այլ այս աշխարհում մարդու գոյատևելու եղանակն է, շնորհն ու յուրօրինակությունը, որը դրդում է ուրիշներին՝ հետևել անձին եւ ընդունել նրա գաղափարները: Էթոսը ոչ միայն անձի ինտելեկտուալ մասն է կազմում, այլ նաեւ վերաբերում է մարմնի առանձնահատուկ գծերին¹⁵: Հոնետորի համար չափազանց կարևոր է հետևողական լինել ազդեցության

¹⁴ Э. Киссейн, Основы контентной стратегии, Петербург, 2012, с. 44.

¹⁵ Р. С. Хеклер, Быть человеком на работе, Москва, 2008, с. 35.

հարցում: Ազդեցության հաջողությունը կախված է ինչպես այն մարդուց, որն ազդեցություն է կրում, այնպես էլ նրանից, ով ազդեցություն է գործում¹⁶: Հոետորը պետք է կարողանա միանգամից վստահություն ներշնչել, որպեսզի իր եւ լսարանի հետագա շփումը անցնի անկեղծության եւ փոխվստահության մթնոլորտում:

Էթոսը հոետորի համար կարող է ծառայել որպես հիմնալի փաստարկում, «որը կարող է կենտրոնացնել ուշադրությունը իր անձի վրա եւ վստահություն ներշնչել՝ իրագործելու համար առաջարկվող քայլերը»¹⁷: Լսարանին մեր տեսակետները ընդունելի դարձնելու համար պարզապես «անհրաժեշտ է ստեղծել լավ էթոս կամ բարոյական նկարագիր»¹⁸: Լավ բնավորությունը կամ էթոսը երաշխիքն է նրա, որ մարդը ստիպված չի լինի ծախսել իր ողջ ուժերը այս կամ այն լսարանին ինչ-որ բան ապացուցելու համար. «Լավ բնավորությունը համոզման ամենալավ գենքն է»¹⁹: Այս եղանակով հոետորները իրենք իրենց անձով համոզում են ունկնդրին իրենց խոսքի ճշմարտացիությունը²⁰:

Այսպիսով, մենք կարող ենք ասել, որ էթոսը փաստարկման լավագույն ձեւերից մեկն է, քանի որ նման փաստարկը կենդանի կերպով հառնում է մարդկանց աչքերի առջև: Այն խնդիրները տեսական ոլորտից տեղափոխում է գործնական ոլորտ եւ այդ անցման ճանապարհը ցույց տալիս ուրիշներին: Ուսումնասիրելով Վազգեն Ա. Կաթողիկոսի գահակալական շրջանի գործունեությունը, գրավոր շատ քարոզները, նրա խոսքերի ձայնագրություններն ու արխիվային տեսանյութերը՝ դրանք դիտարկեցինք էթոսի տեսանկյունից, եւ եկանք այն եզրակացության, որ Վեհափառի խոսքում հզոր կերպով արտահայտվում է էթոսը: Վազգեն Ա. Կաթողիկոսի քարոզներում ընդգծվում է նրա հեղինակությունը եւ համայն հայ ժողովրդի հոգեւոր հոր կերպարը: Ժողովուրդը վստահում էր նրան, հավատում եւ ազդվում խոսքերից ու հետևում առաջնորդած ճանապարհին:

¹⁶ А. Моносова, «Да» в ответ. Технологии конструктивного влияния, Москва, 2012, с. 247.

¹⁷ E. Gunderson, The Cambridge companion to ancient rhetoric, Cambridge, 2009, p. 10.

¹⁸ R. L. King, The ethos of drama. Rhetorical theory and dramatic worth, Washington, 2010, p. 154.

¹⁹ Р. Шелл, Мусса. Как убедить, что ты прав, Москва, 2013, с. 21.

²⁰ M. J. Hyde, C. O. Schrag, The ethos of rhetoric, South Carolina, 2004, p. 6.

РЕЗЮМЕ

В статье представлен один из трех аспектов аргументации – Этос и его значение в ораторском искусстве. Этос рассматривается как представление качеств, формирующих личность оратора, фактор достоверности и аргументации личностью.

Исследуя речь Католикоса Всех Армян Вазгена Первого с точки зрения риторики, мы приходим к выводу, что в речи Католикоса наглядным образом отражается Этос. Проповеди Святейшего Католикоса соответствуют месту, времени, теме, аудитории и подбору слов обусловленных понятием Этос.

SUMMARY

One of the three aspects of argumentation is described in the present article - the Ethos and its significance in rhetoric art. Ethos is considered as representation of qualities forming the personality of the orator, the thrust factor and argumentation by own personality.

Investigating the case of the Catholicos of All Armenians Vazgen I from rhetorical point of view we come to conclusion that in Catholicos' speech the Ethos is clearly expressed. The preaches of the Blessed Catholicos correspond to the place, time, theme, audience and word-choosing conditioned by conception of Ethos.



ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

բանասիրական գիրք. թեկնածու, ՀՊՏՀ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր լեզվում առկա են լեզվաոճական առանձին միավորներ՝ դարձվածքներ, որոնց ընկալումը այնքան էլ միանշանակ չէ: Ամենից առաջ պետք է նշել, որ արդի լեզվաբանության մեջ «դարձվածք» կամ դարձվածային միավոր (ԴՄ) ասելով հասկացվում են որոշակի առանձնահատկություններով օժտված արտահայտությունները՝ կայուն կապակցություններ, որոնք ունեն այլաբերական իմաստ, ոճական ուրույն արժեք եւ կայունություն (բացարձակ կամ հարաբերական առումով): Դրանք այլաբերական են, որովհետեւ կառուցվում են որեւէ այլաբերական միջոցի (փոխաբերություն, փոխանունություն, համեմատություն, չափազանցում, նվազաստույթ եւ այլն) հիման վրա: Ունեն ոճական արժեք, որովհետեւ պատկերավոր են եւ ներգործում, առաջացնում են հուզափմաստային որոշակի տարերք եւ գնահատողական վերաբերմունք՝ այս կամ այն երևույթի հանդեպ, կայուն են, որովհետեւ հանդես են գալիս որպես բառերի՝ խոսքիմասային առանձին միավորների (գոյական+բայ, ածական+գոյական եւ այլն) կայուն կամ համեմատաբար կայուն զուգորդումներ: Դարձվածքի նման ընկալումը կարելի է կոչել *նեղ*: Ժամանակակից դարձվածաբանությունը հիմնականում զբաղվում է այնպիսի դարձվածքներով, որոնք ենթակա են այս նեղ ընկալմանը, ընդ որում *նեղ* բառն այստեղ ամենեւին էլ չի նշանակում սահմանափակ կամ նեղ ընկալում. այն ավելի շուտ նշանակում է որոշակիացված, հատուկ ընկալում, որի նպատակն է ճշգրտություն մտցնել դարձվածք եզրույթի իմաստային ընդգրկման մեջ:

Ի հակակշիռ նշյալ «նեղ» ընկալման, առկա են նաև դարձվածքի հարաբերականորեն լայն եւ բացառապես լայն ընկալումներ: Հարաբերականորեն լայն ընկալման ներքո սովորաբար հասկացվում են բոլոր տեսակի կայուն կապակցությունները («Ցավը կրել» «Ներսուդուրս անել», «Ձեռք ձեռքի» եւ այլն), ինչպես նաև առածները, թեւավոր խոսքերը, ասացվածքները, խրատախոսքերը եւ այլն:

Բացառապես լայն (թեև «բացառապես» բառն էլ պետք ընկալել հարաբերական իմաստով) ընկալմամբ՝ դարձվածքներ են ոչ միայն նշվածները, այլև խոսքի ավարտուն հատվածները: Հնում դարձվածք եզրույթի ներքո հասկացվել են այս ամենը, ներառյալ նաև իմաստախոսքերը, ասույթները եւ նույնիսկ առակներն ու շրջասույթները, այն ամենը, որ օժտված է իմաստային ու ոճական ուրույն հնչերանգով:

Ուշագրավ է, որ Աստվածաշնչի հայկական կանոնի 1-ին գլխում ասվում է. «Ճանաչել իմաստութիւնն ու խրատը, իմանալ հանճարի խօսքերը, ընկալել խօսքի բարդ դարձուածքները, հասկանալ ճշմարիտ արդարութիւնը եւ ուղղել իրաւունքը ...» (Առակ. Ա. 2-3):

Նեղ կամ ավելի ստույգ՝ հույժ մասնակի ընկալմամբ դարձվածքը բաների այնպիսի գուգորդությունն է կամ կապակցությունը, «որի մեջ բաղադրիչները վերաիմաստավորված են, այսինքն՝ դարձվածքի բաղադրիչներից յուրաքանչյուրն այդ կապակցության մեջ չի պահպանում իր բառային, բանարանային բուն իմաստը եւ ձեռք է բերում նոր նշանակություն, այսինքն՝ սովյալ դարձվածքի արտահայտած ընդհանուր իմաստը այդ բաղադրիչների մեկսանիկական գումարը չէ: Եւ անշուշտ, դարձվածքի համար կարևորը նաև նրա փոխաբերական-այլաբանական իմաստ արտահայտելն է: Ինչ խոսք, դարձվածքների՝ նման բնութագրում տալիս անհրաժեշտ է նկատի ունենալ դարձվածքի մեջ մտնող բաղադրիչների շարահյուսական կապը, նրանց հարաբերությունն ու իմաստային միաձուլության աստիճանը, ըստ որի էլ կատարվում է դարձվածքների իմաստային-շարահյուսական դասակարգում»¹: Այս նույն բնորոշումը, նրբերանգային որոշ տարբերակներով երևան է գալիս դարձվածքանական ու լեզվաբանական շատ ուսումնասիրություններում՝ շեշտադրելով այն առանցքային միտքը, որ դարձվածային բաղադրիչները, այսինքն՝ բառերը, դարձվածքի համատեքստում կորցնում են հանրայնորեն գիտակցված ու ընդունված իրենց իմաստները, քանի որ գուգորդության մեջ վերաիմաստավորվում են եւ արտահայտում նոր՝ դարձվածային իմաստ, երբեմն այնքան պատկերավոր եւ անսովոր

¹ Լ.Կ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 181-182:

գուգորդմամբ, որ վերածվում են իդիոմների կամ էլ հարաբերականորեն ազատ դարձվածային բաղադրիչներ ունեցող կապակցությունների²:

Քննարկումները ցույց են տալիս, որ դարձվածքների ընկալման թե՛ *սեղ*, թե՛ *լայն* հայեցակերպերը ունեն իրենց թերություններն ու առավելությունները: Ինչեւէ, անկախ այսպիսի վիճահարույց հարցադրումներից, ի վերջո մշակվում է դարձվածքների ընկալման ժամանակակից հայեցակերպը, եւ ծագում են նորանոր հարցեր, որոնց պատասխանելը ինքնաբերաբար խթանում է դարձվածաբանության զարգացմանը: Ինչ վերաբերում է վերոհիշյալ խնդրին, թե արդյո՞ք դարձվածքների տարբերակման հիմքում պետք է դնել միայն այն իրողությունը, որ դարձվածքների բաղադրիչները չունեն բառային անկախություն, եւ դարձվածքները իմաստային ու շարահյուսական առումներով տարբալուծելի չեն (քանի որ դարձվածքը փաստորեն կարող է ներկայացվել որպես բառային մեկ ամբողջություն), դեռեւս կարոտ է առավել տրամաբանական ու մանրակրկիտ հետազոտությունների: Մեզ միանգամայն համոզիչ է թվում մի շարք դարձվածաբանների, մասնավորապես Լ. Եզեկյանի հիմնավորումը. «Որքան էլ այս տեսության հետևորդները նշում են առածների, ասացվածքների եւ թեւավոր խոսքերի տարբերությունը դարձվածքներից, բայց եւ այնպես, ի վերջո, չեն կարող անտեսել այն հանգամանքը, որ դրանք բավականաչափ շփման եզրեր ունեն. դեռ ավելին՝ մի շարք դեպքերում կարող է անցում կատարվել առածից դեպի դարձվածք (ինչպես առհասարակ լեզվական բազմաթիվ իրողություններից կարող են կազմվել դարձվածքներ), ինչպես՝ ավագի վրա տուն շինել, մկան ծակը հազար թումանով առնել, կաղ էշով քարավանին խառնվել եւ այլն: Չպետք է մոռանալ նաեւ, որ եւ՛ առածների, եւ՛ ասացվածքների, եւ՛ թեւավոր խոսքերի կազմում կարող են լինել մի շարք դարձվածքներ՝ «Պարիկի լեզուն կարճ կլինի», «Կալ մընտղ աղվեսը արյունն աչքի տակ կտոնի», «Գինին մարդուն չի մեղցնի, բայց շան օրը կգցի», իսկ մի շարք դարձվածքներ էլ առաջացել են հենց առածների եւ ասացվածքների հիման վրա, ինչպես՝ *պղպոր ջրում ձուկ բռնել*, *ձեռքը փրփուրին գցել*, *ջուր ծեծել* եւ այլն»³: Այնուհետեւ *դարձվածք* հասկացության որոշարկմանը գուգրնթաց, քննարկման նյութ են դարձել նաեւ

² Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 182. Ա. Սուրիասյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1999, էջ 302-304. Գ. Զահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն եւ բառակազմություն, Երևան, 1989, էջ 319. Էդ. Աղայան, Պատմամշակութային մեթոդը լեզվաբանության մեջ, Երևան, 1957, էջ 46 եւ ուրիշներ:

³ Լ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 188:

դարձվածքների տեսակները՝ կազմախոսական (սոմատիկ), միջազգային, պատմամշակութային, առասպելաբանական, կրոնական եւ այլն, դարձվածքների ձեւաբանա-շարահյուսական տարբեր կառուցվածքները, տարալեզու դարձվածքների ընդհանրությունները, այդ ընդհանրությունների պատճառները եւ ազգա-լեզվամշակութային առանձնահատկությունները, դրանց թարգմանելիության խնդիրները եւ այլն: Արդի շրջանում ավելի ու ավելի են շատանում դարձվածքների տեսակները՝ ի հաշիվ սոցիալական, վարչաքաղաքական, հոգեբանական-փիլիսոփայական, իրավաբանական ու գիտատեխնիկական կյանքին վերաբերող լեզվաոճական արտահայտությունների, որոնց մի մասը հատուկ բնույթի դարձվածքներ ու իդիոմատիկ արտահայտություններ են: Բնականաբար, դրանք եւս դառնում են քննարկման առարկա:

Դարձվածքների տարատեսակ համակարգում մեծ թիվ են կազմում կազմախոսական դարձվածքները, որովհետեւ, ինչպես նշում են հետազոտողները, դարձվածքների գերակշիռ մասը մարդու մարմնի մասերի անուններով են կազմված՝ աշխարհի տարբեր լեզուներում: Ըստ որոշ հաշվումների՝ հայերենում միայն «գլուխ» բառով կազմվել են 650, «աչք»-ով՝ 350, «բերան»-ով՝ 260, «երես»-ով՝ 180 դարձվածքներ: Որքան էլ, սակայն, այս հաշվումները գնահատելի են եւ ուշադրություն հրավիրող, այնուամենայնիվ, կարծում ենք, որ դրանց թիվը շատ ավելին է. ամեն դեպքում դա են ցույց տալիս հայերեն, հայերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն, հայերեն-անգլերեն եւ անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարանները, որոնցում բացակայում են շատ աստվածաշնչյան կազմախոսական դարձվածքներ, ինչպես նաեւ ժողովրդախոսակցական լեզվում, հայերենի բարբառներում եւ գեղարվեստական գրականության մեջ տարածված, թարգմանություններով հայերենին անցած մի շարք դարձվածային կապակցություններ:

Իհարկե, չպետք է մոռանալ, որ դարձվածաբանական բառարանների կազմումը եւ դարձվածաբանական ուսումնասիրությունները պահանջում են շարունակական, հարատեւ աշխատանք եւ, այսպես ասած, մշտադիտարկում՝ թարգմանությամբ ի հայտ եկող ԴՄ-ները գրանցելու, բացթողումները լրացնելու, լեզվաոճական նոր առաջացումները արձանագրելու առումով: Շատ կարեւոր են նաեւ կազմախոսական ԴՄ-ների առավել համակողմանի եւ հիմնարար քննարկումները, դրանց առաջացման նախապատճառների ուսումնասիրումը, սկզբնատիպային ձեւերի եւ դրանց գե-

դարվեստական տարբերակների հետագոտումն ու բնութագրումը՝ լեզվաբանաստեղծական վերլուծության նորագույն մեթոդի համաձայն:

Որպես դարձվածքների մի ստվար շերտ՝ կազմախոսական դարձվածքները ամենից առաջ բնութագրվում են իրենց հնությանը եւ նույն կամ գրեթե նույն տարբերակների լայն տարածվածությամբ աշխարհի տարբեր լեզուներում (հայերենում, անգլերենում, գերմաներենում՝ նաեւ հնդկացիական կամ աֆրիկական ցեղախմբերի լեզուներում): Հետաքրքիր է, որ այսօր տարբեր լեզուներում շրջանառվող կազմախոսական ԴԾ-ները մեծ մասամբ ունեն իրենց նախասկզբնական, արքետիպային ձևերը՝ ավանդված վաղնջական ժամանակներից՝ թե՛ բանավոր, թե՛ գրավոր եղանակներով, ի մասնավորի՝ որպես աղբյուր ծառայող բանահյուսական-ազգագրական ուսումնասիրություններով եւ Աստվածաշունչը կազմող սուրբ տեքստերով: Դրանք նույնությամբ կամ մասնակի փոփոխակներով մեզ են հասել գեղարվեստական գրականությամբ:

Կազմախոսականները հիմնականում նույնական կամ համընդհանրական դարձվածքներ են, բայց, այնուամենայնիվ, դրանք իրենց վրա կրում են որոշ տարբերիչ, հատկանշական դրոշմներ, որոնք արգասիք են էթնոմշակութային եւ լեզվամշակութային տարբերությունների, որոնք առկա են բրիտանական ու հայկական էթնոսների եւ մշակույթների միջեւ (թեեւ աստվածաշնչյան լեզվամտածողության առումով այդ տարբերությունները, լավ կլինի ասել՝ երանգային որոշ տարբերություններն այնքան էլ էական չեն. առավել էական են ընդհանրությունները, իսկ տարբերությունները հնարավորություն են ընձեռում երկու լեզուներում առկա ընդհանուր, տիպաբանորեն նույնական լեզվական միավորները դիտարկել իմաստանշանային մեկ այլ հարթության վրա՝ վեր հանելով դրանց հասկացման կամ մեկնաբանման մի նորահայտ կողմը):

Բերենք վերն ասվածը փաստարկող կազմախոսական բնույթի մեկ այլ դարձվածք, որտեղ առանցքը «աչքն» է, եւ որի այլաբանական-փոխաբերական կիրառմամբ բազմաթիվ դարձվածքներ կան թե՛ անգլերենում, թե՛ հայերենում:

“Made a covenant with mine eyes; why then should I think upon a maid?”
(Job 31. 1).

«Աչքերիս հետ ուխտ արեցի. ուրեմն ինչպե՞ս մտածեմ կույսի վրա»
(Հոբ ԼԱ. 1):

Ընդգծյալ դարձվածքում անգլերենի “made”-ը նշանակում է՝ արեցի, ավելի ստույգ՝ ի գործ դրեցի: Եթե անգլերենը թարգմանենք հայերեն,

ապա կստանանք մոտավորապես՝ «Աչքերիս հետ ուխտ արեցի» կամ «Աչքերիս հետ ուխտ ի գործ դրեցի»: Ակնհայտ է, որ հայերեն եւ անգլերեն իմաստները գրեթե նույնն են (թեւեւ անգլերենի մեջ առկա են *ի գործ դրեցի, գործեցի*), որոնցից համեմատաբար «ազատ» է հայերենը: Հայերենում առավելապես «ներկա» է (կարելի է ասել՝ ներկա բացակայություն) «կնքեցի» իմաստը: Պատահական չէ, որ գրական արեւելահայերենով այդպես էլ թարգմանված է.

«Դաշինք *կնքեցի* աչքերիս հետ ես, ու չնայեցին նրանք մի կույսի» (Հոր ԼԱ. 1):

Կարծում ենք, որ հայերենում թեւեւ առկա է «կնքեցի» իմաստը, սակայն լավ կլիներ, եթե արեւմտահայերեն թարգմանությունների վրա հիմնվելով՝ թարգմանվեր այսպես՝ «*Ես ուխտ կապեցի աչքերիս հետ*»: Ռուսերեն թարգմանությունում այսպես է՝ “*Завет положил я с глазами моими, чтобы не помышлять мне о девице*” (Книга Иова, 31. 1):

Ռուսերենում, փաստորեն, առկա է *положил-դրեցի* իմաստը: Այսպիսով, նույն լեզվական միավորը, լեզվամշակութային ավանդույթներից ու առանձնահատկություններից ելնելով, թարգմանվել է յուրակերպ.

1) Անգլերենում առավելապես շոշափելի է դարձել “made” (արեցի, ի գործ դրեցի կամ ի կատար ածեցի) իմաստը:

2) Հայերենում, թեւեւ թարգմանված է *արեցի* (արեւմտահայերեն՝ ըրի), սակայն «հեռակա կարգով» առկա կամ շոշափելի են նաեւ «կնքեցի» կամ «կապեցի» իմաստները:

3) Ռուսերենում թարգմանված է “*положил*” (*դրեցի*), որով կարծես շեշտադրվել է ուխտ կապելու ուղղահայաց (երկնքից երկիր) բնույթը, այսինքն այն, որ ուխտը վերելից է դրվում Աստծո եւ ուխտավոր մարդու միջեւ:

Այս բոլոր թարգմանական նրբերանգները գալիս են լրացնելու աստվածաշնչյան հիմնական իմաստը եւ հնարավորություն են ընձեռում տվյալ դարձվածքի առավել լիարժեք բացահայտման համար:

Բերենք դարձվածքի մեկ այլ օրինակ՝ վերստին կազմված «աչք»-ով.

“And it came to pass, as he sat at meal with them, he took bread, and blessed it, and broke, and gave to them. And their eyes were opened, and they knew him; and he vanished out of their sight” (Luke 24. 30-31).

«Եւ երբ նա սեղան նստեց նրանց հետ, հաց վերցնելով՝ օրհնեց, կտրեց այն եւ տուեց նրանց: Եւ նրանց աչքերը բացուեցին ու ճանաչեցին նրան, իսկ ինքը նրանց աչքին աներևոյթ եղաւ» (Դուկ. ԻԴ. 30-31):

Կազմախոսական դարձվածքը՝ “*eyes were opened...*” («...աչքերը բացուեցին») վերելում մատնանշված այն դեպքն է, երբ տվյալ լեզվական միավորը արտաքնապես հանդես է գալիս իբրեւ ազատ կապակցություն, բայց, ըստ էության, այլաբանական իմաստ ունի եւ որպես այդպիսին՝ կայուն է. իսկ եթե կայուն է եւ ունի այլաբերական (փոխաբերական) իմաստ, ուրեմն դարձվածք է: Վերջինիս «կարգավիճակը», այսինքն՝ դարձվածք լինելը, հասկացվում եւ հաստատվում է համատեքստային ամբողջության մեջ: Նշյալ դարձվածքը ուշագրավ է նրանով, որ թե՛ անգլերենում, թե՛ հայերենում այն նույնն է՝ զուգորդված “eyes” (աչքերը) եւ “opened” (բացուեցին) բառերով: Իսկ սա էլ իր հերթին նշանակում է, որ տվյալ դարձվածքը թե՛ անգլերենին, թե՛ հայերենին փոխանցվել է միևնույն արքետիպից՝ Աստվածաշնչից. եւս մեկ հետաքրքիր հայեցակերպ՝ դարձվածքների, տվյալ դեպքում՝ կազմախոսական դարձվածքների վերլուծությունը առավել հանգամանալի դարձնելու առումով:

Վերադառնանք, սակայն, վերը նշված այն դրույթին, որ, նախ, աստվածաշնչյան ԴՄ-ները, մասնավորապես՝ կազմախոսական շատ ԴՄ-ներ, սերում են «մեծ նախահիմքից»՝ ընդհանուր-դիցաբանական անցյալից, եւ երկրորդ, այդօրինակ շատ ԴՄ-ներ թե՛ դիցաբանական ավանդույթում, թե՛ Աստվածաշնչում լինում են երկու տիպի՝ այսպես ասած՝ սովորական եւ անսովոր կամ հոգեւոր իմաստով: «Սովորական իմաստ» ասելով՝ պետք է հասկանալ մարդու կազմախոսական տարրերին (աչք, ականջ, բերան եւ այլն) վերաբերող ավանդական-հանրահայտ-համընդհանուր պատկերացումները, դրանց վերագրվող գործառույթները, օրինակ այն, որ «գլուխը» բարձրագույն դիրքն է գրավում մարդակազմական կառույցում, «ճակատը» խորհրդանշում է միտք եւ կայունություն, իսկ, օրինակ, «սիրտը» համարվում է (=ավանդաբար ընկալվում) մարդու խորհուրդների, խոկումների դուռը, որովհետեւ (ըստ Աստվածաշնչի) մաքուր սիրտն է արտոնություն շնորհում մարդուն՝ տեսնելու Աստծուն, եւ բուն իմաստությունը կապված է «սրտի իմաստության» հետ, ինչպես որ հավաստվում է Սողոմոն թագավորին վերաբերող պատումում.

“And God said to him, “Because you have asked this, and have not asked for yourself long life or riches or the life of your enemies; but have asked for yourself understanding to discern what is right, behold, I now do according to your word. Behold, I give you a wise and discerning mind, so that none like you shall arise after you” (I King 3. 11-12).

Հայերենում (հայկ. կանոն) ասվում է հետևյալը. «Տիրոջը հաճելի եղավ Սողոմոնի այս խնդրանքը եւ Տերն ասաց նրան. «Քանի որ դու այս բանը խնդրեցիր ինձնից, խնդրեցիր ոչ թե կեանքի երկար օրեր, հարստություն կամ քո թշնամիների մահ, այլ խնդրեցիր խելամտություն՝ դատ անելու, ուստի քո ասածի համաձայն եմ վարուելու. քեզ տալիս եմ իմաստուն ու հանճարեղ միտք, այնպես որ ո՛չ քեզնից առաջ է քո նմանը եղել, եւ ո՛չ էլ քեզնից յետո քո նմանը կը յատնուի» (Գ. Թագ. Գ. 10-12):

Լեզուն որպես սոցիալական ու մշակութային կյանքի հայելի են դիտարկել շատ լեզվաբաններ, մշակութաբաններ ու թարգմանաբաններ⁴:

Դարձվածքներ գոյություն ունեն աշխարհի տարբեր լեզուներում: Նրանք մեզ են հասել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ձևերով, Աստվածաշունչը կազմող տեքստերի, այդ թվում նաեւ տարբեր լեզուներով գեղարվեստական գրականության միջոցով: Այստեղ փորձ արվեց ցույց տալ դարձվածային միավորների նախատիպերը եւ նրանց փոխակերպումները ժամանակի ընթացքում: Կազմախոսական դարձվածքները քննարկվում են իրենց ծագման, կազմավորման փուլում՝ փորձելով նախնական հավատալիքների, ծեսերի եւ աստվածաշնչյան մարդաբանական պատկերացումների արտացոլումները ցույց տալ արքեստիպի նշանակություն ունեցող կազմախոսական դարձվածքներում:

РЕЗЮМЕ

Фразы многочисленны в разных языках мира. До нас они дошли как в устном, так и в письменном виде, через тексты, составляющие Библию, а также через художественную литературу разных языков. Делается попытка указать прототипы фразеологических единиц и их перемены в течении времени. В статье делается попытка показать отражение ранних вероисповеданий, ритуалов и библейских антропологических представлений в соматических фразеологических единицах архетипной значимости. Теоретическая значимость заключается в том, что выбран широкий спектр изучаемого материала. Описание процесса трансформаций этих единиц, перевод антропологических и религиозно-ритуальных представлений на эстетическое и символичное, в целом, выявляет ряд вопросов, тесно связанных с фразеологией, лингвостилистикой и лингвокультурологией.

⁴ Л. Бархударов, Структура простого предложения современного английского языка, Москва, 1996, с. 200.

SUMMARY

Phrases are in great number and exist in various languages of the world. They have reached us both verbally and in written form through the texts comprising the Holy Bible or other literary texts. The article tries to point out the archetypal forms of phraseological units and their transformation in time. Somatic phraseological units are discussed first in the phase of their origin and formation trying to show the reflections of ancient beliefs, rituals and biblical anthropological notions in the somatic phraseological units of archetypal importance. From the theoretical point of view the work makes a contribution to the study of phraseological units in a wider context. Its results can be used in courses of lexicology and contrastive stylistics.



ՀՐԱՆՏ ՕՀԱՆՅԱՆ

ՄՄ

**ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԱՐԵՒԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԺԸ. ԴԱՐՈՒՄ**
(ըստ Սիմեոն Երևանցու «Ջամբո» աշխատության)

Միմեոն Երևանցի կաթողիկոսի (1763-1780 թթ.) «Ջամբո»¹ երկը կարևոր տեղեկություններ է պարունակում Արեւելյան Հայաստանի, Երևանի խանության բնակավայրերի սոցիալ-տնտեսական պատմության, այդ թվում նաեւ եկեղեցական թեմերի, դրանց տնտեսության, վանքապատկան գյուղերի ու բնակավայրերի տնտեսական վիճակի, հարկային համակարգի և պարտավորությունների վերաբերյալ, մանրամասներ՝ Ս. Էջմիածնին հարկատու գյուղերի, դրանցից ստացվող եկամուտների մասին: «Ջամբո»-ում արծածված են նաեւ տնտեսական հարաբերությունների խնդիրներ, նշվում է՝ երբ և որ կալվածագրով ու հրամանագրով է Ս. Էջմիածինը ձեռք բերել այս կամ այն գյուղը. այդ ամենը ներկայացված է ըստ համապատասխան փաստաթղթային հիմնավորման, պարսից իշխողների կողմից տրված և Ս. Էջմիածնում պահվող փաստաթղթերի: «Ջամբո»-ը լույս է սփռում Արեւելյան Հայաստանի՝ ԺԸ. դարի և նախորդ ժամանակաշրջանի տնտեսական հարաբերությունների, բնակչության սոցիալական վիճակի, հարկային համակարգի, հողատիրության ձևերի և այլ խնդիրների վրա: Սիմեոն Երևանցին վկայում է, որ ինքը մեծ ուշադրություն է դարձրել պարսից շահերից, օսմանյան սուլթաններից և այլ իշխողներից ստացված հրովարտակների, հրամանագրերի, կալվածագրերի վրա՝ դրանք դիտարկելով որպես իրավական կարևորագույն հիմք, որով և հաստատվել են Ս. Էջմիածնի իրավունքները: Հեղինակը, կարևորելով մահմեդական իշխողներից ստացված իրավական փաստաթղթերը, իր

¹ ՄՄ Հ^մ 978. նաեւ՝ «Ջամբո, գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնափյռ պայծառութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ և շարագրեցեալ ի Սիմէօնի կաթողիկոսէ Երևանցոյ», Վաղարշապատ, 1873, գլ. Ա.-ԺԲ. (այսուհետեւ՝ «Ջամբո»):

աշխատության մեջ հստակ համակարգել, խմբավորել է միատեսակ վավերագրերը՝ առանձնացնելով շահերից ու սուլթաններից, խաններից, փաշաներից, շեյխալամներից եւ այլ պաշտոնյաներից ստացված՝ Էջմիածնի իրավունքները հաստատող հրամաններն ու փաստաթղթերը:

Սիմեոն Երեւանցու «Ջամբո» աշխատությունը Արեւելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմությունը ներկայացնող կարեւորագույն սկզբնաղբյուր է, որտեղ հեղինակի ուշադրությունը հիմնականում սեւեռված է Ս. Էջմիածնի եւ վանքապատկան գյուղերի սոցիալ-տնտեսական նկարագրին, սակայն քիչ տեղեկություններ է հաղորդում գյուղական համայնքների խնդիրների վերաբերյալ:

Սիմեոն Երեւանցին հանգամանակից անդրադարձել է Վաղարշապատի պատմությանը՝ ներկայացնելով Ս. Էջմիածնի՝ գերիշխելու օրինական իրավունքի տեսանկյունից, հիմնավորելով դա բազմաթիվ կալվածագրերով ու հրամանագրերով: Հեղինակը քաջ գիտակցում էր կարեւորությունը պարսից իշխանությունների կողմից տրված հրովարտակների, որոնցով հիմնավորվում եւ հաստատվում էին Ս. Էջմիածնի իրավունքներն ու արտոնությունները. դրանցից ամենակարեւորը մաղափության իրավունքն էր, որից Ս. Էջմիածինն օգտվում էր նաեւ Սիմեոն Երեւանցու կաթողիկոսության շրջանում: Սիմեոն Երեւանցին այդ իրավունքն արդյունավետ էր կիրառում նաեւ վրաց Հերակլ Բ. թագավորի եւ Երեւանի Հուսեյն Ալի խանի հետ ունեցած լավ փոխհարաբերությունների շնորհիվ: Մաղափության իրավունքով Ս. Էջմիածինը ոչ միայն ազատված էր հարկերից, այլեւ իրեն պատկանող կալվածքներից տասանորդ գանձելու իրավունք ուներ: Այս հանգամանքը, սակայն, հաստատապես ամրագրված չի եղել Ս. Էջմիածնի համար: Ըստ էության՝ ազատված լինելով պարսից արքունիքին հարկ վճարելու պարտավորությունից², կաթողիկոսները ստիպված էին ժամանակ առ ժամանակ պարսից պաշտոնյաներին, այդ թվում՝ խաներին, պատվել ու նվերներ ուղարկել՝ տարբեր տոների առիթով³:

Այս վիճակը հաճախ էր փոփոխվում՝ պայմանավորված կաթողիկոսների անձով եւ գործունեությամբ կամ պարսից շահերի վերաբերմունքով: Սիմեոն Երեւանցին հանգամանակից անդրադարձել է Ս. Էջմիածնի մաղափության իրավունքին՝ այն դիտարկելով որպես պատմական իրավունք,

² Բացառություն էր կազմում որոշակի գումարի վճարումը, որը համարվում էր Էջմիածնի մաղափության գումարը:

³ «Ջամբո», էջ 151:

որը հաստատվել է բազմիցս վերահաստատվել է Շահ Աբաս Ա.-ի (1612 թ.)⁴, Շահ Աբաս Բ.-ի (1644 թ.)⁵, Շահ Սուլեյմանի (1672 թ.)⁶, Շահ Թահմասպ Բ.-ի (1731 թ.)⁷, Նադիր շահի (1735 թ.)⁸, Իբրահիմ շահի (1748 թ.)⁹, վրաց Հերակլ Բ. թագավորի (1751 թ.)¹⁰, Ազադ խանի (1752 թ.)¹¹, Քերիմ խանի (1763/64 թ.)¹² հրովարտակներով:

Վաղարշապատ գյուղը պատկանել է Ս. Էջմիածնի վանքին դեռևս 1431/32-ից¹³, սակայն իրավիճակը փոխվում է հայրապետական աթոռը Սիս տեղափոխելուց հետո: Այն Էջմիածնում վերահաստատելուց հետո (1441 թ.) խնդիրներ են առաջանում Վաղարշապատի պատկանելության հետ կապված. այն հայտնվել էր տեղի իշխողների տիրապետության տակ: Հայտնի է, որ Գրիգոր Մակվեցի (1443–1465 թթ.) կաթողիկոսին հաջողվում է գնել գյուղը՝ վճարելով ութ հազար քառասուն դինար: Դրանով, սակայն, խնդիրները չեն լուծվում, քանի որ այլ մահմեդական իշխողներ եւս ձգտում էին տիրել Վաղարշապատին: Եւ կաթողիկոսները բազմիցս, ժամանակի հրամայականից ելնելով, ստիպված էին նորանոր դիմումներով, խնդրագրերով, պարսից շահերի, խանների հրովարտակներով վերադարձնել Ս. Էջմիածնի իրավունքները եւ ետ ստանալ ենթակա տարածքները (այդ թվում՝ Վաղարշապատը եւ հայրապետական աթոռի՝ տասանորդ գանձելու իրավունքը): Այսպես՝ պարսից Շահ Աբաս Ա. 1617 թ. հրովարտակով հաստատում է Ս. Էջմիածնի մադաֆությունը եւ պարտավորեցնում պարսից արքունիք վճարել տարեկան 100 թուման : Օգտվելով բարենպաստ իրավիճակից՝ հետագայում հնարավոր է լինում Շահ Սաֆիի 1629 թ. հրովարտակով վերացնել այդ պարտավորությունը¹⁴: Իսկ Հակոբ Շամախեցի կաթողիկոսը (1759-1763 թթ.), հաշվի առնելով պարսից երկրում տիրող խառնակ վիճակը

⁴ «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», Հրովարտակներ, պրակ Բ. (1601-1650 թթ.), կազմ.՝ Հ. Փափազյանը, Երևան, 1959, էջ 91, վավ. 11:

⁵ Անդ, էջ 114:

⁶ ՄԴՎ, Հրովարտակներ, պրակ Գ. (1672-1731 թթ.), կազմ.՝ Բ. Կոստիկյանը, Երևան, 2005, էջ 92, վավ. 38:

⁷ «Ջամբո», էջ 186:

⁸ ՄԴՎ, Հրովարտակներ, պրակ Դ. (1734-1797 թթ.), կազմ.՝ Բ. Կոստիկյանը, Երևան, 2008, էջ 29, վավ. 5:

⁹ Անդ, էջ 72:

¹⁰ Անդ, էջ 77:

¹¹ Անդ, էջ 78:

¹² Անդ, էջ 91:

¹³ «Կալվաճագրեր եւ տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», պրակ 1, կազմ.՝ Հ. Աբրահամյանը, Երևան, 1941, էջ 16 (այսուհետև՝ «Կալվաճագրեր...»):

¹⁴ ՄԴՎ, պրակ Բ., էջ 91, վավ. 11:

եւ այն հանգամանքը, որ Երեւանի Հուսեյն Ալի խանը կիսանկախ իշխում է Երեւանի խանությունում, որպես հիմք ներկայացնելով պարսից շահերի նախորդ հրովարտակաները՝ վերջինիցս ստանում է 14 կետից բաղկացած մի փաստաթուղթ: Այդ փաստաթղթով հերթական անգամ հաստատվում էր Ս. Էջմիածնի մաղաֆության իրավունքը՝ վանքերին պատկանող հողերից հարկեր գանձելու արտոնությամբ հանդերձ¹⁵:

Արեւելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերող տվյալները Սիմեոն Երեւանցու «Ջամբո»-ում ներկայացված են հետևյալ կերպ՝ 1. Ս. Էջմիածնի վանքապատկան գյուղեր, 2. վանական տնտեսություններ, 3. Ս. Էջմիածնին պատկանող վարելահողեր, այգիներ, ջրաղացներ, ջրամբարներ, տներ, խանութներ, տնտեսական այլ տվյալներ:

Սիմեոն Երեւանցին ձեռքի տակ ունեցել էր քաջածանոթ է եղել Էջմիածնում պահվող փաստաթղթերին, սակայն ցավով արձանագրել է նաև որոշ կորուստների մասին, «...քանզի որոց ցանկայի եւ յուսայի գտնել, գորս եւ հաւաստեաւ գիտէի իսկ գոյ յԱթոռոջս, զբազումս եւ զբոլորէն ոչ գտի...»¹⁶: Ինչպես տեսնում ենք, հեղինակը ուսումնասիրել է Ս. Էջմիածնի արխիվները՝ իրավամբ կարելուրելով պարսից շահերի, խաների եւ այլ պաշտոնյաների հրովարտականներն ու փաստաթղթերը, «...քանզի թէպէտ տուողքս այլազգիք եւ թշնամիք մերոյս կրօնի, սակայն՝ տուրք եւ հրամանագիրք նոցին են ըստ աշխարհիս օգտարարք, բուժիչք եւ ապահովացուցիչք...»¹⁷: Հեղինակն այս բոլոր փաստաթղթերը գտել, համակարգել եւ ներկայացրել է «Ջամբո»-ում՝ կազմելով կանոնավոր արխիվ: Ս. Էջմիածնին վերաբերող ամենահին փաստաթուղթը, որ եղել է կաթողիկոսի ձեռքի տակ, Շահ Թահմասպ Ա.-ի (1514-1576 թթ.)՝ ԺՋ. դ. հրովարտակն է, որով հաստատվում էին Ս. Էջմիածնի իրավունքները Նախիջևանի, Գեղարքունիքի, Ղափանի, Խոյի, Սալմաստի, Գանձակի, Պարտավի, Աղստեի, Զակամի¹⁸ եւ Լոռու նկատմամբ¹⁹:

Անդրադառնալով «Ջամբո»-ի հաղորդած տեղեկություններին Ս. Էջմիածնին պատկանող առավել հայտնի համայնքների վերաբերյալ՝ նշենք, որ դրանց թիվը պատմական տարբեր ժամանակահատվածներում տարբեր է եղել: Այսպես՝ Սիմեոն Երեւանցին վերահաստատում է Ս. Էջմիածնի իրավունքները մի շարք բնակավայրերի նկատմամբ, ինչպես օրինակ՝

¹⁵ «Ջամբո», էջ 232:

¹⁶ Անդ, էջ 209:

¹⁷ Անդ, էջ 210:

¹⁸ Պատմական Ուտիքի հյուսիսարեւմտյան հատվածը:

¹⁹ «Ջամբո», էջ 210:

Օշական գյուղի, որի վերաբերյալ առաջին կալվածագիրը Սիմեոն Երեւանցին թվագրում է 1633-ով, երբ Փիլիպոս կաթողիկոսը ձեռք է բերում այդ գյուղի կես դանկ մուլքը՝ հինգ թումանով²⁰։ Դրանից հետո արդեն Փիլիպոս կաթողիկոսը մահմեդականներից մաս-մաս գնում է Օշական գյուղից տասանորդ գանձելու կալվածագրերը եւ խնամքով պահպանում դրանք, որոնցից եւ հետագայում, որպես աղբյուր, օգտվում է Սիմեոն Երեւանցին՝ համարակալելով ու գրանցելով հատուկ մատյանում։ Հաջորդ կաթողիկոսները եւս ստիպված էին պաշտպանել Էջմիածնի իրավունքը այս գյուղի նկատմամբ՝ պարբերաբար գումար վճարելով եւ համապատասխան փաստաթղթեր վերցնելով մահմեդականներից։ Բացի այդ, 1735 թ. Նաղիր շահի հրովարտակով հաստատվում է Ս. Էջմիածնի իրավունքը Օշականի նկատմամբ²¹։ Արդեն Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի օրոք այս գյուղը գրավում է թյուրքական մուղանլու ցեղը՝ շուրջ 20 տարի իշխելով, քանդելով տներն ու ամայացնելով հողատարածքները։ Սիմեոն Երեւանցուն հաջողվում է 1768 թ. դուրս քշել այդ ցեղին եւ վերադարձնել հայ ազգաբնակչությանը՝ վերականգնելով նաեւ Ս. Էջմիածնի համար տասանորդի գանձումը²²։

Ֆռանկանոց գյուղը (Կարբիի տարածքում) ձեռք է բերվում դեռեւս Հակոբ Զուղայեցու հայրապետության շրջանում. Հակոբ Շամախեցու օրոք վերանորոգում եւ հայերով է բնակեցնում Երեւանի Հուսեյն Ալի խանը՝ պայմանով, որ գյուղացիներից գանձվող մուլքը կկիսվի խանի եւ կաթողիկոսի միջեւ, սակայն այս պայմանը հաջողվում է ի կատար ածել միայն Սիմեոն Երեւանցու օրոք։

Մուղնիի նկատմամբ եւս հավակնություններ են դրսևորում մի շարք մահմեդականներ՝ դեռեւս Շաբ Աբաս Բ.-ի օրոք։ Հետագայում վեճեր են ծագում գյուղից տասանորդ գանձելու իրավունքի վերաբերյալ, մինչեւ որ 1768 թ., ի թիվս այլ գյուղերի, Սիմեոն Երեւանցուն հաջողվում է այն ետ ստանալ Երեւանի Հուսեյն Ալի խանից²³։ 1768 թ. հաջողվում է Ս. Էջմիածնի իրավունքները վերականգնել նաեւ Քիրաշլու (Ապարան), Եղվարդ, Աշտարակ գյուղերի նկատմամբ, որոնք կաթողիկոսը կարողանում է վերադարձնել Երեւանի Հուսեյն Ալի խանի հատուկ թղթով²⁴, ինչպես նաեւ՝ Աղավնատուն գյուղը (Կարբիի նահանգ)։

²⁰ Անդ, էջ 108:

²¹ ՄՊՎ, պրակ Դ., էջ 33, վավ. 8:

²² «Ջամբո», էջ 112:

²³ Անդ, էջ 119:

²⁴ Անդ, էջ 129:

Ընդհանուր առմամբ Սիմեոն Երեւանցին առանձին-առանձին եւ անուն առ անուն ներկայացնում է Ս. Էջմիածնին հարկատու գյուղերը, թե այգիներից, ցանքսերից որ գյուղը որքան մուլք (տասանորդ) էր վճարում: 1431 թ. Գրիգոր Մակվեցի կաթողիկոսի կողմից գնված գյուղերին վերաբերող հիշատակությունները (դրանք էին՝ Վաղարշապատ, Աշտարակ, Բաթոինջ, Նորագավիթ, Աղավնատուն, Թեղենիս-Քիրաջլու, Մուղնի)²⁵ լրացվում են «Ջամբո»-ի հաղորդած տեղեկություններով, որոնց համաձայն՝ Ս. Էջմիածինը ձեռք է բերել նաև Դիբաբլուն՝ 1585 թ., ԺԷ. դարում՝ մաս-մաս Օշականը, ապա՝ Մաստարան (ԺԷ.-ԺԸ. դդ.), Ֆռանկանոց գյուղը՝ 1655-ին: Սակայն իրավիճակը պարբերաբար փոփոխվել է. ԺԷ. դ. Ս. Էջմիածնի կալվածքների թվում հիշատակվում է 23 գյուղ, իսկ 1725 թ. դրությամբ դրանք ընդամենը հինգն էին²⁶: Ս. Էջմիածնի տնտեսական վիճակը ուղղակիորեն կախված էր պարսկական տիրապետության, իսկ ավելի ստույգ՝ այդ երկրում տիրող ներքին դրությունից եւ պարսից իշխողների մոտեցումներից: Այսպես՝ Աբրահամ Կրետացու ջանքերով Նաղիր շահն իր մի հրովարտական 1735 թ. Ս. Էջմիածնին է ամրագրում Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Ֆռանկանոց, Քիրաջլու, Դիբաբլու, Հալաբիքենդ գյուղերը²⁷, իսկ 1741 թ. դրությամբ՝ նույն շահի մեկ այլ հրովարտական նշվում է ընդամենը չորս գյուղերի մասին²⁸:

Սիմեոն Երեւանցու գործունեության շնորհիվ զգալիորեն ընդարձակվում են Էջմիածնի կալվածքները: «Ջամբո»-ը տեղեկություններ է պարունակում այն բնակավայրերի մասին, որոնք տասանորդ էին վճարում Ս. Էջմիածնին՝ Վաղարշապատ, Օշական, Ֆռանկանոց, Մաստարա, Քիրաջլու, Մուղնի, Դիպակլու, Քեշիշքենդ, Նորագյուղ, Նորք, Եղվարդ, Յայնի, Բաթոինջ, Բոխենիս, Ծոպանիս, Դարադոյունլու, Աշտարակ, Աղավնատուն, Նորագավիթ, Բյուրական, Հաջիլար, Ամիրի, Մելիքի կոչված գյուղերը եւ այլն: Այս բոլոր գյուղերի նկատմամբ Ս. Էջմիածնի իրավունքները հաստատված էին կալվածագրերով. դրանց մի մասը Երեւանի Հուսեյն Ալի խանի միջոցով ձեռք է բերել անձամբ կաթողիկոսը: Այսպես՝ 1768 թ. հաստատված կալվածագրով Ս. Էջմիածնի իրավունքները ճանաչվում են Աշտարակ,

²⁵ ՄՊՎ, Հրովարտականք, պրակ Ա. (ԺԴ.-ԺԶ. դդ.), կազմ.՝ Հ. Փափազյան, Երեւան, 1968, էջ 66, վավ. 5:

²⁶ Հ. Փափազյան, Վանական կալվածքների սեփականատիրության մի քանի առանձնահատկություններ. ԲՄ, թ. 10, 1971, էջ 243:

²⁷ ՄՊՎ, պրակ Դ., էջ 33, վավ. 8:

²⁸ Անդ, էջ 53:

Եղվարդ, Մուղնի եւ Քիրաշլու գյուղերի նկատմամբ եւս²⁹: Բացի այդ, Մուղնին եւ Օշականը ազատագրվում են մահմեդական ցեղերի ոտնձգություններից: Էջմիածնին պատկանող եւս 3 գյուղի մասին «Ջամբո»-ում կա հիշատակություն. դրանք են՝ Նորագավիթ, Բյուրակն, Հաջիլար: «Ջամբո»-ի ձեռագրում դրանց համար թողնված են համապատասխան դատարկ էջեր՝ ըստ երեւոյթին հետագայում լրացնելու նպատակով³⁰:

Ս. Էջմիածինն իր տիրույթներն ուներ նաեւ հարեւան Վրաստանում: Դեռեւս 1657 թ. վրաց Ռոստոմ թագավորի կողմից Ս. Էջմիածնին է նվիրվում Նախեղոտ գյուղը³¹. բացի այդ, Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի օրոք Ս. Էջմիածինը վրաց թագավորներից ստանում է Թասմալուր գյուղը (Կախեթ), նաեւ՝ խանութներ Թիֆլիսում: Ս. Էջմիածինը Վրաստանում ուներ նաեւ ճորտեր³², ինչի վերաբերյալ պահպանվել են վկայություններ³³:

Ինչպէս տեսնում ենք, 1760-ական թթ. Սիմեոն Երեւանցուն հաջողվում է ընդարձակել Ս. Էջմիածնին հարկատու գյուղերի ցուցակը եւ հաստատել դրանք Քերիմ խանի հրամանագրով, որը թվագրվում է 1763/64-ով³⁴: Այդ բնակավայրերից մի քանիսը դարեր շարունակ եղել են Ս. Էջմիածնի սեփականությունը, սակայն, ինչպէս նշվեց, պատմական տարբեր ժամանակաշրջաններում իրավիճակը փոփոխվել է: Հայոց կաթողիկոսները պարսից արքունիքից բազմիցս ստացել են այս կամ այն գյուղի եւ բնակավայրի նկատմամբ իրավունքների հաստատման կամ վերահաստատման վերաբերյալ կալվածագրեր:

Այսպիսով՝ Էջմիածնի տիրույթների խնդիրը մեծապէս կախված էր պարսից իշխանությունների վերաբերմունքից, ինչպէս նաեւ՝ նրանց հետ կաթողիկոսների ունեցած փոխհարաբերություններից:

Ս. Էջմիածինը վանքապատկան հողերով եւ ունեցվածքով ներգրավված է եղել տնտեսական գործունեության մեջ՝ իրեն պատկանող գյուղերից գանձելով տասանորդ, փոխառություններ տրամադրելով, գնելով կամ վաճառելով իրեն պատկանող հողատարածքներից տասանորդ գանձելու իրավունքը եւ այլն: Պատմական փաստերից ելնելով՝ կարող ենք նշել, որ Արեւելյան Հայաստանի հայ ազգաբնակչությունը, պարսկական տի-

²⁹ «Ջամբո», էջ 129:

³⁰ ՄՄ ՀՊ 978, 255ա, բ, 256ա, բ, 257ա, բ:

³¹ «Կալվածագրեր...», էջ 18-19:

³² «Ջամբո», էջ 209:

³³ «Դիւան հայոց պատմութեան», հրատ.՝ Գիտ քահանայ Աղանեանց, գիրք ԺԱ., «Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը», մասն III (1777-1779 թթ.), յաւելումներով ու ծանօթութիւններով, Թիֆլիս, 1913, էջ 48:

³⁴ ՄՊՎ, պրակ Դ., էջ 91, վավ. 49:

րապետության պայմաններում, մշտապես սոցիալ-տնտեսական գործուն հարաբերություններ է ունեցել Ս. Էջմիածնի հետ: Օրինակ՝ բազմաթիվ են դեպքերը, երբ հայ գյուղացիները երկրում տիրող տնտեսական ծանր պայմանների, պատերազմների ու կոիվների արդյունքում տուժած իրենց տնտեսությունները վերականգնելու նպատակով փոխառություններ են վերցրել Ս. Էջմիածնից՝ մեծացնելով իրենց հարկային պարտավորությունները վերջինիս նկատմամբ: Ուշագրավ է Աստվածատուր Ա. կաթողիկոսի (1715-1725 թթ.) կառավարման շրջանում տեղի ունեցած դեպքը, երբ թուրքական արշավանքից հետո դժվարին վիճակում հայտնված հայ գյուղացիները 150 թուման փող են խնդրում կաթողիկոսից՝ պարտավորվելով այդուհետ տասանորդի փոխարեն Ս. Էջմիածնին վճարել բերքի մեկ հինգերորդ մասը, որը եւ հաստատում է Երեւանի շեյխիսլամ Մոլա Մահմուդ Հուսեյնը³⁵: Այդպիսի մի օրինակ էլ վերաբերում է Ֆռանկանոց գյուղին՝ ԺԸ. դ. առաջին կեսին. Օսմանյան կայսրությունը գրավել էր Երեւանի նահանգը, եւ գյուղացիները ստեղծված դժվարին պայմաններում ստիպված էին 40 թուման գումար փոխառություն վերցնել Աբրահամ Բ. Մշեցի (1730-1734 թթ.) կաթողիկոսից՝ պարտավորվելով տասանորդի փոխարեն վճարել բերքի մեկ հինգերորդը³⁶:

Բազմաթիվ են նաեւ դեպքերը, երբ Ս. Էջմիածինը գրավի դիմաց տրամադրել է դրամ³⁷. ինչպես Ս. Էջմիածինը, այնպես եւ վանական այլ տնտեսությունները ձեռք են բերել, փոխանակել կամ վաճառել են հողատարածքներ³⁸, այդպիսով Արեւելյան Հայաստանում դառնալով տնտեսական հարաբերությունների մասնակից: Ս. Էջմիածնի համար եկամուտներ ստանալու աղբյուր են եղել նաեւ քարվանսարա-հյուրանոցների վարձակալությամբ հանձնումը, դուքանները (խանութ-արհեստանոց), բաղնիքները, տոկոսով գումար տրամադրելը³⁹. Սրանք ապահովում էին բարձր եկամուտներ: Ս. Էջմիածնի համար կարեւոր էր նաեւ եղած կալվածքների կառավարման ու հարկման խնդիրը: Պատահական չէ, որ Սիմեոն Երեւանցու օրոք եւս լայն կիրառում է ստանում այդ կալվածքները վարձակալությամբ հանձնելու, դրամական փոխառությունների տրամադրելու փորձը, որի վերաբերյալ

³⁵ «Ջամբո», էջ 112:

³⁶ Անդ, էջ 113:

³⁷ «Կալվածագրեր...», էջ 21:

³⁸ **В. Арутюнян**, Крупное монастырское хозяйство в Армении в XVII-XVIII вв., Ереван, 1940, с. 22-23.

³⁹ **Հ. Թորոսյան**, Էջմիածնի վանական տնտեսությունը XV-XVIII դարերում, Երեւան, 2007, էջ 235-236:

պահպանվել են արխիվային փաստաթղթեր⁴⁰ և որի շնորհիվ Ս. Էջմիածինը ապահովում էր կանոնավոր եկամուտներ: Սիմեոն Երեւանցու հայրապետության շրջանում Ս. Էջմիածնի տնտեսական հնարավորությունների ընդլայնումը մեծապես աշխուժացնում է տնտեսական հարաբերությունները Արեւելյան Հայաստանում:

Ս. Էջմիածնի գործունեության համակարգում կարեւոր տեղ էին զբաղեցնում վանական տնտեսությունները, որոնք ունեին վարելահողեր, այգիներ, ջրաղացներ, կալատեղեր, պարտեզներ, բանջարանոցներ և այլն: Բազմաթիվ վանքեր ունեցել են նաև իրենց տասանորդ վճարող գյուղերը: Արեւելյան Հայաստանում, պետականության բացակայության պայմաններում, վանական տնտեսությունները երկրի տնտեսական հիմնական գործոններից էին: Ս. Էջմիածնին և վանքերին պատկանող գյուղերը գործունե կերպով ներգրավված էին երկրի սոցիալ-տնտեսական հարաբերություններում:

Արեւելյան Հայաստանում գյուղատնտեսության հիմնական ճյուղերն էին հողագործությունը՝ ցորենի, կորեկի, քունջութի, բրնձի, բամբակի մշակությունը, լայն տարածում ունեին նաև խաղողագործությունը, անասնապահությունը: Տնտեսության զարգացման և աշխուժացման տեսանկյունից կարեւոր նշանակություն ուներ ջրանցքների համակարգի զարգացումը, ինչին մեծ ուշադրություն էր դարձվում հատկապես ԺԸ. դ.⁴¹: Հակոբ Ջուղայեցի և Սիմեոն Երեւանցի կաթողիկոսների օրոք կարգի է բերվում և զարգանում է Ս. Էջմիածնի ոռոգման համակարգը, լայն տարածում է ստանում հատկապես արտեզյան ջրերի օգտագործումը. բարեկարգվում են գետնափոր ջրերի համակարգերը, կառուցվում են նորերը⁴²: Էջմիածնի ազգաբնակչությանը ապահովելով խմելու և ոռոգման ջրով: Ջրաղացների կառուցումն ու բարեկարգումը խթանում է հատկապես բամբակի մշակումը: Բազմաթիվ ջրամբարների նորոգման վերաբերյալ վկայություններ կան «Ջամբո»-ում: Ուշագրավ են նաև այն տեղեկությունները, ըստ որոնց՝ կաթողիկոսները պարբերաբար պաշտպանել են ինչպես հողերի, այնպես և ջրային ռեսուրսների նկատմամբ Ս. Էջմիածնի իրավունքները՝ իրենց ձեռքի տակ ունենալով համապատասխան փաստաթղթեր, որոնք պարբերաբար նորացվել են Երեւանի պարսից խաների կողմից:

⁴⁰ ՄՄ, «Կաթողիկոսական դիվան», թղթ. 1, վավ. 72, 73, թղթ. 5, վավ. 16 և այլն:

⁴¹ В. Арутюнян, ук. соч., с. 47.

⁴² «Ջամբո», էջ 197:

Արեւելյան Հայաստանի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի կարեւոր բնութագրիչներից մեկն էլ հարկերի գանձման խնդիրն էր: Հիմնական հարկերը, որոնք պետք է վճարեին գյուղացիները, պետությանը տրվող բահրա էր՝ բերքի 1/5 մասը, ավատատիրոջ հարկը՝ բերքի 1/10 մասը, այսինքն՝ գյուղացին վճարում էր իր ամբողջ բերքի 1/3-ը⁴³: Գյուղացիությունը հարկերը հիմնականում վճարում էր բնամթերքով՝ միաժամանակ կատարելով նաեւ պարտադիր աշխատանքներ պետության համար՝ ճանապարհների, կամուրջների, բերդերի, պալատների, ջրանցքների շինարարություն եւ այլն⁴⁴:

Այսպիսով՝ ԺԸ. դ. Արեւելյան Հայաստանում Ս. Էջմիածինը հանդես էր գալիս որպէս հողատեր, ուներ նաեւ բազմաթիվ ջրամբարներ, կառուցում էր ջրաղացներ, ջրանցքներ ու տնտեսական այլ կառույցներ: Ս. Էջմիածին՝ հարկատվությունից ազատ լինելն ու խաղաղ իրավիճակը երկրում բարենպաստ պայմաններ էին ստեղծում տնտեսության զարգացման համար, որն արտահայտվում էր ինչպէս շինությունների նորոգմամբ, վերականգնմամբ, այնպէս եւ բնակչության առավել լայն խավերի ընդգրկումով տնտեսական գործունեության մեջ՝ հողերի վարձակալում, դրամի փոխանություն եւ այլն:

Սիմեոն Երեւանցու գործունեության եւ Ս. Էջմիածնի տնտեսական բարեկեցության տեսանկյունից կարեւոր ձեռնարկումներից էր նաեւ կաթողիկոսությանը պատկանող առաջնորդական ու տերունի վիճակներից, թեմերից ստացվող եկամուտների, նվիրակների գործունեության, իրավունքների եւ այլ հարցերի կարգավորումը, որը պատմական նախորդ իրադարձությունների եւ տիրող խառը ժամանակաշրջանի պայմաններում արդիական խնդիր էր դարձել: Դա նաեւ այն կարեւոր միջոցներից էր, որ մեծապէս ամրապնդում էր Ս. Էջմիածնի տնտեսական դրությունը եւ կանոնակարգում էր ստացվող եկամուտները թեմերից: Այսպէս, 1766 թ. դրությամբ Ս. Էջմիածնի ենթակայության տակ գտնվող թեմերն էին⁴⁵՝

ա. Արեւմտյան Հայաստանի թեմեր⁴⁶՝ Թոխաթ (Եղոկիա), Կարին (Էրզրում), Գաղատիա (Անկյուրիա), Տիգրանակերտ (Դիարբեքիր), Վան,

⁴³ Անդ, էջ 159:

⁴⁴ Հ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 132:

⁴⁵ ՄՄ Հ^տ 9120, 1բ, 2ա, բ, 3ա, բ, 4ա, բ, 5ա:

⁴⁶ Պայմանական դասակարգումը մերն է:

Բայազետ, Կարս (նաև՝ Կոստանդնուպոլիս եւ շրջակա բնակավայրեր, Էդրենե⁴⁷, Իզմիր):

բ. Իրաքի թեմ, որն ընդգրկում էր Բաղդատը, Բասրան, Բենդերաբբասը եւ այլ քաղաքներ:

գ. Հնդկաստանի թեմ, որն ընդգրկում էր հնդկական քաղաքները՝ Կալկաթա, Դաքքա, Մադրաս եւ այլն:

դ. Ղրիմի թեմ, որն ընդգրկում էր նաև բուլղարական, մոլդովական եւ հայաբնակ այլ տարածքներ:

ե. Ռուսաստանի թեմ, որի մեջ էին մտնում Աստրախանը, Մոսկվան, Պետերբուրգը եւ այլն:

զ. Պարսկաստանի թեմ՝ Սպահան (Նոր Ջուղա), Թավրիզ, Գիլան:

է. Վրաստանի թեմ՝ Թիֆլիս, ինչպես նաև՝ Գորի, Կախետ, Նոյնիսձոր եւ այլ բնակավայրեր:

ը. Արևելյան Հայաստանի թեմեր՝ Նախիջևան, Ղափան, Երեւան, Վիրապավանք, Բջնի, Սեւան, Կեչառիս, Սաղմոսավանք, Մուղնի, Գոշավանք եւ այլն:

Հստակ առանձնացվում են Օսմանյան կայսրության, Պարսկաստանի եւ Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող վիճակները (թեմերը), որոնցից, ըստ սահմանված կարգի, Էջմիածնի նվիրակները երեք տարին մեկ հավաքում էին նվիրատվություններ: Այսպիսով՝ հստակ նշվում են եկեղեցական թեմերի սահմանները, նվիրակների իրավունքներն ու պարտականությունները⁴⁸:

Ամփոփելով «Ջամբո»-ի հաղորդումները Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի եւ վանական տնտեսությունների վերաբերյալ՝ կարող ենք ասել, որ հեղինակը աշխատությունը գրել է՝ ձեռքի տակ ունենալով բազմաթիվ նյութեր եւ փաստաթղթեր, որոնք մեծապես արժեւորում եւ կարեւորում են այս երկր: Այստեղ բերված բազմաթիվ տեղեկությունները փաստում են, որ Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի գործունեության շնորհիվ Արևելյան Հայաստանում տնտեսական հարաբերությունները զգալի վերելք են ապրել ԺԸ. դ. երկրորդ կեսին: Իր հերթին Ս. Էջմիածնի եւ այլ վանքերի հողատարածքների, վարելահողերի, այգիների եւ տնտեսությունների ամրապնդումն ու ընդարձակումը զգալիորեն աշխուժացրել են տնտեսական հարաբերությունները Արևելյան Հայաստանում ինչ-որ

⁴⁷ Ադրիանապոլիսն է, որը Կ. Պոլսից առանձնացրել եւ նվիրապետական վիճակ է դարձրել Սիմեոն Երեւանցին:

⁴⁸ «Ջամբո», էջ 52:

չափով նպաստելով տեղի հայ ազգաբնակչության տնտեսական գործունեությանը և որպես դրա արդյունք՝ օտար իշխողների տնտեսական լծի թուլացմանը:

РЕЗЮМЕ

В статье исследованы многочисленные вопросы социально-экономической истории Восточной Армении, монастырских хозяйств, экономической ситуации принадлежащих монастырям земель и поселений, вопросы относительно налоговой системы и налоговых обязательств согласно сведениям «Джамбра» Симеона Ереванци. По многочисленным данным «Джамбра» можно утверждать, что экономические отношения в Восточной Армении всесторонне развивались во второй половине XVIII в. В свою очередь расширение экономики Эчмиадзина и других монастырей во многом способствовало активизации общей экономики и экономической деятельности местного армянского населения, таким образом ослабляя значение иностранного экономического гнета.

SUMMARY

The article is dedicated to investigation of the social-economic history of Eastern Armenia; specifically, it deals with the issues concerning monastery economics, taxation and tax duties, the economic condition of the villages and places belonging to the monasteries, etc. The study is based on various relevant evidences provided by “Jambr” composed by Simeon Yerevantsi. According to such evidences, in the second half of the 18th century, economic relations progressed in Eastern Armenia considerably. The progress of the Monastery of Ejmiatsin and other monasteries, promoted the development of the economic relations of local Armenians, consequently, weakening the economic bondage of foreign rulers.



ՏՈՐԲ ԴԱԼԱԼՅԱՆ

քանասիրական գիտ. թեկնածու

CNRS, UMR 7528,

Mondes iranien et indien, France

«ՎԻՊԱՍԱՆՔ» ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՑԱՎԵՊԻ ԱՎԱՆԴՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Քայ ժողովուրդն իր դարավոր պատմության ընթացքում ստեղծել է մի շարք դիցավեպեր, որոնք գեղարվեստական որակի և պահպանվածության տեսակետից տարբեր չափերով են մեզ հասել: Եթե «Սասնա ծռեր» դիցավեպն առավել ուշ է գրի առնված և, հետևաբար, ամենաշատ պատումներ ունեցողն ու գեղարվեստական ամբողջականությամբ ամենաանխաթարն է, ապա մեր մյուս դիցավեպերը պահպանվել են կամ հատվածաբար, կամ խիստ պատմականացված շարադրանքով, կամ էլ գրեթե միայն անունների մակարդակով: Սա պայմանավորված է այդ դիցավեպերի վաղնջականությամբ, դրանց՝ հին ժամանակներում գրի առնված լինելու հանգամանքով: Այդ հին դիցավեպերի ուսումնասիրման գործում ծագող բնական դժվարությունները հաղթահարելու համար էպոսագետի հմտություններին պետք է ավելանան նաև համեմատական դիցարանի, պատմաբանի, լեզվաբանի միջգիտակարգային հետազոտությունները: Հաճախ պատառիկների տեսքով պահպանված դիցավեպերի ուսումնասիրությունը հենվում է գիտական վերակազմությունների և պատմա-համեմատական նյութի վրա:

Հայոց հնագույն դիցավեպը Հայկի և Նրա սերունդների մասին պատմող ազգածնական ասքերն են, որոնք, փաստորեն, պահպանվել են գրեթե միայն անունների, տեղանունների և ցեղանունների մակարդակով: «Հայկյանների» այս դիցավեպի առասպելներից մեզ են հասել միայն Հայկի ու Բելի, Արամի և Արա Գեղեցիկի մասին պատմվող հատվածները՝ այն էլ խիստ պատմականացված մշակմամբ: Մար Արաս Կատինայի և Մովսես Խորենացու պատմական շարադրանքներում ընդգրկված

այդ հատվածները փոխանցվել են գրական ճանապարհով և ներկայումս բավական դժվար է հստակ որոշել, թե որ դարաշրջանում են դրանք գրի առնվել, մինչև էր են պատմվել ժողովրդի մեջ, ինչ գեղարվեստական ձևերով ու հնարանքերով են վիպասվել:

Միայն Արամին վերաբերող ավանդագրույցների վերաբերյալ է Խորենացին մի տեղ նշում. «Որպես Մար Աբաս Կատինայ պատմե՛ ի փոքունց ոմանց և յաննշանից արանց, ի գուսանականն այս գտանի ժողովեալ ի դիւանի արքունեաց»¹: Ուշագրավ է այստեղ ժողովրդական դրուցագներ-գություններին տրվող բնորոշումը՝ «գուսանական» գոյականական գործածությամբ. ասել է թե՛ արքունական դիվանի մեջ Արամի քաջագործությունների մասին պատմող գրավոր հիշատակությունները քաղված էին գուսանական երգերից, որոնք, փաստորեն, վերաբերում էին «Հայկյանների» հնագույն դիցավեպին: «Փոքր և աննշան» մարդիկ այդ երգվող դիցավեպից կամ դրա երգվող հատվածներից հավաքել էին Արամի մասին պատումները և գետեղել Մծբինի թագավորական արխիվում՝ դիվանում, իսկ Մար Աբասն էլ հետագայում օգտվել էր դրանցից: Մանուկ Աբեղյանը կարծում է, թե այս «գուսանականն» ընդգրկել է Հայկից մինչև Արամ բոլոր հերոսների սխրագործությունները, իսկ «փոքր և աննշան» մարդիկ բնորոշումը, Աբեղյանի կարծիքով, վերաբերում է հենց գուսաններին, մինչդեռ քաղողները կարող էին «շատ նշանավոր եղած լինել»²: Սակայն Ստեփան Մալխասյանցի՝ աշխարհաբար վերածման համաձայն՝ «փոքր և աննշան» մարդիկ պարզապես «գուսանականից» քաղել էին նշված ավանդագրույցները³:

Խնդիրը փոքր-ինչ այլ է «Վիպասանք» դիցավեպի պարագայում: Կարելի է ասել, որ այն մեր հնագույն գրի առնված դիցավեպն է՝ անշուշտ կրկին Պատմահայր Մովսես Խորենացու պատմական աշխատության մեջ վկայված: Այստեղ արդեն ունենք դիցավեպից պահպանված ամբողջական բանաստեղծական պատառիկներ, որոնք հարազատորեն ներկայացնում են տվյալ ժամանակաշրջանի որոշ ասքերի ժողովրդական բնույթը: Ինչպես նշում է Հր. Աճառյանը, փոխանցված հատվածների լեզուն ակնհայտորեն հարազատ է ժողովրդական երգիչների լեզվին, և մեծ է

¹ «Մովսիսի Խորենացու Պատմութիւն հայոց» (քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի), Երևան, 1986, Ա. ԺԴ., էջ 58-59:

² Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ, Երկեր, հ. Ը., Երևան, 1985, էջ 267-269:

³ Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., էջ 58-59:

տարբերությունը Խորենացու «հետմետրոպայան լեզվից»⁴: Խորենացու հաղորդած պատառիկներից զատ, հայտնի են նաև ավելի ուշ ժամանակներում Գրիգոր Մագիստրոս Պաղիապոտոս գրանցած բանաստեղծական մի պատառիկ եւ Թովմա Արծրունու հաղորդած մի քանի առասպելական գրույցներ, որոնք նույնպես վերաբերել են «Վիպասանքին»:

Փաստորեն, մետրոպայան գրերի գյուտով սկիզբ առած հայ միջնադարյան իրականության մեջ Մովսես Խորենացին է, որ հավակնում է առաջին բանահավաքն ու բանագետը լինելու պատվին: Նա իր «Հայոց պատմության» մեջ ոչ միայն մոռացության կորստից փրկել է չափազանց արժեքավոր բանահյուսական գոհարներ, այլեւ փորձել է դրանք մեկնաբանել ու վերլուծել, այսինքն՝ այն ժամանակվա գիտության չափանիշներով արժեւորել է իր կամ այլոց գրանցած բանավոր ստեղծագործության նմուշները: Ինչպես գրում է Սարգիս Հարությունյանը, Խորենացին իր «Պատմությանը» հանդես է գալիս «իբրեւ հին վիպա-ավանդական հուշարձանների թն՝ հավաքող ու գրառող, թե՛ մեկնաբանող ու արժեւորող եւ թե՛ գեղարվեստական վերամշակող. հանգամանքներ, որոնցով նա դառնում է բացառիկ դեմք հայ հին մշակույթի պատմության մեջ»⁵:

Թեև Խորենացին գրում է, որ «Վիպասանքի» դրվագները պատմվում կամ երգվում էին ժողովրդի մեջ, սակայն, ըստ երևույթին, մեծ մասամբ ինքն անձամբ չի ժողովել այդ պատումները: Զորօրինակ, Տիգրան Երվանդյանի վերաբերյալ երգերի մասին հաղորդելիս՝ Պատմահայրը գրում է անցյալ ժամանակով. «...գորմ է ասելին ի հինսն մեր, որք փանդոամբն երգէին...», այն է՝ «որի մասին պատմում էին մեր հները՝ նախնիները, որոնք երգում էին փանդիոներով»⁶: Այստեղից Մանուկ Աբեղյանը ենթադրել է, որ Խորենացին ունեցած է եղել մի գրավոր աղբյուր, որի մեջ հավաքված են եղել մեր «հների» ավանդագրույցները⁷:

Մինչդեռ, օրինակ, Տիգրանի որդու՝ Վահագնի մասին Խորենացին հատուկ շեշտում է, որ ինքն է լսել իր ականջով, թե ինչպես են փանդիոներով գովերգում նրա հերոսապատումները: Վահագնի դիցաբանական ծնունդը նկարագրող հայտնի բանաստեղծական պատառիկը («Երկնէր երկին, Երկնէր երկիր...») մեջբերելուց հետո Խորենացին գրում է. «Զայս

⁴ Հր. Աճառյան, Վիպասանական հայերեն. Հայոց լեզվի պատմություն, մաս Բ., Երևան, 1951, էջ 71:

⁵ Ս. Հարությունյան, Մովսես Խորենացին եւ հին հայոց վիպական ավանդությունը, ՊԲՀ, թ. 1 (132), 1991, էջ 41-42:

⁶ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., Ա. ԻԴ., էջ 86:

⁷ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 217-218:

երգելով ունանց փանդոամբ, լուաք մերովք իսկ ականջօք: Յետ որոյ եւ ընդ վիշապաց ասէին յերգին կոռուել նմա եւ յաղթել, եւ կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակութիւնսն նմա երգէին»⁸: Այսինքն՝ Խորենացին փանդիոնների նվագակցությամբ լսել է ոչ միայն «Վահագնի հիմներ», այլեւ վիշապների դեմ նրա պայքարի մասին պատմող առասպելական երգերը եւ Հերակլեսի սխրագործությունները հիշեցնող այլ երգվող հատվածներ, որոնք, ցավոք սրտի, չի հաղորդել իր Պատմության մեջ, քանի որ, ըստ երեւոյթին, դրանք համարել է զուտ առասպելաբանություն եւ ուստի՝ պատմագրության համար անպիտան:

Ամեն դեպքում, Վահագնին վերաբերող հատվածներն իրականում պետք է որ «Վիպասանքի» հնագույն տարբերակի մաս կազմած չլինեին, քանի որ արդեն, ինչպես երևում է նրա ծննդյան չափածո նկարագրության մեջ՝ Վահագնը ոչ թե Տիգրանի որդին էր համարվում՝ ըստ հայ դիցաբանության, այլ՝ տիեզերական չորս տարրերի (երկինք, երկիր, ծիրանի ծով եւ եղեգնիկ): Մ. Արեղյանը բերում է նաեւ այլ հնդեւրոպական գուգահեոներ, որոնցում ամպրոպային աստվածը համարվում է նշված չորս տարրերի ծնունդը⁹:

Փաստորեն, «Վահագնի հիմներ» միակ դեպքն է, երբ վստահաբար կարող ենք ասել, որ Պատմահայրն անձամբ լսել եւ գրի է առել որպէս մեր հին առասպելական երգերի մի նմուշ: Այնինչ, «Վիպասանք» դիցավեպի առաջին կերպարների՝ Տիգրանի եւ նրա հակառակորդի՝ Աժդահակի մասին առասպելական պատմությունը Խորենացին վերցրել է մի գրավոր աղբյուրից, որը կոչվում էր «Հիսուսն պիտոյից» կամ «Չորս հագներգութիւնք»¹⁰:

Նմանապէս, Երվանդի եւ Երվագի ու Արտաշեսի հետ նրանց հակամարտության մասին պատմող ավանդազրույցները Խորենացին քաղել է մեկ այլ գրավոր աղբյուրից՝ Հանիի Ողյումպ (=Olympe) քրմի մեհենական պատմություններից, սակայն Պատմահայրը հավելում է, որ այդ զրույցների մասին վկայում են նաեւ հայոց վիպասանների, այն է՝ գուսանների երգերը. «Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիւմպ քուրմ Հանւոյ, գրող մեհենական պատմութեանց, եւ զայլ բազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաջի, որում եւ Պարսից մատենանքն վկայեն եւ Հայոց երգք վիպասանաց»¹¹: Այստեղ, սակայն, դժվար է հաստատապէս պնդել, թե «երգք վի-

⁸ Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., Ա. ԼԱ., էջ 102:

⁹ Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 110-113:

¹⁰ Անդ, էջ 213:

¹¹ Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., Բ. ԽԹ., էջ 208:

պասանացր» անմիջականորեն կապվում են Երվանդի ու Երվագի անունների հետ, քանի որ Խորենացու այդ բացատրություն-հավելումը կարող էր պարզապես վերաբերել մեհենական պատմություններին ընդհանուր առմամբ:

Գալով «Վիպասանքի» մյուս երգերին ու պատումներին՝ Արտաշեսի եւ Սաթենիկի, Արտավազդի եւ Արգավանի մասին, նշենք, որ դրանք թեպետեւ ծանոթ են եղել Պատմահայր Խորենացուն, բայց ինքն անմիջականորեն ժողովրդից չէր լսել, այլապես չէր գրի. «Յայտնեն գայս ճշմարտապէս եւ թուեկացն երգք, զոր պահեցին ակորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն գինեւէտ գաւառին Գողթան»¹²: Այսինքն՝ Մովսէս Խորենացին լսել էր ուրիշներից, որ գինեւէտ եւ հավանաբար խնջույքասեր Գողթն գավառի կողմերի մարդիկ հաճույքով պահում էին նշված առասպելական երգերը: Մեկ այլ տեղում նույնպես, Արտաշես «Վերջինի» մասին պատմելիս, Խորենացին գրում է. «Արտաշիսի Վերջնոյ գործք՝ բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան...»¹³: Սրանով Պատմահայրն ակնարկում է, որ իր նվիրատուն՝ Սահակ Բագրատունին եւս ծանոթ է եղել «Վիպասանքի» պատումներին՝ վիպասանություններին, որոնք պատմվում էին Գողթնում:

Ուստի եւ Մ. Աբեղյանի կարծիքով՝ Արտաշեսի եւ Սաթենիկի, Արտավազդի եւ Արգավանի վերաբերյալ երգերի որեւէ ժողովածու է ծանոթ եղել Խորենացուն, իսկ այդ հին երգերի՝ Գողթն գավառում պահված լինելը Պատմահայրը գիտեր միայն ուրիշներից լսած լինելով¹⁴: Սարգիս Հարությունյանն այս ենթադրությունը համարում է հավանական, սակայն չի պնդում նման վարկածի իսկությունը¹⁵:

Դատելով Խորենացու ավանդած բանաստեղծական պատառիկներից՝ «Վիպասանքի» պատումների գոնե որոշ հատվածներ երգվել են հայ գուսանների կողմից: Երբեմն դա կատարվել է փանդիո լարային գործիքի նվագակցությամբ՝ ինչպես, օրինակ, Տիգրան Երվանդյանի մասին պատմող երգերի դեպքում¹⁶: «Վիպասանքից» մեջբերած մյուս բոլոր երգերի դեպքում Խորենացին չի մանրամասնում, թե արդյո՞ք դրանք երգվել են որեւէ գործիքի նվագակցությամբ: «Հայկյան» դիցապեղից Արամի սխրանքների մասին գրելիս նույնպես՝ Խորենացին չի մանրամասնում,


¹² Անդ, Ա. Լ., էջ 98:

¹³ Անդ, Բ. ԽԹ., էջ 208:

¹⁴ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 217-218:

¹⁵ Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 37:

¹⁶ Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., Ա. ԻԴ., էջ 86:



Նկ. 1. Լարային կամիթավոր նվագարանների պատկերներ հայ միջնադարյան մանրանկարներից (ըստ Ա. Փափկանյանի (խմբ.), Հայկական ժողովրդական նվագարաններ, Երևան, 2008, էջ 16)

թե «գուսանականից» քաղված այդ պատումները ժամանակին, նախքան գրի առնվելը, արդյոք ընկերակցվել են որեւէ նվագարանով: Սակայն Նոյի եւ նրա որդիների մասին տարբեր աղբյուրներից հավաքած բանավոր գրույցների մասին գրելիս՝ Խորենացին հավելում է, որ «առաւել յաճախագոյն հինքն Արամագնեայց ի նուագս փանդոան եւ յերգս ցցոց եւ պարուց գայտսիկ ասեն յիշատակաւ»¹⁷:

Ըստ երեւոյթին, հայոց վիպական երգերը, այդ թվում «Վիպասանքի» չափածո հատվածները, հիմնականում կատարվել են տղամարդկանց կողմից: Համենայն դեպս, թե՛ Հայաստանում, թե՛ Կովկասում որեւէ գրավոր փաստ մեզ հայտնի չէ վիպասաց-գուսանի՝ կին լինելու վերաբերյալ: Դիցաքանական ընկալմամբ՝ վիպասաց-կատարողը հանդես է գալիս իբրեւ արարիչ, որը յուրաքանչյուր վիպասացության ընթացքում նորից-նոր ստեղծում-արարում է առասպելաբանական գործողությունների շղթան: Եթե վիպասացությունն ուղեկցվում է նվագարանի երաժշտությամբ, ապա այս բանաստեղծական արարմանն ավելանում է նաեւ նվագարանագործի կերպարը: Իդեալական տարբերակով՝ երաժիշտ-կատարողի կերպարը նույնացվել է նվագարանագործ-վարպետի կերպարին: Ըստ այդմ, նվագարանի պատրաստումն ինքնին եւ հետո արդեն նաեւ այն նվագելը ընկալվել են որպես արարչագործական ընթացք, որի մեջ առկա են եղել տիեզերքի բոլոր տարրերը, նյութերը, արարածների մարմնի մասերը, եւն¹⁸:

Հետաքրքրական է, որ հնում յուրաքանչյուր առանձին երաժշտական գործիք համեմատվել է մի մարմնամասի հետ. փողը՝ կոկորդի, սրինգը՝ ընչանցքների, թմբուկը՝ մարմնի զանգվածի հետ, իսկ տավիղն ու քնարը խորհրդանշել են միտքն ու հոգին¹⁹: Այդպիսով, զարմանալի չէ, որ հենց տավիղն ու քնարը կամ դրանց լարային այլ տարատեսակներն են դարձել վիպական պատումների անբաժան ուղեկիցը: Ընդ որում, սույն հոդվածի նյութի հետ կապված՝ պետք է հաշվի առնել, որ տավիղը, քնարը եւ ջնարը դեռեւս Ք. ա. Գ.-Բ. հազարամյակներում կիրառվել են Հայկական լեռնաշխարհում եւ հարակից տարածքներում²⁰: Քնարի կամ տավիղի տիպի

¹⁷ Անդ, Ա. Զ., էջ 32:

¹⁸ Հ. Պիկիցյան, Նվագարանագործ վարպետը՝ արարիչ. Հայ ժողովրդական մշակույթ, Հանրապետական գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ (խմբ.՝ Ս. Հարությունյան, Ս. Վարդումյան), թ. 10, Երևան, 1999, էջ 62-63:

¹⁹ Հ. Պիկիցյան, Սրբավայրի տարածքի երաժշտական եւ վարքագծային ծածկագրերը. Հայոց սրբերը եւ սրբավայրերը (ակունքները, տիպերը, պաշտամունքը) (խմբ. Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան), Երևան, 2001, էջ 409:

²⁰ Ա. Բոբոյսյան, Դիտողություններ բրոնզեդարյան Հայաստանի երաժշտության եւ երա-

գործիք է նշմարվում Գեղամա լեռների ժայռապատկերներում՝ ծիսական պարի մի պատկերում (Ք. ա. Գ.-Բ. հազարամյակներ). մեկլարանի, հինգլարանի, յոթլարանի քնարներով պատկերներ են հայտնի Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններից²¹:

Վերադառնալով «Վիպասանքին» եւ նրա ստեղծման ժամանակաշրջանին՝ հարկ է նշել, որ երաժիշտ-կատարողն այն դեպքերում, երբ վիպասել է փանդիո նվագարանի ընկերակցությամբ, ըստ էության, «արարել» է ոչ միայն խոսքի միջոցով, այլեւ անմիջականորեն իր մատներով: Դիցաքանական ընկալմամբ՝ նվագարանն իր մեջ ամփոփել է ողջ աշխարհը եւ բոլոր իրադարձությունները՝ սաղմնային վիճակում, իսկ վիպասաց-գուսանը մատների հպումներով կանոնավոր ձեւ է տվել այդ վիճակին եւ «արարել» «Վիպասանքը»:

Ըստ Մ. Արեղյանի՝ հայոց մեջ «Վիպասանքը» սկզբնապես չափածո տեսքով պարունակել է «փոքր քերթվածներ ու գրույցներ հերոսների ու նրանց քաջագործությունների մասին»: Ժամանակի ընթացքում այդ անջատ պատմական երգերն ու ավանդությունները, հարելով իրար, առաջ են բերել «Վիպասանքը», որը Մովսես Խորենացու կողմից կոչվում է նաեւ «Վիպասանութիւն», «Երգք առասպելաց», «Երգք վիպասանաց» կամ «Երգք թուրեկաց»²²: Այս վիպաշարն արդեն, Արեղյանի կարծիքով, հիմնականում պատմվել է, գրաբարյան բառեզրով ասված՝ «թիվ է ասվել», թեւեւ եղել են նաեւ երգվող հատվածներ:

Հր. Աճառյանը, սակայն, «Վիպասանք» դիցավեպը կոչում է դյուցազներգություն եւ կարծես հակված է համարելու, որ այն ամբողջովին՝ ծայրեծայր երգվել է: Սա միանգամայն հնարավոր եւ իրատեսական վարկած է²³: Բացի այդ հարկ է հիշել այն հետաքրքիր փաստը, որ գրաբարում երգել նշանակել է նաեւ «նվագել»²⁴: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարելի է ենթադրել, որ այն դեպքերում նույնպես, երբ Պատմահայր Մովսես Խորենացին հիշատակում է վիպասացների երգերի մա-

ժիշտների վերաբերյալ. Հայ ազգաբանության եւ հնագիտության խնդիրներ, թ. 3, Երեւան, 2007, էջ 8-9:

²¹ Ա. Բոքոլյան, Բրոնզեդարյան Հայաստանի երաժշտական գործիքները. Շնորհի ի վերստ. առասպել, ձեւ, պատմություն (հողվածների ժողովածու՝ նվիրված Մարգիս Հարությունյանի 80-ամյակին), կազմող եւ խմբագիր՝ Ա. Պետրոսյան, Երեւան, 2008, էջ 241:

²² Մ. Արեղյան, Հայ վիպական բանասիրություն. Երկեր, հ. Ա, Երեւան, 1966, էջ 97:

²³ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 65:

²⁴ Լ. Հովհաննիսյան, Երաժշտություն իմաստային խմբի բառերը գրաբարում. Ջահուկյանական ընթերցումներ-2007 (հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ), Երեւան, 2007, էջ 101:


սին՝ առանց փանդիո նվագարանի մասին գրելու, հնարավոր է, որ այդ երգերն ուղեկցվել են փանդիոյի նվագով: Մանավանդ, պետք է ի նկատի ունենալ, որ գործ ունենք մեկ ընդհանուր վիպաշարի՝ այսպես կոչված «Վիպասանք» դիցավեպի հետ, եւ ուստի տրամաբանական կլիներ, եթե այդ դիցավեպի երգվող հատվածները ավանդվեին միեւնոյն եղանակով:

РЕЗЮМЕ

«Випасанк» - первый сохранившийся армянский эпос, некоторые поэтические отрывки которого были зафиксированы еще в V веке, в «Истории Армении» Мовсеса Хоренаци. В большинстве случаев Хоренаци черпал эти отрывки из различных письменных источников. Наряду с названиями некоторых из этих источников, он передает уникальные сведения об армянских средневековых бардах, которые вплоть до его дней исполняли различные мифические и исторические песни из «Випасанка» под аккомпанемент музыкального инструмента пандир - разновидности арфы или виолы. В статье анализируются все древнеармянские пассажи Хоренаци, касающиеся устных и письменных источников «Випасанка», также обсуждается мифологический образ музыканта-сказителя древнего эпоса.

SUMMARY

“Vipasank” was the first preserved Armenian epic some poetic fragments of which were recorded as early as the 5th century, in the “Armenian History” by Movses Khorenatsi. In most cases, Khorenatsi extracted these fragments from various written sources. Along with the names of some of these sources he transmitted a unique information about the Armenian medieval bards who performed until his days various mythical and historical songs from “Vipasank”. They did it by the accompaniment of pandir, a musical instrument, variety of harpe or viola. In this paper we analyse all the classical Armenian passages of Khorenatsi concerning the oral and written sources of “Vipasank”, as well as the mythological image of the musician-reciter of the ancient epic.



ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

պարունական գիրք. թեկնածու, ՀՊՄՀ

ԷԴՈՒԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

պարունական գիրք. թեկնածու, ՀՊՄՀ

ՆՈՐՍԵՐՆԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՎԱՆՈՒՄ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը եւ հաստատված հարաբերական «ազատությունը» որոշ աշխուժացում, միաժամանակ սրացում մտքեցին Վանի նահանգի ինչպես քաղաքական գործունեության, այնպես էլ հասարակական-կրթական ասպարեզում:

Հեղաշրջման նախօրյակին Վանում տարածում էր գտել «ղաշնակցութեան ձեռքով պատրաստուած» եւ իր բնույթով համայնավարական «նորսերնդական» շարժումը, որն օգտագործվում էր արեւմտահայ հասարակության ավանդապահության եւ հայ հոգեւորականության դեմ պայքարում¹:

Շարժումն այդպես էր կոչվում, որովհետեւ նրա գաղափարակից «խելակորոյս դպրոցական պատանիներ»-ը հետեւում էին 1906 թ. նոյեմբերից Վանում հրատարակվող «Նոր սերունդ» երկշաբաթյա խմորատիպ թերթի գաղափարներին, որը լույս տեսավ ընդամենը 15 ամիս:

«Նորսերնդական» շարժումը Վ. Փափագյանի (Կոմսի) կարծիքով հետեւանք էր դաշնակցականներ Սարգիս Բարսեղյանի (Նիկոլ, Պողոս Օղաբաշյան) եւ Արամ Մանուկյանի նորամուծության²:

Սակայն, ըստ դաշնակցական այլ սկզբնաղբյուրների³, շարժումը սկզբնավորվել էր 1906 թ. աշնանը՝ Վան ժամանած երիտասարդ դաշնակցականներ Վազգենի եւ Զավենի կողմից, որոնց մասին Արամը գրում էր,

¹ Ա. Համբարյան, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը, Երևան, 1979, էջ 615:

² Վ. Փափագեն, Իմ յուշերը, հ. Ա., Պոսթրն, 1950, էջ 358, 485-486:

³ Ռ. Տեր-Մինասյան, Հայ յեղափոխականի մը յիշաասկները, հ. Ե., Տարօնէն Թիֆլիս (1908-1909), Լու Անճէլըս, 1951, էջ 299 եւ 51:

որ «դեռ կաթը բերաններին էր»⁴: Միաժամանակ, նորսերնդականներին նա անվանում էր «հեղափոխության համար վստահելի», «լավ տղաներ» եւ «...մեր հաջորդներ», որոնց վրա կարելի էր հույս դնել⁵: Այդպիսի «լավ» տղաներից էր Տաճատ Թերլեմեզյանը, որն ավելին արեց, քան փորձառու ահաբեկիչները եւ զինական խմբերը, իսկ 1908 թ. սպանեց մատնիչ Դավոյին⁶: Նրանցից Վազգենն առանձնանում էր իր կծու եւ անվախ քննադատությամբ: Զավենը (Լորդ), որն աչքի էր ընկնում իր բուռն, անկեղծ, խելացի խառնվածքով եւ պատրաստվածությամբ, ըստ Արամի, Երեւանից Սալմաստի վրայով անցնելով Վան, մեծ դեր էր կատարել Վանի երիտասարդության շրջանում⁷: Իսկ Սարգիսն էլ իրեն հատուկ եռանդով ձեռնամուխ էր եղել քարոզչական աշխատանքի կազմակերպմանը: Ռուսական հեղափոխության եւ ձեռք բերած շվեյցարական կրթության ազդեցության տակ նա պարբերաբար դասախոսություններ էր կարդում հասարակական, պատմական եւ ընկերվարական գիտություններից⁸:

Նորսերնդական շարժման ծավալումը գուցադիպեց Կովկասում լույս տեսած եւ Երկիր ներմուծված ընկերվարական-հեղափոխական առատ գրականության տարածման եւ թերուս երիտասարդների շրջանում մտավորականների եւ ուսանողների կողմից կազմակերպված դասախոսությունների անցկացման հետ: Ինչպես Ա. Փոխարյանն է նշում, «...պրոպագանդի համար գործադրված զանազան ձեռնարկումներ՝ թատրոններկայացում, ժողով, օրակարգ, կարծիքների փոխանակություն եւ այլն, ծառայում էին հասունացնելու եւ խորացնելու հեղափոխական գիտակցությունն ու դաստիարակությունը հայ ժողովրդի մեջ»⁹:

Այդ նույն շրջանում Էջմիածնի ճեմարանի տասնյակ վասպուրականցի երիտասարդ ուսանողներ, որոնց թվում էին Համազասպ Բաղեշյանը, Ղևոնդ Մելոյանը, Արտակ Դարբինյանը, Հայրապետ Պանիրյանը, Թովմախյան եղբայրները, Համբարձում Հացագործյանը, Հայկակ Կոստյանը, Միհրան Թերլեմեզյանը, Վարազդատ Տերոյանը, Արմենակ Մաքսապետյանը, ոգևորված եւ տոգորված հայրենիքին ծառայելու ցանկությամբ՝ վերադարձան Վան՝ լծվելով նրա կրթական-հեղափոխական կենսական գործի կազմակերպմանը, քանի որ «մտածումներու վրայ առաջ եկած յե-

⁴ «Արամը. մահուան յիսնամեակին առթիւ», Երեւան, 1991, էջ 374:

⁵ Ռ. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., հ. Դ., Տարօնի աշխարհը (1906, 1907, 1908), էջ 240, 243:

⁶ Անդ., էջ 243:

⁷ «Արամը», նշվ. աշխ., էջ 376:

⁸ Վ. Փափագեան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 481:

⁹ «Վան-Վասպուրականի հերոսամարտը. 75», Երեւան, 1990, էջ 14:

ղափոխությունը նույնքան ուժեղ եղաւ, որքան գէնքին ծառայելու հաւատամքը»¹⁰:

Գաղափարական քարոզչությանը նպաստեց նաեւ վանեցու որոնող, հարցամուկ, հափշտակվող եւ ծայրահեղությունների գնացող բնավորությունը¹¹:

Դպրոցն ու հեղափոխությունը, մեկը մյուսին լրացնելով, ձեւավորեցին մի սերունդ, որը որոշակի գիտակցություն ու ըմբռնում ուներ կրթական, հանրային, քաղաքական, տնտեսական, ընկերային-հեղափոխական հարցերի մասին:

Նորսերնդականները, որոնց թիվը Վանում չէր անցնում 30-ից, երկուերեք տարվա ընթացքում տվեցին երեք սերունդ, որոնցից առաջինը 18-20 տարեկաններն էին, երկրորդը՝ 16-18, իսկ երրորդը՝ 14-16¹²:

Նրանց մեջ էին Վանի Երամյան եւ Կեղրոնական վարժարաններն ավարտած նորահաս երիտասարդներ Հմայակ Խոռոզյան-Մանուկյանը (խմբագիր), Մանվել եւ Բարունակ Կապուտիկյանները, Գալուստ Էյնաթյանը, Արամ Սաֆրաստյանը, Խոսրով Խանջյանը, ավելի կրտսեր սերնդի ներկայացուցիչներ Ներսես Պապյանը, Պարգեւ Պանիրյանը, Մանուկ Աւլանյանը, Տիգրան Զրբաշյանը, Արտաշես Հացագործյան-Վանարյանը եւ ուրիշներ¹³: Նրանք հպարտությամբ նշում էին, որ հասարակությունը «կը բիրդացնենք»¹⁴:

Նորսերնդականությունը Վանը բաժանել էր երկու մասի եւ իր արմատներն էր գցել Վանի, մասամբ նաեւ Շատախի եւ Աղթամարի արտադպրոցական «գրոց-բրոց» պատանեկության եւ Երամյան ու Կեղրոնական միջնակարգ դպրոցների նորահաս աշակերտության շրջանում, որոնք կարիք ունեին մտավոր եւ հոգեւոր սննդի, ազատական գաղափարների եւ պահանջ էին զգում իրենց մտքերը, համոզմունքները եւ տեսակետները արտահայտելու, քանի որ հեղափոխական գործնական ձեռնարկները չէին կարող հագուրդ տալ նրանց երիտասարդական հախուռն ձգտումներին եւ որոնումներին:

Արդյունքում Վանում, Աղթամարում եւ Շատախում նրանք սկսեցին հրատարակել «Կոիվ», «Տիգրիս», «Ծովակ», «Հայացք», «Կոչնակ», «Եր-

¹⁰ «Յիշատակարան նուիրում 1896-ի եւ 1915-ի Վասպուրականի հերոսամարտերուն», Հիւս. Ամերիկա, 1945, էջ 40:

¹¹ Վ. Փափագեան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 488:

¹² «Յիշատակարան նուիրում 1896-ի եւ 1915-ի Վասպուրականի հերոսամարտերուն», էջ 40:

¹³ Վ. Փափագեան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 486:

¹⁴ Ռ. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., հ. Դ., Տարօնի աշխարհը (1906, 1907, 1908), էջ 242:

կունք», «Ձգտում» եւ «Գավառի ձայն» խմորատիպ թերթերը, որոնց բոլորի նպատակն էր, Ա. Փոխարյանի համոզմամբ, «մի ուժեղ հեղաշրջում առաջ բերել իր շրջապատի քարացած համոզումների, նախապաշարմունքների ու հետադիմական խավարի մեջ»¹⁵:

Կովկասյան հեղափոխական իրադարձությունների ազդեցության տակ գտնվող, գրքային պատկերացումներով առաջնորդվող եւ տեսական որոշակի հայացքներով զինված այդ գործիչներն իրենց ապագգային բնույթ կրող ծայրահեղ եւ անհեթեթության հասնող սոցիալ-անիշխանական դավանանքը, համայնավարական եւ հակակրոնական ողջ գաղափարներն ու պատգամները փորձում էին տարածել արեւմտահայ իրակաւության մեջ՝ ներարկելով պահպանողականության դեմ պայքարի ոգի: Նրանք ցանկանում էին ձերբագատվել «պայմանադրական յետամնաց կեանքէն», նահապետական-ավանդական ըմբռնումներից, ազգային սովորույթներից եւ նախապաշարմունքներից, մի բան, որը չէր համապատասխանում ո՛չ իրականությանը, եւ ո՛չ էլ Վանի հասարակական-քաղաքական պայմաններին: Արդյունքում «կովկասահայ յեղափոխական գրականութիւնը արթնացուցած ու ելքտրականացուցած էր վանեցի երիտասարդութիւնն ու պատանեկութիւնը» եւ Վանի աշակերտությունը եւրոպական ուսանողության «չափանիշներով» «գաղափարի փոթորիկներու ներթարկուեցաւ»¹⁶:

Նորսերնդականները, որոնք 1909 թ. հրատարակում էին «Հորձանք» թերթը, հասարակական կյանքի խթանիչներ էին համարում սոցիալ-տնտեսական գործոնները, եւ գտնում էին, որ «հեղափոխությունն առանց նպատակի եւ հեղինակության» կարգախոսը եւ հեղափոխական ձեռնարկումները պետք է ծառայեին համամարդկային նպատակներին:

Ըստ նորսերնդականների՝ ընկերային եւ տնտեսական գործոններն էին, որ տիրապետում էին մարդկության կյանքի ընթացքի վրա, որոնք անհրաժեշտ էր փոխել: Քաղաքական նպատակները եւ հեղափոխական ձեռնարկները միջոցներ էին միայն հասնելու համամարդկային բարձր նպատակին¹⁷:

Նորսերնդականներն այսպես էին ներկայացնում իրենց գաղափարախոսության համառոտ էությունը. «Այն, որ կանգնած է եւ անկարող շարժուելու ժամանակի պահանջը ըմբռնելով, ան հին սերունդ է, անկախ իր

¹⁵ «Վան-Վասպուրականի հերոսամարտը. 75», էջ 14:

¹⁶ «Յիշատակարան նուիրում 1896-ի եւ 1915-ի Վասպուրականի հերոսամարտերուն», էջ 40:

¹⁷ Վ. Փափագեան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 486:

տարիքէն եւ ծառայութիւններէն. ան որ առանց կաշկանդումի, առանց նախապաշարումներու առաջ կ'երթայ, այդ Նոր Սերունդն է: Այդ սերունդին ուրեմն կրնան անդամ համարուիլ եւ տարիքատուրները»:

«Ով էլ որ լինի, երբ մեռաւ, կը թաղեն եւ քար կը քաշեն վրան. այդ անշարժ քարին այլեւս չեն կապուիր, քանի որ պէտք է առաջ գնալ»:

«Մեղորը, կաթը անհրաժեշտութիւն են մեր աճման համար, բայց երբ անոնք հատնին, այլեւս դատարկ ամանները աղբանոց կը նետեն»¹⁸:

Նրանք հանդես էին գալիս կրօնի, եկեղեցու բարոյականության, ընտանեկան ավանդույթների, բարքերի, ծնողների, հարուստների, ուսուցիչների դէմ՝ կոչ անելով անսահմանափակ ազատություն, ընտանիքի վերացում եւ «ազատ սեր»¹⁹:

Նորսերնդականների կարծիքով պետական, կրօնական, դասակարգային եւ ընտանեկան սահմանները մարդկությանը կաշկանդող շղթաներ էին, որոնք պետք էր ոչնչացնել²⁰: Ըստ նրանց՝ կրօնը եկեղեցական ավանդույթները անդամալուծող նախապաշարում էր, իսկ կղերականները՝ ձրիակեր պորտաբույծներ:

Նրանք գտնում էին, որ ծնողներին մատուցած հարգանքը հատուկ է ստրուկներին, քանի որ մարդն անկաշկանդ է, իսկ նրա ազատությունն անսահման:

Նորսերնդական «անբարոյական խառնակիչներ»-ը գտնում էին, որ պետք էր անկաշկանդ թողնել սիրո գաղափարը՝ արհամարհելով ինչպես արյունակցական, այնպես էլ ազգակցական կապերը: Բանը հասավ այնտեղ, որ նորսերնդականներին համախոհ Դ. Մելոյանը գրեց «Մայրը» խորագրով «ախտաբանական մանրավէպ»-ը, որտեղ տղան սիրահարվում է իր մորը²¹:

Կարծում ենք, որ սիրո ազատության հարցում նորսերնդական գաղափարները կարծես թե հարում էին Դ.-Ե. դդ. Հայաստանում տարածված մծղնեական աղանդավորական շարժմանը եւ գրեթե ամբողջությամբ կրկնում էին այն:

Նրանք, Ա. Եկարյանի համոզմամբ, «կատարեալ այլասերած անիշխանականներ» էին, որոնց մեջ չէին պահպանվել ինչպես ծնողի եւ զավա-

¹⁸ Անդ, հ. Ա., էջ 242-243:

¹⁹ Ռ. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., հ. Դ., Տարօնի աշխարհը (1906, 1907, 1908), էջ 241-242:

²⁰ Անդ, էջ 242:

²¹ Վ. Փափագեան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 489:

կի, այնպես էլ քույր ու եղբոր հարաբերությունները եւ «անբարոյ կենակցութիւնները յաճախադէպ դարձեր էին անոնց միջեւ...»²²:

Կոմսը եւ Հ. Երամյանը եւս անբարոյականություն էին համարում ազատությունը սիրո բնագավառում եւ սեռական կրքերի սանձարձակությունը՝ առանց արյունակցականություն եւ այլ պայմանականություններ հաշվի առնելու²³: Սակայն Ռուբենը, որը հաճախ հիանում էր նորսերնդականներով, գտնում էր, որ նորսերնդականները «ազատ սէր ըսելով կը հասկնային անհատներու ազատ կամքով դաշնակցութիւնը, հաւատարմութեամբ միացումը իրենց ազնիւ խօսքի վրայ»²⁴:

Նորսերնդականները կարողացան թափանցել երիտասարդ արհեստավորների մեջ՝ առաջ քաշելով Վանում արհեստակցական միություններ ստեղծելու անհրաժեշտությունը եւ շահագործողների դեմ պայքարելու պահանջը՝ կոչ անելով ոչնչացնել հին եւ «կեղեքող» դասերը եւ հեղինակությունները²⁵:

Նորսերնդականները դպրոցական կարգապահությունը համարում էին բռնատիրություն: Նրանք ցույցեր էին կազմակերպում դպրոցներում եւ ձեռք բարձրացնում իրենց ուսուցիչների եւ տնօրենների վրա: Այդպիսի ուսուցիչներից էին Գրիգոր Աճեմյանը եւ Հովհաննես Գուլոյյանը, որոնցից առաջինը սպանվեց նորսերնդականների կողմից²⁶: Արճակում նրանք բռնությամբ ներխուժեցին դպրոց եւ իրականացրին իրենց քարոզչությունը:

Քննադատելով հոգեւորականությանը՝ այդ հոսանքի ներկայացուցիչները հաճախ ընկնում էին ծայրահեղությունների մեջ եւ վիրավորում էին ժողովրդի կրոնական զգացմունքները՝ փորձելով ոտնատակ անել ավանդական բարքերն ու սովորույթները:

Վանում տիրող անկրոն եւ անբարո այս վիճակի դեմ բողոքում էին թեմականները: Այս մասին Վանի առաջնորդական տեղապահ Զավեն ծայրագույն վարդապետ Տեր-Եղիյանը հիշում է. «Շրջեցէք գիւղ եւ քաղաք եւ տեսէք մեր երիտասարդութեան թեթեւսովիկութիւնը եւ մանաւանդ բարոյականին անկումը, տեսէք մեր դպրոցական անմեղուկ տղոց մտքին ու զգացմանց ապականումը, հնազանդութեան եւ կարգապահութեան ոգիին վերացումը, ամօթխածութեան ջնջումը, տեսէք թե ինչպէ՛ս փոքրիկ մանու-

²² «Յուշեր Արմենակ Եկարեանի», Կահիրե, 1947, էջ 154:

²³ Վ. Փափագեան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 486, նաև Հ. Երամյան, Հուշարձան, հ. Բ., Ալեքսանդրիա, 1929, էջ 61:

²⁴ Ռ. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., հ. Դ., Տարօնի աշխարհը (1906, 1907, 1908), էջ 243:

²⁵ Վ. Փափագեան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 486, նաև Հ. Երամյան, Հուշարձան, հ. Բ., էջ 490:

²⁶ «Յուշեր Արմենակ Եկարեանի», էջ 153-154:

կը, կարհամարէ ծնողաց եւ դաստիարակաց ամէն հրաման... ինչպէս կ'անսաստէ անիկայ ծնողքին եւ հրապարակաւ կը ծեծէ իր դաստիարակը...»²⁷:

Բոնութեան շնորհիվ նորսերնդականները ստիպեցին, որպէսզի Կ. Պոլսի Հայոց պատրիարքին կից գործող խորհուրդը թույլատրի եկեղեցիներում ժողովներ ու ցույցեր գումարել, անցկացնել դասախոսություններ, համերգներ եւ թատերական ներկայացումներ՝ պայմանով, որ նրանք այլեւս հանդես չգան Հայ Լուսավորչական Եկեղեցու եւ կրոնի դէմ: Սակայն նորսերնդականները հաճախ խախտում էին իրենց խոստումը եւ վիրավորում ժողովրդի կրոնական զգացմունքները: Նորսերնդականներից մեկի մասին Ա. Դարբինյանը հիշում է. «Ասոնցմէ մէկը՝ Վազգէն, կիրակի օր մը, երբ եւս Վարագէն քաղաք իջած էի, գացեր էր այնտեղ, իր հրաշագործութիւնը այնտեղ ալ ցուցնելու: Վերակացու Պ. Պետրոսի առաջնորդութեամբ վանքին մէջ իր պտոյտներն ընելէ յետոյ Վազգէն եկեղեցին կը մտնէ եւ սեղանին վրայ բարձրանալով՝ սկիհը կը վերցնէ իբր խաղալիք մը աշակերտներուն ցուցնելու: Պ. Պետրոս, այդ ծայրաստիճան պաղարին մարդը, մէկէն բորբոքելով՝ նոյնպէս սեղան կը բարձրանայ եւ գորաւոր ապտակ մը կ'իջեցնէ իմաստակին երեսին: Վազգէն խայտառակուած, մէկ շունչով մինչեւ քաղաք կը փախչի»²⁸: Կամ ինչպէս Ա. Եկարյանն է մատնանշում «իմ նախկին ընկերներէս մին, վերջէն քահանայացած եւ վերակոչուած Գեորգ քին. Շաքարեան, օր մը հետեւեալը ըսաւ, այս մասին. - Բարեկամ, Վանը առաջուանը չէ մնացած, շատ է փոխուած, այլանդակուած: Արարք թաղամասի մայրերն ու մեծմայրերը, որպէսզի իրենց եկեղեցիին քահանաներէն չճանչցուն, ինծի եկան խոստովանելու իրենց նորատի աղջկանց գործած մեղքերու մասին - ապօրէն կենակցութեան եւ վիժումի դէպքեր, թիով 120՝ կարճատենի մը մէջ: - Իբրեւ քահանայ, շարունակեց Տէր Հայրը, - մեղանչում մըն է այս մասին խօսիլը, բայց քեզի կ'ըսեմ ասիկա, որ ճար մը խորհիք... Ես մնացի ափի ի բերան: Թշնամիին ընել չկրցածը՝ մեր ընտանեկան դրութեան հիմը քանդելու համար, մննք պիտի ընէինք: Ալ ինչով մեղաւոր էր ծանօթ Մուսա Պէկը...»²⁹:

1909 թ. փետրվարի 15-ին Վանի Կենտրոնական վարժարանի «Ազատության լույս» ընթերցատան մեջ հայ կոմիտեի կողմից կազմակերպված «Ազգային սահմանադրությունը եւ ներքին կուլտուրական ավտոնոմիան» թեմայով դասախոսությունը դիտվեց որպէս «անաստվածության»

²⁷ «Հայրենիք», Կ. Պոլիս, 1909, օգոստոսի 12/25, թ. 1449, նաեւ «Ծիածան», Կ. Պոլիս, 1909, օգոստոսի 15/28, թ. 12:

²⁸ Ա. Դարբինեան, Հայ ազատագրական շարժման օրերէն. Յուշեր 1890 էն 1940, Երևան, 2003, էջ 169:

²⁹ «Յուշեր Արմենակ Եկարեանի», էջ 154:

քարոզ էլ պատճառ դարձավ, որպեսզի Վանում նախկին վարչակարգի ուժերի սադրանքով տարերային պայքար հրահրվի կրոնի անարգանքի պատրվակով մեղադրվող «անաստված» նորսերնդական շարժման երիտասարդ անդամների դեմ: Հայ կոմիտեի ներկայացուցիչներին մի կերպ հաջողվում է սպառնալիքներով ցրել ժողովրդին, որոնք «ի խաչ հան գղա» վանկարկելով՝ հետապնդում էին երկու ատենախոսներին: Դրությունն այնքան է լարվում, որ թուրքական իշխանություններն ապահովության համար քաղաք են բերում «գապթիաներ»՝ թուրք ոստիկաններ:

Հաջորդ օրը Վանում հալածանք սկսվեց «նորսերնդական» երիտասարդների և պատանիների դեմ: Ժամանակի մամուլի բնորոշմամբ «կաթօլիկական ինկվիզիցիան յանկարծ կարծես յարութիւն առաւ»։ փողոցներում կանգնեցնելով բոլոր կասկածյալ պատանիներին հարցնում էին՝ «Աստուած կայ, թէ չէ», «ինչէն յայտնի է, որ կը կհաւատաս», «խաչ հան» և այլն: Բավական էր մի փոքր ուշացում այս հարցումների պատասխանին, որ «բռնուցքների և փայտերի տակ փրկվէր պատանին»³⁰: Այս ձեռով տասնյակ պատանիներ և երիտասարդներ Վանում ծեծի ենթարկվեցին: Բացի այդ, ժողովուրդը հավաքվում է Դաշնակցության Վանի ակումբի առաջ՝ աղաղակելով. «կուրք անաստվածության բոյն է, թէ գրքերը պետք է վառենք»³¹:

Ա. Վոսմյանի և Ծոռո Դավիթի (Դավիթ Թումանյան) հորդորներն ու սպառնալիքները գուր են անցնում ժողովրդին ցրելու համար: Վրա հասած ոստիկանությունը ցրում է ժողովրդին, մի քանիսին ձերբակալում է, իսկ գործը հանձնում հայոց առաջնորդարանին:

Նույն օրը ժողովուրդը հավաքվեց Ս. Նշան եկեղեցում և ժողով գումարելով՝ ընտրեց յոթ հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որը պետք է պատժեր երեք «անհավատ» ուսուցիչներին: «Տեսարանը, - գրում է Արամը, - յիշեցնում է Հոսմի մեջ 1600 թին տեղի ունեցած Ջօրդանո Բրունօի դատը: Խնդր վանեցի պատանիները, առանց Բրունօ լինելու, նրա պէս անմահացան այդ օրը...»³²: Հանձնաժողովի պահանջով առաջնորդարանը երեք ուսուցիչներին գրկեց ազգային իրավունքից և ազատեց աշխատանքից՝ մինչև համապատասխան քննության անցկացումը:

Հակակրոնական այս շարժումը չսահմանափակվեց միայն քաղաքով: Այն տարածվեց նաև գավառներում: Այսպես, այս դեպքերի ազդեցության

³⁰ «Գործ», Թիֆլիս, 1909, մարտի 26, թ. 64:

³¹ Անդ:

³² «Դիօշակ», Ժնև, հունիս, թ. 6, էջ 151:

տակ Արճակի գյուղացիները խուժում են իրենց դպրոց, ծեծում ներսեայանավարտ ուսուցիչներին և փակում դպրոցը³³։ Դեռ ավելին։ Կրոնական բողոքի այդ ալիքը փոխանցվեց նաև թուրքերին։ Գլխավոր հրահրողը Վանի իթթիհատական կոմիտեն էր, որի հարաբերությունները դյուրին չէին դաշնակցության տեղի հայկական կոմիտեի հետ։ Վերջինիս դեմ սկսած շարժմանը դիմակայելու համար 1909 թ. փետրվարի 22-ին Վանի Նորաշենի եկեղեցում հրավիրված հանրահավաքի ժամանակ բանախոսները՝ Ա. Վռամյանը, Արամը և Մ. Թերլեմեզյանը, ժողովրդին բացատրեցին, որ, ըստ էության, հրահրվել են հայ և թուրք ժողովուրդների անգիտակից անհատների կրոնամոլական բնագոյները և «վտանգվել են երկու դրացի ժողովուրդների բարեշահված հարաբերությունները»։ Հետևաբար. «յանուն ընդհանուր հայրենիքի (խոսքը՝ Օսմանյան կայսրության մասին է - Ա. Հ.) բարօրութեան» կոչ արվեց ամրապնդել համերաշխությունը երկու ժողովուրդների միջև³⁴։

1909 թ. ապրիլին նորսերնդականները Աղթամարում արգելեցին քահանաների ձեռնադրումը՝ հայտարարելով, որ «մեզի ոչ եկեղեցի և ոչ եկեղեցական պետք է»։ Այս ծաղրածանակի ենթարկեցին եպիսկոպոսին, որը «չըկարողանալով անոնց դիմացն առնել, լալով իր խոսքը քաշված է և ընծայացուներն առանց ձեռնադրվելու քաղաք եկած են»³⁵։

Նորսերնդականները դժգոհ էին նաև իրենց հարագատ ՀՅԴ-ից, քանի որ կուսակցությունը ճնշած էր պահում իրենց ազատ գործելակերպը, արգելում էր աշակերտներին մտնել կուսակցության մեջ և պաշտպանում էր ժողովրդական ավանդույթները։

Նորսերնդականները գործում էին հախտոն և բիրտ եղանակով, «անոր գործը եղաւ... փայտ ու բոռնցք»³⁶։ Ահա թե ինչպես է ներկայացնում նորսերնդականների գործելաոճը նորսերնդական Արսենը. «Կաթուղիկ Քոյրերու դպրոցին մէջ «մեր աղջիկներուն» արտաքսումի խօսք ըրած են, գիշերը Քոյրերու և Հայրերու դպրոցներու ապակիները ջարդ ու փշուր կ'ըլլային։ Ուսուցիչ Գրիգոր Աճէմեան մեր «տղոց-աղջիկներուն» սպառնագին լեզո՞ գործածած է. իրիկուն մը հեզիկ Տաճատի տիղոցին կ'ենթարկուէր, որ կը գրաւէր նաև անոր գրպանի Սմիթ ստորճանակը»³⁷։

³³ Անդ։

³⁴ «Գործ», Թիֆլիս, 1909, մարտի 26, թ. 64։

³⁵ «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1909, ապրիլի 6, թ. 3798։

³⁶ «Յիշատակարան նուիրում 1896-ի և 1915-ի Վասպուրականի հերոսամարտերուն», էջ 40։

³⁷ Անդ, էջ 40-41։

Նորսերնդականների հայացքների մեջ նկատվում էր Էջմիածնի Գեորգյան ճեմարանի, Թիֆլիսի, Բաքվի և Մոսկվայի երիտասարդության միաստիկ ոգին՝ «պատճառների պատճառը» գտնելու մոլուցքը, որը որեւէ առնչություն չուներ իսկական ազատության ու առաջադիմության հետ: Հանդես գալով փրփրած ճառերով, վեճերով և Մ. Գորկու ու Լ. Տոլստոյի ձեւերով (հագուստը կապկելով)՝ նրանց բնորոշ էր աշխատելու, որոնելու և ուսումնասիրելու կամքը և տենչանքը: Նրանց մեջ քարացած և մարմնավորված էին իրենց ուսուցիչ Համագասպի «ինչո՞ւ, ինչո՞ւ»-ները: Նրանք կարդացել և լսել էին այն ամենը, ինչ որ խոսում էին՝ մեջբերելով փիլիսոփաներից, պատմաբաններից և հեղինակներից (Մարքսից, Էնգելսից, Նեչաևից, Բակունինից, Ժորեսից, Պիեռ Բիառից): Նրանք կուզեին ամեն ինչ հասկանալ, «թէ՛ւ հասկնալու կարողությունը անոնց կը պակսէր իրենց մակերեսային ծանօթութեանց պատճառով...: Պարզ էր, որ անոնց համար բոլոր հեղինակությունները առ ոչինչ էին»: Ինչպես Ռուբենն է հիշում. «Մտքիս մեջ կ'ըսեի՝ վայ քեզի, Արամ»³⁸:

Չնայած Ա. Ասրյանը փորձում է արդարացնել Արամի ծայրահեղականությունը նորսերնդականության հայացքների պաշտպանության հարցում³⁹, սակայն իրողություն է, որ նորսերնդականներին ընդունում էին միայն Արամը, Սարգիսը և Ղ. Մելոյանը⁴⁰: Այդուհանդերձ, Արամը Զավենին զգուշացնում էր, որ համայնավարությունը արեւմտահայ իրականության մեջ ամբողջովին ներդնելու համար անհրաժեշտ էին համապատասխան պայմաններ: Միաժամանակ, նա գտնում էր, որ հասարակական մեծ ակտիվություն դրսևորող, հեղափոխական գործին նվիրված նորսերնդականների ծայրահեղ հայացքները ժամանակի ընթացքում կհարթվեն և նրանք կդառնան հեղափոխությանը պիտանի տարրեր⁴¹: Փորձելով գնահատել նորսերնդականների հետ ունեցած հանդիպումից ստացված իր առաջին տպավորությունը՝ Եփրեմ Սարգսյանը վկայում է. «Վատ բան չէի տեսնում, համաձայն էի, երիտասարդությունը ամէն տեղ արժանի է քաջալերանքի և գնահատութեան»⁴²: Հետագայում դաշնակցական մամուլը

³⁸ Ռ. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., հ. Դ., Տարօնի աշխարհը (1906, 1907, 1908), էջ 242:

³⁹ Ա. Ասրյան, Ա. Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2005, էջ 50:

⁴⁰ Վ. Փափազեան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 489, 508:

⁴¹ Վ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 486, նաև Ռ. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., հ. Դ., Տարօնի աշխարհը (1906, 1907, 1908), էջ 248:

⁴² «Արամը», նշվ. աշխ., էջ 446:

պիտի նշեր, որ «պայքար մը, որ իր աչք ծակող թերութիւններով մէկտեղ, Վանի կուսակցական լաւագոյն փոքրամասնութիւնը ստեղծեց»⁴³:

Նորսերնդականների ապականիչ հորձանքի դեմ հանդես եկավ Վանի ավելի հասուն եւ տարիքով ավագ երիտասարդությունն իրենց սուր բանավեճերով եւ «Հայացք» թերթով: «Յեղափոխական կոչուած խաչագողներու» այդ հակաշարժման գլուխ կանգնեցին Գրիգոր Խլղաթյանը (Սեյրադ), Մկրտիչ Մնոշյանը, Դավիթ Փափագյանը, ալյուրցի Նազարեթը, Արմենակ Մաղաքյանը, Աշցանը, Արսեն Հացագործյանը, Օսիկ Վարդանյանը եւ ուրիշներ⁴⁴, քանի որ նրանց գործունեությունը կարող էր ունենալ անդառնալի ծանր հետեւանքներ: Դեռ ավելին, այն առաջ էր բերում ազգային, կրոնական, ընտանեկան, կենցաղային երկպառակություններ, ինչը մեծ վտանգ էր ներկայացնում Վասպուրականի հայությանը: Այն «...կը կացինահարեր մեր բարի ժողովուրդին ընկերային ու բարոյական կեանքը»⁴⁵:

Օտարամուտ անբարո գաղափարների ներթափանցման ոչ հանդարտ իրավիճակը լի էր նաեւ մահմեդականների մոլեռանդ կրքերը բորբոքելու վտանգով: Այդ էր պատճառը, որ այդ շարժման դեմ որպէս անխորտակելի պատնէշներ մնացին Վանի նշանավոր մանկավարժներ Համբարձում Երամյանը, Արտակ Դարբինյանը, Հովսէփ Գոյումճյանը եւ Միքայել Մինայանը:

Ռուբենը նորսերնդականներին անվանում էր «անսանձ քուռակներու երամ»⁴⁶: Իսկ Վ. Փափագյանն էլ ստիպված խոստովանում էր, թե Վասպուրականի դաշնակցական ղեկավար գործիչները՝ Մալխասը, Տիգրանը, Նույնիսկ «արհամարհական եւ խորթ աչքով կը նայէին անոնց... եւ որքան բացասական եւ խորն էր, նորսերնդական շարժման եւ մանավանդ, Վագգէնի եւ Զաւէնի կողմէ հրահրուած եւ ծայրայեղութեան հասցուած գաղափարներու բացասական ազդեցութիւնը ժողովուրդի եւ մեր համեստ եւ կենդանի գործին մօտ կանգնած ընկերներու վրայ»⁴⁷:

Ազգի ղեկավարությունն իր ձեռքում պահելու նպատակով արեւմտահայ հոգեւորականությունը դիմակայում էր դաշնակցությանը եւ պայքարում նորսերնդականության դեմ: Դեռ 1909 թ. սեպտեմբերին պատրիարքի ցուցումով Կ. Պոլսի 40 քահանաներ հավաքվեցին խորհրդակցության

⁴³ Վ. Փափագեան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 487:

⁴⁴ Անդ, էջ 508:

⁴⁵ «Յուշեր Արմենակ Եկաբեանի», էջ 153:

⁴⁶ Ռ. Տեր-Մինայան, նշվ. աշխ., հ. Դ., Տարօնի աշխարհը (1906, 1907, 1908), էջ 243:

⁴⁷ Վ. Փափագեան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 508:

և միջոցառումներ մշակեցին այդ կուսակցության հակակրոնական քարոզչության դեմ պայքարելու համար, իսկ նոյեմբերին որոշվեց հակակրոնական հոսանքի դեմ պայքարելու նպատակով «կրոնաթերթ մը հրատարակել»⁴⁸:

1910 թ. ապրիլի վերջերին կաթողիկոսն արգելեց կուսակցականների հանրահավաքներն ու ժողովները եկեղեցիներում կամ վանքերում: Պատրիարքարանի հրահանգում նշվում էր. «Փակել եկեղեցիներն ամեն կարգի հավաքումներու և բանախոսություններու դեմ, ինչպես փակված են իսլամ և հրեա աղոթատեղիները, լատին և հույն եկեղեցիները, ամեն կարգի բողոքական եկեղեցիները, և եկեղեցին հատկացնել և ճանաչել միմիայն իբրեւ աղոթատեղի, ուր կրոնական պաշտամունք միայն տեղի կունենա»⁴⁹:

Նորսերնդականության գաղափարների դեմ էին նույնիսկ բոլշևիկները: Ս. Սպանդարյանը (Իզգոյ) «Новая Реч» թերթի 1910 թ. ապրիլի 7-ի թիվ 78 համարում հրատարակված իր «Ուրվագրեր հայկական կյանքից» հոդվածում գրում էր. «Մենք ամենաջերմ ու ամենահետևողական կողմնակիցներն ենք ժողովների և խոսքի ազատության և ամեն կերպ պիտի ողջունենք այդ և աջակցենք դրա կենսագործմանը: Սակայն բողոքելու ենք այդ ազատության կենսագործման այնպիսի միջոցների դեմ, որոնք վիրավորում են բնակչության մեծ մասի զգացմունքները, որոնք ժողովների և խոսքի ազատության մասին շիտակ պատկերացումներ չեն ստեղծում, այլ, ընդհակառակը, մութ ուժերին հնարավորություն են տալիս սեփաբարձարական ագիտացիա մղելու ժողովրդական լայն զանգվածներում: Եթե ամերիկական եկեղեցիներում ժամասացությունից հետո միտինգներ և նույնիսկ պարահանդեսներ են կազմակերպվում, ապա ամերիկական կրոնական համայնքների պատմությունը, նրանց զարգացումը, նրանց սովորույթները և առհասարակ ամերիկական կյանքի բոլոր պայմանները լիովին համապատասխանում են այդ երևույթին: Մեզ մոտ՝ Արևելքում, եկեղեցին սրբազան մի վայր է հանդիսանում, և ամեն ոք, ով եկեղեցի է մտնում, պետք է միառժամանակ հրաժարվի այն ամենից, ինչ որ աշխարհիկ է: Հետևաբար՝ ներխուժելով եկեղեցին և «հեղափոխական» մեթոդներով վերածելով այն մի սովորական ժողովասրահի, - «ազատության այդ կողմնակիցները» վիրավորում են բնակչության ահագին մեծամասնության զգացմունքները:

⁴⁸ «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1909, դեկտեմբերի 10, թ. 3993:

⁴⁹ Անդ, Կ. Պոլիս, 1910, հուլիսի 14, թ. 4171:

Այդպիսի միջոցներով մասսաների մեջ ոչ թե սեր է արմատավորվում դեպի ազատությունը, այլ, ընդհակառակը, զգվանք դեպի այն:

Կարելի է անհավատ լինել, կարելի է չընդունել եկեղեցին, սակայն հարկավոր չէ, վնասակար եւ անտակտ բան է բռնանալ հավատացյալների կամքի եւ զգացմունքների վրա:

Հեղափոխական այնպիսի խոշոր կազմակերպություն, ինչպիսին գերմանական սոցիալ-դեմոկրատիան է, որը պայքարի, ազիտացիայի եւ պրոպագանդայի բազմամյա փորձ ունի, շատ զգույշ է վարվում կրոնական զգացմունքների հետ՝ ընդունելով իբրեւ կանոն թե՛ իր ծրագրում եւ թե՛ իր տակտիկայում, որ կրոնը մասնավոր գործ է (Privatsache):

Սրանով մենք չենք ուզում ասել, թե չի կարելի գիտական պայքար մղել կրոնական սիստեմների դեմ եւ այլն: Սակայն սրանով մենք ուզում ենք ընդգծել, որ հարկավոր է զգույշ լինել կրոնական հարցերում: Իսկ առավել եւս խղճի հարցերում անթույլատրելի եւ ուղղակի խայտառակ ու ամոթալի են կազմակերպված փոքրամասնության բռնությունները անկազմակերպ մեծամասնության վրա... Նման փաստերը միայն մի բան են վկայում, որ հայ հասարակության այն խավերը, որոնք այդպիսի անթույլատրելի եղանակով «ազատություններ» են արմատավորում հայ ժողովրդի մեջ,՝ դեռեւս իրենք չեն հասունացել այդ «ազատություններն» ըմբռնելու համար: Միթե ողջ սահմանադրական Կոստանդնուպոլսում չէր կարող մի տեղ գտնվել ժողովների համար, այլ հարկավոր էր դրանք կազմակերպել եկեղեցիներում: Եկեղեցին պետք է մնա մի կողմ. կարիք չկա քաղաքական ելույթների ասպարեզի վերածելու այն: Հարձակվեցեք նրա վրա, եթե այդ ձեզ հաճելի է, բայց նրա պատերից դուրս, նրա տաճարը՝ հավատացյալների համար սրբազան համարվող վայրը, չդարձնելով հոետորական ամբիոն, եւ մի՛ գայրացեք, երբ հավատացյալները դիմադրություն են ցույց տալիս ձեզ, պայքարում են իրենց իրավունքների համար, մի՛ ճչացեք «կղերականության», «խավարապաշտության» եւ այլ սարսափելի բաների մասին, որովհետեւ ձեր արարքները շատ քիչ առնչություն ունեն իսկական ազատության եւ պրոգրեսի հետ եւ ավելի շուտ սահմանակից են «խուլիգանության»⁵⁰:

Սակայն կար նաեւ մտածողության միջին թել՝ հանձին Մելիքսեդեկ Էյնաթյանի, որը փորձում էր համադրել երկու բեռնոները: Նրանք «իրենց

⁵⁰ Ս. Սպանդարյան, Ընտիր երկեր, Երևան, 1982, էջ 185-186:

գգացումներով կը մօտենային առաջիններուն, իսկ բնագոյրէն կամ գիտակցութեամբ՝ վերջիններուն»⁵¹:

Նորսերնդականության խնդիրը Վ. Փափազյանի կողմից քննարկվեց դեռևս 1906 թ. ձմռանը հրավիրված՝ դաշնակցության Վանի կենտրոնական կոմիտեի ժողովի ժամանակ, որին մասնակցում էին Սարգիսը, Տիգրանը, Մալխասը, Դ. Մելոյանը, Թեոսը, Ալեսը, Արմենակը եւ Գ. Ճիտեջյանը: Որոշվեց չափավորել եւ բնական հունի մեջ վերցնել «ափերէն դուրս հոսող ընկերվարական-քաղաքական քարոզչութեան փրփրացող յորձանքը»⁵² եւ վերադառնալ նախկին գաղտնիության եւ գործունեության խոհեմ ու գգուշավոր ձեւերին:

Երիտասարդության երկու հատվածների միջև առաջ եկած գաղափարական տարբերությունները եւ ապարդյուն խարխափումները մեղմելու եւ չափավորելու համար Վանի դաշնակցության Կենտրոնական կոմիտեն նպատակահարմար գտավ հրատարակել «Երկունք» անունով խորատիպ ամսաթերթը՝ Դ. Մելոյանի խմբագրությամբ: Թերթին զուգընթաց պարբերաբար հրատարակվեցին նաեւ թոռացիկներ եւ «տեղեկատուներ»:

Դրան հակադարձվեց «Նոր սերունդ» ամսաթերթը: Սակայն երիտասարդության «գրչակոխը» դրանով չդադարեց: Ավանդապահ երիտասարդությունը սկսեց հրատարակել «Հայացք» թերթը⁵³:

Վասպուրականի հայությունը նյութական եւ բարոյական շահերի պաշտպանության ու ապահովության համար համագգային պայքար եւ հալածանք ծավալեց նորսերնդականների դեմ: Նույնիսկ կոչ արվեց կառավարությանը, որպեսզի նրանց դեմ գործադրվի «դատարկապորտների մասին» պետական օրենքը⁵⁴:

Շուտով նորսերնդականների առաջնորդները, որպես «անառակ ըմբոստներ»⁵⁵, եւ «այլանդակ, պորտաբոյժ արարածներ»⁵⁶, չկարողանալով ներգործել հասարակական լայն զանգվածների վրա, հեռացվեցին Վանից: Զավենն ուղարկվեց Տարոն, իսկ Վազգենը վերադարձավ Կովկաս⁵⁷:

⁵¹ Վ. Փափազեան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 487:

⁵² Վ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 483:

⁵³ Ռ. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., հ. Ե., Տարօնէն Թիֆլիս (1908-1909), Լու Անճէլլա, 1951, էջ 484:

⁵⁴ «Ծիածան», Կ. Պոլիս, 1909, օգոստոսի 15/28, թ. 12:

⁵⁵ Վ. Փափազեան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 484:

⁵⁶ «Ծիածան», Կ. Պոլիս, 1909, օգոստոսի 15/28, թ. 12:

⁵⁷ Տարոնի հայկական եւ քրդական գյուղերում Զավենը հանդես եկավ հայ-քրդական համագործակցության գաղափարներով: Սակայն շուտով նշանավոր հայդուկներ Մեյտոյի եւ Ջնդիի հետ նա գոհ գնաց Մուսա բեկի եղբայր Գասըմ բեկի կազմակերպած դավաղ-

Ճիշտ է՝ նորսերնդականներն իրենց վերջին «ժողով»-ը գումարեցին 1908 թ. մարտի 9-ին⁵⁸, սակայն այդ հոսանքը գոյատևեց մինչև 1909 թ. եւ, Ա. Համբարյանի իրավացի դիտարկմամբ, այն չկարողացավ ձեւավորվել որպես ինքնուրույն կուսակցություն եւ իր հետեւից տանել որոշակի գանգված⁵⁹։ Վ. Փափագյանի համոզմամբ՝ ժամանակավրեպ այդ շարժումը «հասնող դպրոցական սերունդի հոգիներու մէջ ան լեցուց յախտոն ազատական գաղափարներ, որոնք իւրացուեցան, բայց չմարտուեցան դպրոցական եւ նորահաս երիտասարդութեան կողմէ»⁶⁰։

Այդուհանդերձ, նույն Վ. Փափագյանի կարծիքով, հակառակ նորսերնդականների ըմբոստ եւ գաղափարական ծայրահեղություններին, նրանք, դաշնակցականների բնութագրմամբ, շարունակեցին մնալ այդ կուսակցության «մաքուր, պարկեշտ եւ նուիրուած նախանձախնդիր տարրերը»... «այս կամ իր բալիկները... մեր աջ բազուկներն էին յեղափոխական յանդգնութիւն պահանջող բոլոր մարզերուն մէջ... տեսական հայեացքով եւ գործօն կեանքով յափշտակուած սերունդ մը»⁶¹։ Այդ սերունդը դարձավ Վանի ուժը եւ հետագայում մեծ դեր կատարեց Վասպուրականի 1915 թ. դիմադրական կռիվներում եւ Երեւանի (Հայաստանի առաջին) Հանրապետության ճակատագրում։

Այսպիսով, երիտթուրքական հեղաշրջման արդյունքում սկզբնավորվեց հասարակական-կրթական եւ հակակրոնական ու հակաեկեղեցական օտարամուտ մի շարժում, որն ուղղված էր ազգի, կրոնի, եկեղեցու, ընտանեկան եւ կենցաղային ավանդույթների դեմ եւ իր բնույթով մեծ վտանգ էր ներկայացնում Վանի նահանգի հայության անվտանգության համար։

РЕЗЮМЕ

В 1908 г. младотурецкий переворот и установленная относительная «свобода» внесли определенную оживленность но, одновременно, и обострение как в политической, так и в общественно-образовательной сфере г. Вана. Накануне переворота в Ване было распространено «новопоколенческое» движение «приготовленное руками дашнакцутюна», которое использовалось в борьбе против традиционности западно-армянского общества и армянского духовенства. Деятели

րությանը, որը Գեուրգ Չավուշի օրոք դաշնակցականների «ընկերն» էր։ Իսկ Վազգենն էլ Կովկասում ինքնասպան եղավ։ Տե՛ս Վ. Փափագենան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 490։

⁵⁸ «Յիշատակարան նուիրուած 1896-ի եւ 1915-ի Վասպուրականի հերոսամարտերուն», էջ 41։

⁵⁹ Վ. Փափագենան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 116։

⁶⁰ Ս. Սպանդարյան, նշվ. աշխ., էջ 481։

⁶¹ Վ. Փափագենան, նշվ. աշխ., հ. Ա., էջ 485, 489-487։

этого движения, находящиеся под влиянием кавказских революционных событий и руководящиеся книжными и теоретическими представлениями, пытались распространить свои антиправительственные убеждения, доходящие до нонсенса и несущие крайне антинациональный и антирелигиозный характер.

SUMMARY

In 1908 Young Turks' revolution and the installed relative "freedom" invested some recoveries but in the same time brought to escalations both in political and in social-educational sphere of the city Van. On the eve of the revolution in Van was spread the "New generation" movement "cooked by Dashnaktsutyun", which was used in the fight against traditional Western-Armenian community traditions and the Armenian clergy. Figures of that movement were under the influence of Caucasian revolutionary events, being guided by bookish and theoretical ideas and tried to spread their anarchistic views bearing extremely antinational and antireligious character.



ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԽՈՍՔ ԹԱՐԳՄԱՆՉԻ

Սույն թվականի հոկտեմբերի 5-10-ը Հավարդենում (Ուելս, Մեծ Բրիտանիա) տեղի ունեցավ Արևելյան Ուղղափառ-Անգլիկան եկեղեցիների երկխոսության միջազգային աստվածաբանական հանձնախմբի հերթական նիստը: Հընթացս կարեւորվեց հատկապես միջեկեղեցական այս երկխոսության արդյունքում ստեղծված Քրիստոսաբանական համաձայնագիրը, որի տպագիր օրինակի պաշտոնական շնորհանդեսը կայացավ Սուրբ Ասափի թեմի Մայր Տաճարում: Ստորեւ ներկայացնում ենք Քրիստոսաբանական համաձայնագրի հայերեն թարգմանությունը՝ կատարված տպագիր անգլերեն օրինակի հիման վրա: Քրիստոսաբանական այս համաձայնագրի ստեղծումն ունի ավելի քան 25 տարվա պատմություն՝ ամփոփելով 1990 թվականից սկսած՝ Արևելյան Ուղղափառ-Անգլիկան երկխոսության արդյունքները եւ ձեռք բերված համաձայնությունները քրիստոսաբանության ոլորտում:

ՇԱՀԵ ՎՐԴ. ԱՆԱՆՅԱՆ

Միջեկեղեցական հարաբերությունների
գրասենյակի տնօրեն

**ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ.
ԱՆԳԼԻԿԱՆ-ԱՐԵՒԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ**

Ս. Էջմիածին, Հայաստան

5-10 նոյեմբերի, 2002

Կահիրե, Եգիպտոս

13-17 հոկտեմբերի, 2014

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ¹

1990 թ. Արևելյան Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների երկրորդ համագումարը և Անգլիկան Հաղորդության եկեղեցիները Ս. Բիշոյ վանքում (Վադի ալ Նաթրուն, Եգիպտոս) իրենց հանդիպման արդյունքում արձանագրեցին հետևյալը.

«Աստված՝ Տեր Հիսուս Քրիստոս, մեր կյանքում հայտնվելով, ուսուցանելով, չարչարվելով, մահն ընդունելով, հարություն առնելով և համբարձվելով, Իրեն հավատացող ժողովրդին կոչ է անում Իր հեղի միության: Մուրբ Հոգու հեղի կենսաբար հաղորդությամբ Նրան հավատացող ժողովուրդն իշխանություն է ստանում Ավերարանն ամբողջ արարչության և տիեզերքի մեջ քարոզելու»:

Համագումարը նաև հանգեց այն եզրակացությանը, որ հաշվի առնելով Ուղղափառ եկեղեցական երկու ընտանիքների (Արևելյան Ուղղափառ և Բյուզանդական Ուղղափառ) ներկայացուցիչների կողմից կատարված աստվածաբանական մանրակրկիտ աշխատանքը 1964-1971 թթ., որի արդյունքում արեղծվեց 1989-1990 թթ. Համաձայնագիրը, ինչպես նաև Pro-Oriente ոչ պաշտոնական երկխոսության արդյունքները և Արևելյան Ուղղափառ ու Անգլիկան եկեղեցական ընտանիքների միջև առկա քրիստոսաբանական որոշ համաձայնությունները՝ կարելի է Անգլիկան Համահաղորդության ու Արևելյան Ուղղափառ եկեղեցիների միջև ստորագ-

¹ Սույն «Ներածությունը» մաս է կազմում պաշտոնական՝ ստորագրված Համաձայնագրի:

րել քրիստոսաբանական համաձայնագիր: Վերոնշյալին իրեն հավելում պետք է նշել նաև Բարեկարգյալ (Reformed)-Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների երկխոսության արդյունքում կնքված «Քրիստոսաբանական համաձայնագիրը» (Իրիեբերգեն, Նիդեռլանդներ, 13 սեպտեմբերի, 1994 թ.):

Մեր առաջին հանդիպումն, իրեն Անգլիկան-Արեւելյան Ուղղափառ Միջազգային հանձնախումբ, տեղի ունեցավ Սուրբ Էջմիածնում (Հայաստան), նոյեմբերի 5-10-ին, 2002 թ., որին նախորդել էր նախապարտական հանձնախմբի Միդհարստում (Անգլիա) կայացած նիստը (27-30 հոկտեմբեր, 2001 թ.): Արդյունքում լույս տեսավ այս քրիստոսաբանական համաձայնագիրը: Վերջինս ուղարկվեց երկխոսության մասնակից եկեղեցիների պատրիարքական իշխանություններին, սպա հաջորդեց հանձնախմբի մեկ այլ հանդիպում Ուոքինգտոն (Անգլիա) հոկտեմբերի 3-7-ին, 2013 թ.: Հանձնախմբի երրորդ հանդիպման ժամանակ Կահիրեում (Եգիպտոս, 13-17 հոկտեմբերի, 2014 թ.) քննվեցին և հաշվի առնվեցին երկխոսության մասնակից եկեղեցիների կողմից ուղարկված դիտողություններն ու նկատառումները: Այս ամենն իրականություն դարձավ շնորհիվ հարուցյալ Քրիստոսի և մարդկության հանդեպ ունեցած ծառայական տեսլականի, մարդկություն, որին փրկելու համար մարմնացավ Տեր Հիսուս Քրիստոս: Գիտակցում և հավատում ենք, որ Աստված ներկա է պարմության մեջ՝ տառապող ու չարչարվող յուրաքանչյուր անձի մեջ, որով արտահայտվում է նաև նոր մարդկության հույսը և գալիք փառքը, որի միջոցով մասնակից ենք դառնալու Հիսուս Քրիստոսի սրբությանը: Քրիստոսի մեջ միության տեսլականով ու վճռականությամբ՝ մեր հիմնական ծառայությունն էր այս աշխարհի մեջ ուսումնասիրությամբ և համագործակցությամբ հասնելու Հիսուս Քրիստոսի անձի ճանաչողությանը (հմմտ. Ա. Հովհ. Ա. 1):

Այսու սրորեն արտագրում ենք համաձայնագիր հետևյալի մասին՝

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ա. Հավատում և խոստովանում ենք, որ մեր Տեր և Փրկիչ Աստված՝ Հիսուս Քրիստոս, Աստծո Միածին Որդին է, ով ժամանակների լրումին մարմնացավ, մարդեղացավ մեզ և մեր փրկության համար: Հավատում ենք մարմնացյալ Որդի Աստծուն, ով կատարյալ է Իր աստվածության և մարդկային բնության մեջ, համագոյակից է Հորը՝ ըստ աստվածության, և բնութենակից մեզ՝ ըստ իր մարդեղության, քանզի միությունն իրականացվել է երկու բնություններից («յերկուց բնութեանց»): Ահա այս պատճառով

խոստովանում եւ հավատում ենք մեկ Քրիստոսի, մեկ Որդի Աստծո եւ մեկ Տիրոջ²:

բ. Մեր բոլորի եկեղեցական հոր՝ Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու վարդապետությանը հետեւելով՝ կարող ենք միասին դավանել, որ Աստծո Բանի մեկ միացյալ բնության մեջ երկու տարբեր բնությունները, որոնք կարող են տարբերակվել միայն մեր մտքում (τῇ θεωρίᾳ μόνῃ), շարունակում են գոյել անբաժան, անխախտ, անփոփոխ ու անխառն կերպով:

գ. Անխառն միության այս իմաստի համաձայն՝ խոստովանում եւ հավատում ենք, որ Սուրբ Կույսն Աստվածածին է, քանզի Բանն Աստված մարմնացավ եւ մարդացավ՝ ի սկզբանե հղության իր հետ միավորելով կատարյալ մարդկային բնությունը՝ առանց մեղքի, բնություն, որ առավ Ս. Կույսից: Ինչ վերաբերում է Ավետարաններում եւ Առաքելական թղթերում Տիրոջ մասին առկա արտահայտություններին, գիտակցում ենք, որ աստվածաբանները դրանց մի մասը հասկացել են ընդհանուր առմամբ՝ իբրեւ մեկ անձի վերաբերող, մյուս մասն էլ՝ իբրեւ երկու բնությունների վերաբերող՝ երկու դեպքում էլ աստվածային բնությանը վերաբերողները բացատրելով ըստ Քրիստոսի աստվածության, իսկ մարդկային բնության վերաբերողները՝ ըստ մարդկային:

դ. Առանձնավորական միության խորհուրդը բնութագրող չորս մակբայների վերաբերյալ (անխառն, հուն.՝ ὁσυχύτως, անփոփոխ, հուն.՝ ἀτρέπτως, անբաժանելի, հուն.՝ ἀχωρίστως, անքակտելի, հուն.՝ ἀδιαιρέτως) նշենք, որ մեզանից նրանք, ովքեր Քրիստոսի երկու բնությունների մասին են խոսում, իրավացի են այն իմաստով, որով չեն ժխտում բնությունների անբաժանելի ու անքակտելի միությունը: Նույնպես նրանք, ովքեր Բանն Աստծո մեկ մարմնացած բնության մասին են խոսում, իրավացի են այն իմաստով, որով չեն մերժում Քրիստոսի մեջ առկա մարդկային եւ աստվածային բնությունների մշտական ու շարունակական ներկայությունը՝ առանց շփոթության եւ փոփոխության: Ընդունում ենք նաեւ փիլիսոփայական եզրաբանության եւ աստվածաբանական բառապաշարի սահմանափակ հնարավորությունները, որոնք օգտագործվել են անցյալում եւ շարունակում են կիրառվել այսօր: Քանզի մեզ համար անհնար է հասկանալ ու ըմբռնել Աստծո՝ Բանն Աստծո մարդեղության մեջ առկա ինքնագոհության խորհուրդը՝ անըմբռնելի, անբացատրելի կերպով միացած մարդկային եւ աստվածային բնությունների խորհրդով, որին երկրպագում ու փառաբանում ենք բոլորս:

² Հիմնված 433 թ. ստորագրված Միության համաձայնագրի վրա:

ե. Եկեղեցական երկու ընտանիքներն էլ մերժում են այն ուսմունքները, որոնք բաժանում են մարդկային բնությունը՝ հոգու և մարմնի մեջ՝ աստվածային բնությունից, կամ նվազեցնում են միությունը՝ անձերի միությունը դարձնելով խառնում և շփոթություն, դրանով իսկ մերժելով, որ Հիսուս Քրիստոսի անձը Բանն Աստծո միակ և մեկ անձն է, «զի Յիսուս Քրիստոս երեկ և այսօր, նոյն և յաիտեան» (Եբր. 13): Երկուստեք մերժում ենք այն բոլոր ուսմունքները, որոնք խառնում և շփոթություն են մտցնում Քրիստոսի մարդկային ու աստվածային բնությունների մեջ՝ մարդկայինը նկատելով իբրեւ աստվածայինի մեջ ձուլված՝ վտանգելով մարդկային բնության գոյությունը: Հետեւաբար, մերժում ենք թե՛ Նեստորական և թե՛ եվտիքեական հերետիկոսությունները:

զ. Անգլիկան ավանդության մեջ ԺԶ. դարում «39 հոդվածներ» դավանաբանական փաստաթուղթը և Ռիչարդ Հուկեր աստվածաբանն արդեն շարունակաբար շեշտել են այս թեմաները: «39 հոդվածներ»-ի 2-րդ հոդվածը հաստատում է, որ «երկու ամբողջական և կատարյալ բնությունները, այսինքն՝ աստվածությունն ու մարդկությունը» (Godhead and Manhood) անբաժանելիորեն միացած են մեկ անձի մեջ (were joined together in one Person, never to be divided): Ռ. Հուկերն իր «Եկեղեցական օրինաց կանոններ» երկի 5:5 հատվածում ընդգծում է Քրիստոսի անձի մեջ միության խորհրդի անհրաժեշտությունը: «Մարդու կարողությունից վեր է կատարելապես հասկանալ ու բացատրել, թե ինչպես է տեղի ունեցել մարդեղությունը»: «Մինչև Նեստորի ի հայտ գալը՝ ամբողջ աշխարհում ընդունված էր, որ Քրիստոսի մեջ Աստծո ճշմարտությունն ու մարդու ամբողջական բնությունը կատարյալ կերպով են միացած ու հաստատված»: Հուկերի համաձայն՝ Եկեղեցին իրավացիորեն մերժել է Քրիստոսի անձի մեջ որևէ բաժանում: «Քրիստոս և մարդկային, և աստվածային անձ է, հետեւաբար մեկի մեջ երկու անձ չկա, ոչ էլ հակառակը, այլ՝ աստվածային անձ, քանզի նա անձնապես (personally) Աստծո Որդին է, և մարդկային, քանզի ունի մարդու որդիների իրական բնությունը» (52:3): «Արդ, ընդդեմ Նեստորի պետք է ասել, որ Կոյսից ծնվեց ոչ թե ոմն մեկը, այլ Աստծո Որդին, մկրտվեց ոչ թե ոմն մեկը, այլ Աստծո Որդին, չարչարվեց ու խաչվեց հենց Աստծո Որդին և ոչ թե ոմն մեկը: Քրիստոնեական հավատի համար էական է միայն այն, որ Աստծո Որդու անսահմանափակ գինն է կյանքի ու փրկության մասին հավատի հիմքը. գին, որ Քրիստոս վճարեց՝ չարչարվելով իբրեւ մարդ» (52:3): Հետեւելով Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու ուսմունքին՝ Հուկերը հավատարիմ է սուրբ հոր այն պնդմանը, թե անհրաժեշտ է չմոռանալ Քրիստոսի մեկ

եւ միակ անձի մեջ աստվածային ու մարդկային բնությունների միությունը՝ դրանով իսկ հերքելով այդ միության եկտիքեական ցանկացած մեկնություն: «Նրա երկու բնությունները սերտ կապված են մեկը մյուսին, եւ այդ մերձավորության մեջ անհնար է, որ նրանք շփոթվեն կամ բաժանվեն: Այս միությունը, սակայն, չի վերացնում նրանց միջեւ առկա տարբերությունը: Մարմինն Աստված չի դառնում, այլ շարունակում է մնալ մարմին, բայց արդեն Աստծո մարմին» (53:2): Անգլիկանները մինչ այսօր էլ հավատարմորեն իբրեւ կանոնական են ընդունում այս ավանդությունը:

Է. «Մոնոֆիզիտ» եզրը, որով շատ հաճախ սխալմամբ բնութագրվում է Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների քրիստոսաբանությունը, վիրավորական ու շփոթեցնող է՝ ուղղակիորեն կապվելով եկտիքեականությանը: Ամբողջ էկումենիկ աշխարհի հետ անգլիկաններն օգտագործում են «միաֆիզիտ» եզրը՝ առնչելով այն Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների կյուրեղյան վարդապետությանը: Այս եկեղեցիներից յուրաքանչյուրն անվանվում է նաեւ իր պաշտոնական հարանվամբ՝ Արեւելյան Ուղղափառ (Oriental Orthodox): Եկեղեցական այս ընտանիքի վարդապետության համաձայն՝ կա ոչ թե միակ ու մեկ բնություն, այլ մի մարմնացյալ, աստվածմարդկային՝ Բանն Աստծո բնությունը: Մեկ ու միակ բնություն ասել կնշանակի, որ մարդկային բնությունը ձուլվել է աստվածայինի մեջ, ինչպես ուսուցանում էր Եւտիքեսը:

ը. Հավատում ենք, որ Բանն Աստված մարմնացավ ու մարդացավ՝ Իր աստվածային անստեղծ բնությունն Իր բնութենական կամքով ու ներգործությամբ միացնելով մարդկային արարված բնությանը՝ նրա բնութենական կամքով եւ ներգործությամբ: Բնությունների միությունը բնութենական է, առանձնավորական, իրական ու կատարյալ: Բնություններն իրարից բաժանված են միայն ստովի: Գործում ու ներգործում է միայն մարմնացյալ Բանի անձնավորությունը՝ մի անձնական կամքով: Հայ Եկեղեցու ավանդության մեջ ԺԲ. դարում Ս. Ներսես Շնորհալին գրում է. «Չենք կարծում, որ աստվածային կամքը հակադրվում է մարդկայինին եւ հակառակը: Ոչ էլ կարծում ենք, որ մեկ բնության կամքը տարբեր է ըստ տարբեր առիթների, այսինքն՝ երբեմն կամքն աստվածային էր, երբ Նա կամենում էր ցույց տալ Իր աստվածային գործությունը, երբեմն էլ՝ մարդկային, երբ կամենում էր ցույց տալ մարդկային խոնարհությունը»:

թ. Մարմնացյալ Բանի մեջ աստվածության եւ մարդկության կատարյալ միությունն էական է մարդու փրկության համար: «Քանզի Աստված այնքան սիրեց աշխարհը, որ իր Միածին Որդուն տվեց, որպեսզի Նրան

հավատացող ամեն ոք ոչ թե կորսվի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհ. Գ. 16), եւ «Քրիստոսի մեջ Աստված աշխարհը հաշտեցրեց Իր հետ» (Բ. Կորնթ. Ե. 19): Աստծո Որդին ունայնացրեց ինքն Իրեն եւ դարձավ մարդ՝ բացարձակապես մեղքից զուրկ, որպեսզի մեր անկյալ մարդկային պատկերը վերափոխի իր սրբության: Այս է այն Ավետարանը, որը կոչված ենք ապրելու ու տարածելու:

ժ. Սույն վերախմբագրված համաձայնագիրը ներկայացնում ենք Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների եւ Անգլիկան Հաղորդության համապատասխան իշխանություններին՝ ի նկատառումն եւ ի գործադրություն:

Բարձրաշնորհ Ջեֆրի Ռոուել, Ատենապետ (Անգլիկան)
/ստորագրություն/

Բարձրաշնորհ Մետրոպոլիտ Բիշոյ, Ատենապետ (Արեւելյան Ուղղափառ)
/ստորագրություն/

Ստորագրված Կահիրեում
15 հոկտեմբերի, 2014 թ.



ԱՆԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՀԱԹ

ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆԻ ՏԱՐԱԶԸ ՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ

Մեծ Եղեռնի եւ հետագա տարիներին հայ ժողովրդին վիճակված փորձությունների հետևանքով ոչնչացան հայ մշակույթի համար բացառիկ արժեք ունեցող անթիվ մասունքներ, այդ թվում՝ հայկական տարազի բազմատեսակ նմուշներ¹։ Օսմանյան Թուրքիայի բարբարոսության հետևանքով Արեւմտյան Հայաստանի բոլոր նահանգներից տեղահանված ու գաղթած հայության կենտրոնը դարձավ Ս. Էջմիածինը։ Հենց այստեղ էլ հայ մեծանուն նկարիչներ Վարդգես Սուրենյանցը (1860-1921 թթ.), Արշակ Ֆեթվաճյանը (1866-1947 թթ.) եւ Սարգիս Խաչատրյանը (1886-1947 թթ.), ովքեր շրջում եւ օգնում էին թշվառ գաղթականությանը, ձեռնամուխ եղան նաեւ նրանց պատկերմանը։ Այս կերպ պահպանվեցին արեւմտահայ տարբեր գավառները ներկայացնող տարազային համալիրները, որոնք հետագայում խթան հանդիսացան տարազի պատմության ուսումնասիրման համար²։

Հոդվածի նպատակն է ցուցադրել եւ մեկնաբանել վերոնշյալ նկարիչների՝ գեղանկարչական հնչեղություն ստացած գրաֆիկական այն աշխատանքները, որոնցում պատկերված են Ի. դարասկզբի Մեծ Եղեռնի հետևանքով իր էթնիկ միջավայրից պոկված ու կորստյան եզրին հայտնված վասպուրականցիների տարազի առանձնահատկությունները։ Այս դիմանկարների շարքն իր ժամանակի ոգու եւ մթնոլորտի լավագույն արտացոլումն է։ Դրանք ընդգծում են պատկերվածների անհատականությունը, նրանց սոցիալական դիրքը։ Դիմանկարներն աչքի են ընկնում դետալների մանրակրկիտ ու նորաճաշակ մշակմամբ, ոճական սերտ ընդհանրություններով՝ կապված գեղարվեստական հարդարանքի հետ, ին-

¹ Լ. Չուգասյան, Արշակ Ֆեթվաճյան, Երևան, 2011, էջ 49։

² Ա. Պատրիկ, Հայկական տարազ, Երևան, 1983։

չը պայմանավորված էր տեղական նախաստիքություններով ու հնամենի պատկերացումներով: Զուգակցելով ազգային ավանդույթները, գեղագիտական նորմերն ու չափանիշները՝ նրանք կերտել են հայկական կերպարվեստի ինքնատիպ նմուշներ:

Վ. Սուրենյանցի՝ գաղթականներին պատկերող ստեղծագործությունները պահպանվում են հայաստանյան խոշոր թանգարաններում³: Նկարիչն իր աշխատանքներում ամենայն բժախնդրությամբ վերարտադրել է հագուստի բոլոր տարրերը՝ արտացոլելով հայ ժողովրդի մշակութային ինքնատիպությունն ու ազգային խառնվածքի որոշ առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են ասեղնագործության, ձեւվածքային լուծման, գունային համադրման, գեղագարդման մեջ:

«1915 թ. Վ. Սուրենյանցը Էջմիածնում էր: Այստեղ նա տեսավ գաղթականների Վանից, Կարինից, Մուշից, Մոկսից, Ալջեւագից: Մի կողմից խղճահարություն, ողբերգականի կարեկցական ընկալում, իսկ մյուս կողմից՝ հիացմունք նրանց պահվածքի, լավատեսության, անմիջականության նկատմամբ: Սովարաթոթի վրա գուաշով ու տեմպերայով նկարեց նրանց՝ շեշտը դնելով դեմքի եւ տարագի վրա: Դեմքերը բարի էին, իսկ տարագները՝ գունագեղ տնայնագործական կտավներից կարված, հավելված ասեղնագործությամբ»⁴:

Վ. Սուրենյանցը հետագայում հրատարակության է պատրաստում իր հուշագրությունները՝ Էջմիածնում տեսածի ու զգացածի մասին՝ «Ճանապարհորդական տպավորություններ» վերնագրով, որտեղ գրում է. «Ես ապշեցի, թե ինչպիսի արտասովոր տակտ են հանդես բերում կանայք իրենց հագուստի գույներն ընտրելիս, ոչ մի կնոջ վրա չտեսա անճաշակություն վկայող որևէ բան: Նույնիսկ այնպիսի ռիսկոտ համադրությունների մեջ, ինչպիսին է կարմիրն ու կապույտը, որոնք, ինչպես հայտնի է, իրար չեն հանդուրժում, այնպիսի տակտով էին կարմրի համար ընտրված որոշ ուժեղությամբ, համապատասխան ինտենսիվությամբ կապույտներ, որ դրանք ոչ միայն իրար չէին խանգարում, այլ նույնիսկ շահում էին փոխադարձ հարեւանությունից: Մի գեղջուկ աղջիկ՝ մոկացի Մարոն, ինձ պարզապես ապշեցրեց իր հագուստի առանձին մասերի գույների զարմանալի գուգորդությամբ. այնպիսի ճաշակով էր նա բաց մանուշակագույն բլուզի համար ընտրել կապտավուն շրջագգեստ եւ այնքան պատշաճորեն էր մեջ-

³ Հայաստանի պատմության թանգարան, Հայաստանի ազգային պատկերասրահ, Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան:

⁴ Մ. Ղազարյան, Վ. Սուրենյանցը եւ Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1998, էջ 21-22:

քին կապել դեղնա-կինամոնագույն գոտին, որ իմ բոլոր նկարիչ ընկերները, որոնց ցույց տվի էտյուդը, չէին կարող աչքը կտրել դրանից, եւ, ինչ մեղքս թաքցնեմ, կասկածեցին, որ սիրաշահել եմ նրան: Անգամ ամենաաղքատ, ուղղակի մուրացկանություն անող կանանց ցնցոտիների կարկատանները այնպիսի չափի զգացումով են ընտրված, որ կարելի է ենթադրել, որ դա արված է ոչ թե կարիքից, այլ՝ ամենանորբ պչրասիրությունից... Գույների այդ բնագործ, անկասկած, շրջապատի բնությունն է թելադրում: Կոլորիտի այդ բնագործ ներհատով է մեր բոլոր հայրենակիցներին, դա անապայման ազգային է, բայց կանանց մեջ՝ ավելի զարգացած: Այլ կերպ ինչպես բացատրել նրբահյուս ժանյակների, գույնզգույն նրբին նախշերի, երանգների տեսակետից չափազանց տակտով արված այն գործվածքների կրքոտ սերը, որոնք նրանք երբեք չեն դադարում արտադրել, չնայած կյանքի անբարենպաստ պայմաններին»⁵:

Վ. Սուրենյանցի նկարներում մեծ մասամբ գերիշխում է Վասպուրականի տարազը, որը տարածված էր Վանա լճի ավազանում եւ հարեւան գավառներում Մոկսում, Շատախում, Սասունում եւ Մանազկերտում:

«Մոկսացի կնոջ դիմանկարը» (նկ. 1), «Մոկսացի Զինե Մարգարյանի» եւ «Վանեցի գեղջկուհի»⁶ նկարներում գունային երանգների նուրբ համադրությամբ ու հստակ գծերով են առանձնանում կանանց համանման հագուստները եւ գլխի հարդարանքը: Տարբերությունը նշմարվում է գործվածքի զարդամոտիվներում: *Կոլորիտի* (կարճ վերնագգեստ) աջ եւ ձախ փեղկերը զարդարում են Վասպուրականի տարազի մաս կազմող կրծքազարդը՝ *շանջիկը*: Գլուխներին ավանդական *քոֆի* է (գլխարկ)⁷՝ հարդարված մարգարիտներով ու արծաթյա ծաղկանման շրջանակներով: Հատկանշական է՝ նկարիչը, երբեմն միեւնույն պատկերում կարեւորելով առանձին տարրերի գոյությունը, մասնավորապես զարդահամալիրի մաս կազմող տարրերը՝ գլխազարդերը, կրծքազարդերը, շեշտը դրել է դրանց մանրակրկիտ նկարագրության վրա⁸: Այս երեսույթը նկատելի է նաեւ Ա. Ֆեթվաճյանի աշխատանքներում:

Վ. Սուրենյանցը պատկերել է նաեւ Տարոնի, Վասպուրականի տղամարդկանց՝ ավանդական հագուստի ձեւերով: Ժողովրդական ասեղնագործության հազարամյա ավանդության ու վարպետության օրինակ

⁵ Մ. Միքայելյան, Վ. Սուրենյանց, Երեւան, 2003, էջ 148-149:


⁶ Այս եւ մնացած նկարները՝ Հայաստանի ազգային պատկերասրահի պաշտոնական կայքէջից են՝ <http://www.gallery.am/hy/>:

⁷ Ն. Ավագյան, Հայկական ժողովրդական տարազը, Երեւան, 1983, էջ 76:

⁸ Նաեւ՝ «Բիթլիսացի կնոջ դիմանկարը», ՀԱԹ, Հ^տ 6802/5:



Նկ. 1 վ. Մուրնյանց,
Մոկացի կնոջ դիմանկար,
ստվարաթուղթ, գուաշ, ՀԱԴ



Նկ. 2 վ. Մուրնյանց,
Գյավաշցի տղայի դիմանկար,
ստվարաթուղթ, գուաշ, ՀԱԴ



Նկ. 3 Ա. Ֆեթվաճյան,
վասպուրականցի հայուհու դիմանկարը,
ստվարաթուղթ, ջրաներկ, ՀԱԴ



Նկ. 4 Ա. Ֆեթվաճյան.
Վասպուրականցի տղայի դիմանկարը,
ստվարաթուղթ, ջրաներկ, ՀԱԹ



Նկ. 5 Ս. Խաչատրյան,
Գաղթական հայ կինը,
թուղթ, գուաշ, ՀԱՊ



Նկ. 6 Ս. Խաչատրյան,
Գաղթական կանայք (Տաճկահայ կանայք),
թուղթ, ջրաներկ, մատիտ, ՀԱՊ

է «Գլավաշցի տղայի» (նկ. 2) դիմանկարը: Երիտասարդը կրում է իշլիկ (կարճ վերնագգեստ), որը հարդարված է գծաշերտերով: Շավարն ամբողջությամբ՝ վերից վար, լայն ու նեղ շերտերով ասեղնագործված է երկրաչափական զարդանախշերով: Գոտկատեղը բոլորում է գծաշերտերով հարդարված գոտին, գրեթե նույն գունային համադրությամբ է պատկերված գլխի հարդարանքի մաս կազմող *փուշին*: Փուշին ծալում է փաթաթում էին գլխարկի ստորին եզրին⁹: Նշենք, որ այն արարական ազդեցության հետևանք էր եւ միջնադարում կոչվում էր *շարփուշ* (արաբ.՝ *սերփուշ*)¹⁰: Նման գլխանոց են կրել թե՛ Բագրատունյաց Գագիկ Ա. արքան, թե՛ Ս. Հակոբ եկեղեցու (Վասպուրականի շրջան) որմնանկարներում պատկերված Արծրունյաց իշխանները¹¹:

«Հագուստների մանրամասները վերարտադրելու յուրօրինակ կարողությամբ է օժտված Ա. Ֆեթվաճյանի տարագների ջրանկար շարքը: Իբրեւ խոշոր մտավորական, հայ մշակույթի նվիրյալ, իրական հայրենասեր եւ գերզգայուն արվեստագետ՝ նա խոր հուզումով էր հետևում դեպքերի զարգացմանը եւ իր ուժերի ներածին ձափով ձեռքի եղածն անում հայրենիքի կերտման համար»¹²:

«Նա (Ա. Ֆեթվաճյանը) Էջմիածին այցելեց 1918 թվականին: Նկարիչը տեսնում էր, որ գաղթն ամենից արագն է ոչնչացնում, անհետացնում հայ ժողովրդական մշակույթի բացառիկ մասունքները, այդ թվում եւ տարագների նմուշները: Նրա հետաքրքրությունը տարագի հանդեպ սկսվել էր դեռեւս 1890-ականներից, երբ նա ստեղծում է ազգային տարագով կանանց ու տղամարդկանց բազմաթիվ մատիտանկարներ, որոնցից «Ալեքսանդրապոլցի հայուհին» նկարը 1900 թ. ցուցադրվել է Թիֆլիսի մի պատկերասրահում»¹³:

1918 թ., իր իսկ խոսքերով՝ այդ «սեւ տարում», շուրջ տասնութ ամիս աշխատելով զարհուրելի պայմաններում, ականատես լինելով անօթեւան ու թշվառության եզրին հասած, սովից եւ համաճարակից Էջմիածնի փողոցներում մեռնող հայրենակիցների մղձավանջային վիճակին՝ նա հավաքում է թանկագին նյութեր, վրձնում հայ կանանց շուրջ 20 պատկեր՝ իրենց նահապետական տարագի մանրամասնություններով:

⁹ Ն.Ավագյան, Հայկական ժողովրդական տարագը, էջ 79:

¹⁰ Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարագին, Վենետիկ, 1923, էջ 180:

¹¹ P. Donabedian, Les arts arméniens, Paris, 1987, էջ 386, նկ. 277, 279:

¹² Լ. Չուգասյան, նշվ. աշխ., էջ 20:

¹³ Գ. Չևմենյան, Արշակ Ֆեթվաճյան, Երևան, 2008, էջ 16:

«Արեւմտահայ գաղթական կանանց նա, ամենայն հավանականությամբ, սկզբից լուսանկարում էր եւ հետո այդ լուսանկարների հիման վրա ստեղծում գունավոր պատկերները: Դա թերեւս միակ միջոցն էր այդ աշխատանքները կատարելու, քանի որ նահապետական կյանքով ապրած, ամաչկոտ եւ քաշվող հայ կանանց դժվար կլինէր համոզել ստանձնելու բնորոշուհու դերը: Դժբախտաբար, այդ լուսանկարներից քիչ բան է պահպանվել նկարչի երեւանյան արխիվում»¹⁴:

Ա. Ֆեթվաճյանի՝ հայկական ազգագրական հանդերձների պատկերները նախ եւ առաջ հետաքրքրություն են ներկայացնում պարունակած հարուստ նյութերով եւ փաստագրական ճշգրտությամբ: Հետագայում դրանք անգնահատելի աղբյուր դարձան տարագների վերստեղծման, ուսումնասիրման եւ պատմության համար, քանի որ զգեստը լոկ ձեւ չէ, այն արտահայտում է եւ ժամանակը, եւ մարդկանց սոցիալական պատկանելությունն ու գեղարվեստական ճաշակը: Դրանցում առկա է ճոխ եւ թանձր գունապնակը, իսկ երանգային ներդաշնակումները ակնահաճ են եւ խոստուն: Հանդերձների գործվածքի տեսակը՝ թավիշը, մորթին, մետաքսը, բամբակը, շղարշը, ժանյակն ու արծաթե զարդերը վերարտադրված են զարմանալիորեն ճարտար վրձնով՝ իրերը ներկայացնելով բացարձակ նմանությամբ¹⁵:

Մեծ վարպետությամբ են աչքի ընկնում նկարչի «*Վասպուրականցի հայուհու*» (նկ. 3) եւ «*Վասպուրականցի տղայի*» (նկ. 4) դիմանկարները, որտեղ արտացոլված է ԺԹ. դ. Վասպուրականի ասեղնագործության եւ արծաթագործության դպրոցների բարձր արվեստը: Նկարիչը հմտորեն կարողացել է պատկերել հագուստի համալիրի առանձին դետալները՝ յուրօրինակ մոտեցմամբ, այն է՝ ընդգծելով զարդանախշված հատվածների նշանակությունը գույնի ու ձևի ճշգրիտ համադրությամբ: Ներդաշնակ ամբողջություն է կազմում «*Վասպուրականցի հայուհու*» հագուստն իր գլխի հարդարանքով, զարդահամալիրով, ասեղնագործ *գոգնոց-մեզարով*: Այն աչքի է ընկնում բավական հարուստ հարդարանքով: Կարմիր *ֆեսիկ* (գլխարկ) ամրացված է եռատախտակ, ակնագարդ, արծաթյա *քնար-մահիչան* (գլխազարդ), որը պատրաստում էին Վանի ոսկերիչ-արծաթագործները¹⁶: Գլխի հարդարանքին հատուկ շքեղություն է հաղորդում *քունքակախիկ-երեսնոցը*: Հագուստի կրծքի բացվածքը ծածկված է դրա-

¹⁴ Լ. Չուգասոյան, նշվ. աշխ., էջ 86:

¹⁵ Գ. Չեմենյան, նշվ. աշխ., Երևան, 2008, էջ 17:

¹⁶ Ն. Ավագյան, նշվ. աշխ., էջ 75:

մաձեւ կախիկներով. վերնագգեստի կրծքամասի եզրերին մինչեւ գոտկատեղ ամառացված է նշաձեւ, արծաթյա *շամշիկ* զարդը: Վան-Վասպուրականի ասեղնագործության առանձնահատկությունները (երկրաչափական զարդամոտիվների կիրառումը) խտացել են *գոգնոց-մեզարում*, որտեղ հանդարտ ու զուսպ գունային անցումներով, զարդաձեւերի բազմազանությամբ տեղաբաշխված են երկրաչափական զարդահորինվածքները: Վանի ասեղնագործ դպրոցում պահպանվել են անթիվ զարդանախշեր, որոնց զգալի մասը շատ հին ծագում ունի¹⁷:

Հագուստի հորինվածքային համանման լուծումներով է հանդես գալիս «Վասպուրականցի փղայի» դիմանկարը: Պատանին գլխին կրում է ասեղնագործ *սրախչի* (գլխարկ)¹⁸՝ նեղ ու լայնակի գծանախշերով, որոնք ամփոփում են ութաթել վարդյակներ: Ուսերն ի վար ձգվում են ոճավորված ձեռագործ *թեզանիք-ջալահիկները*, որոնցից կախված են երկար փնջազարդ ծուպեր: Ձեռքերը բարձրացնելիս, թափահարելիս եւ արագ շարժելիս *ջալահիկները* թելերի պես ծածանվում էին եւ հարաշարժ (դինամիկ) տեսք հաղորդում խմբային առնական պարերին¹⁹: Ինչպես նախորդ պատկերում, այստեղ եւս երիտասարդի տաքատը համաչափ դասավորությամբ պատկերված է երկրաչափական զարդատարրերով: Նախշազարդ գործվածքի (շալի) արտադրությունը տարածված էր հատկապես Շատախում²⁰, որտեղից եւ վաճառքի էր հանվում հարեւան գավառներ: Աղձնիքում տարածված էր նաեւ, այսպես կոչված, *մաքանի շալվարը*, որը զարդարվում էր ասեղնագործությամբ²¹: Այսօրինակ ասեղնագործ տաքատի եւ *թեզանիքների* կիրառությունը լայն տարածում ունեն թե՛ Աղձնիքում, թե՛ Տուրուբերանում:

Կանանցից ու երեխաներից բաղկացած խայտաբղետ ամբոխի կենցաղից զանազան տեսարանները տիպական ու ցայտուն են պատկերված Ս. Խաչատրյանի արվեստում: Նկարիչը այցելում էր բացօթյա ճամբարներում ապաստանած գաղթականներին եւ նկարում: Իր աշխատանքներում դժբախտ տարագիրներին ցույց է տալիս համակերպվողի վիճակում՝ սննդի բաշխման ժամանակ եւ կյանքի տարրական պահանջների գոհացմանը նվիրված զբաղմունքների պահին: Ս. Խաչատրյանը նրանց ներկայացնում է նաեւ որպես էթնիկական տիպ՝ գավառական նախշուն տարագով, երան-

¹⁷ Ս. Դավթյան, Հայկական ասեղնագործություն, Երևան, 1972, էջ 14:

¹⁸ Ն. Ավագյան, նշվ. աշխ., էջ 79:

¹⁹ Ս. Դավթյան, նշվ. աշխ., էջ 14:

²⁰ Ե. Լալայան, Վասպուրական. Տնայնագործություն. ԱՀ, պրակ Ա., Թիֆլիս, 1914, էջ 27:

²¹ Ն. Ավագյան, նշվ. աշխ., էջ 59:

գապնակի ամենավաղ գույներով, ինչպես՝ «Մշեցի փարագիրները», «Հայ գյուղացու փիպարները», «Մասունցի 90-ամյա կինը» և այլն:

Ս. Խաչատրյանը, կենսունակ, գվարթ և լավատես նկարագրի տեր արվեստագետ լինելով, ցանկացել է իր նկարներում հավերժացնել տարագիրների հուսալի, ուրախ բոլակները: Նրա՝ գաղթականությանը նվիրված գրեթե բոլոր ստեղծագործություններում կերպարները ապրում և շարժվում են կանաչագարդ բնության մեջ, երկնքի մուգ կապույտ խորքի վրա, հաճախ՝ արևի ջերմ ճառագայթների տակ²²:

Տարածաշրջանին բնորոշ հատկանիշները, այն է՝ զարդանախշերը, գույները, ուրույն ուրվագիծը, Ս. Խաչատրյանը խտացրել է «Գաղթական հայ կինը» (նկ. 5), «Տաճկահայ կանայք» (նկ. 6) աշխատանքներում: Նկարիչը ձևի ու գույնի վերարտադրումը փորձել է մեկտեղել կանանց խորին հույզերի և ապրումների հետ: Ի տարբերություն նախորդ ստեղծագործությունների՝ «Գաղթական հայ կինը» պատկերում առավել ազատ ու համարձակ վրձնահարվածներով է փորձել հասնել ձևերի բացարձակ մատուցմանը: Չնայած *գոգնոց-մեզարի* անավարտ տեսքին՝ այն մեզ հուշում է Վասպուրականի ավանդական հագուստ լինելու մասին: Հարկ է նշել, որ Վան-Վասպուրականի հագուստի զարդահորինվածքը սերտ աղերսներ ունի հայկական գորգերի, կարպետների զարդանկարների հետ. այստեղ ևս իրենց արտահայտությունն են գտել կենդանական և բուսական ռճավորված զարդատարերը²³: Նկատենք նաև, որ *գոգնոց-մեզարներն* ունեն գորգերի գրեթե նույն կառուցվածքը՝ շրջագոտի, հիմնական դաշտ, որը շարքով ամփոփում է զարդաշերտերն իրենց լուծումներով: Այս հորինվածքները գետեղված են հաջորդ՝ «Տաճկահայ կանայք» էսքիզում՝ տարագիրներին պատկերելով թիկունքից և կողքից՝ ցուցադրելու համար կարճ վերնագգեստի թելքի ու թիկունքի զարդաշրջանակները: Այս զարդամոտիվները, անշուշտ, ինքնանպատակ չեն եղել, սերտ կապեր ունեն տվյալ շրջանի գեղարվեստական պատկերացումների և ավանդական ու հնամենի ձևերի հետ²⁴:

Հայ կանանց արտահայտիչ տեսքը, նրանց վառ, նուրբ ճաշակով հագուստը գրավել է նաև ռուս գեղանկարիչ Ե. Լանսերեի ուշադրությունը. նա Ի. դարասկզբին այցելել է Հայաստան ու այնքան է հրապուրվել հայ կանանց

²² Ռ. Շիշմանյան, Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 341-342:

²³ Գոգնոցների մասին առավել մանրամասն տե՛ս Ս. Պողոսյան, Գոգնոց-մեզարները հայոց ազգային տարագի համակարգում. Հայոց գորգագործական մշակույթը, Երևան, 2011, էջ 83:

²⁴ Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, Երևան, 1955, էջ 80:

հագուստի արտասովոր գեղեցկությամբ, որ ստեղծել է ազգային հանդերձների հարուստ հավաքածու²⁵: Նրա աշխատանքներում տեղ են գտել զանգեզուրցի, շատախցի, շամախեցի, մշեցի, վասպուրականցի, գորիսեցի կանանց եւ գեյթոնցի ռազմիկի կերպարները՝ իրենց բնորոշ տարազաձևերով:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ վերոնշյալ գեղանկարիչների ստեղծագործություններն ունեն պատմամշակութային վավերագրերի նշանակություն, քանի որ կրում են հագուստների բնօրինակ համալիրներին բնորոշ բոլոր տարրերն ու առանձնահատկությունները՝ միաժամանակ հետաքրքիր դառնալով արվեստաբանության, մշակութաբանության, ազգագրության տեսանկյունից: Սույն նյութի արվեստաբանական հենքը տվյալ ժամանակաշրջանին բնորոշ թեմատիկայի գեղարվեստական անդրադարձն է, քանի որ նկարիչները ցայտուն եւ արտահայտիչ են ներկայացրել իրականությունը (որը, կախված ժամանակի հոգեցունց իրադրությունից, երբեմն կարող էր քիչ գեղարվեստականացված լինել): Երբ դիտարկում ենք նկարիչների գործերը՝ միեւնոյն հարթության վրա դնելով նրանց ստեղծագործական մոտեցումը, ակնհայտ է դառնում, որ երեքն էլ տեսել են նույն իրականությունն ու փոխանցել են այն միեւնոյն դիտակետից. երեք հայացք, որ օգնում են տեսնել եւ զգալ տվյալ ժամանակաշրջանի հայ էթնոսի գեղարվեստական ճաշակն ու աշխարհընկալումը:

РЕЗЮМЕ

Во время армянского геноцида и в последующие годы тысячи людей лишились жизни. Были потеряны многие ценности, имеющие уникальное значение для армянской культуры, в том числе многие экземпляры национального костюма Западной Армении. Сохраненные экземпляры были в основном одежды эмигрантов, которые известны благодаря картинам А. Фетфаджяна, В. Суренянца и С. Хачатряна. В начале XX в. эти художники были в Эчмиадзине, где собрались тысячи эмигрантов из разных губернь Западной Армении.

Ряд картин представляют интерес в первую очередь содержанием богатых материалов и документальной точностью.

В статье сделан тщательный анализ художественной орнаментации национального костюма Васпуракана, подчеркивая высший уровень шитья и серебрodelия. Элементы одежды и украшений представлены большим мастерством и точностью.

Ряд этих графических работ представляют большую ценность в области изучения истории армянского национального костюма и нуждаются в более тщательном исследовании.

²⁵ “Академия художеств СССР”, Е. Лансере, каталог выставки, Ленинград, 1975, с. 11:


SUMMARY

During the Armenian Genocide and the following years thousands of people and relics as well as miscellaneous patterns of Armenian national costumes of Western Armenia having an exceptional value were annihilated and vanished. The preserved patterns mainly belonged to refugees, which persisted due to renowned painters such as A. Fetvajyan, V. Surenyants and S. Khachatryan. In the beginning of the 20th century these painters were in Etchmiadzin where thousands of orphans and migrants from different regions of Western Armenia were gathered.

First of all the series of paintings are interesting with their documentary precision and wealthy substance.

The paper gives detailed reverberation to artistic adornment of Vaspurakan's national costume accentuating national features of sumptuous embroidery and silversmithery of the region. Spices of garment textile and jewellery are rendered with dexterous brushwork introducing the costume in great reality.

The existence of these rank of graphic works are valuable for study of the history of Armenian national costume and needs more scrutiny.



ԱՐՄԵՆ Շ. ՍԱՐԳՍՅԱՆ

քանասիրական գիր. թեկնածու, ՀԱԻ

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ
ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ-ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ
ՏԱՐԲԵՐԱԿԱՅԻՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ**

Իերևա քչերին է հայտնի, որ մամուլում Հովհ. Թումանյանի առաջին տպագիր գործերը եղել են Լոռու ժողովրդական երգիծապատումները եւ գվարճախոսությունները: Թումանյանագետներին դա անհայտ է եղել մինչև գրողի մի փունջ գրառումների ի հայտ գալը: 1963 թ. վաստակաշատ գրականագետ Էդ. Զրբաշյանը մի հոդված է տպագրում¹, որտեղ ներկայացվում են նաև 1887 թ. մամուլում լույս տեսած թումանյանական գրառումները: Դրանք տեղեկություններ էին Դսեղի աշխարհագրական դիրքի, կենցաղի ու հնությունների վերաբերյալ, ինչպես նաև՝ մի ավանդագրույց եւ 12 անեկդոտ: Այդ ժամանակ Էդ. Զրբաշյանին ծանոթ են եղել Հովհ. Թումանյանի գրառումների միայն 1887 թվականին տպագրված նյութերը:

Հետագա պրպտումները նոր բացահայտումների են հանգեցնում: Գրականության եւ արվեստի թանգարանում պահպանվող՝ բանաստեղծի պատանեկության եւ երիտասարդական տարիների ամենամտերիմ ընկերներից մեկի՝ Անուշավան Աբովյանի «Իմ հիշատակարանը» ձեռագիր հուշերի վկայություններից մեկը հնարավորություն է տալիս լույս սփռել ոչ միայն 1887 թ. «Նոր-Դար» օրաթերթում երեք աստղանիշով տպագրված վերոնշյալ 12 նյութերին, այլև 1889-1890 թթ. նույն պարբերականի համարներում՝ կրկին նմանատիպ աստղանշային մակագրությամբ տպագրված եւս տասը ժողովրդական երգիծական ստեղծագործությունների թումանյանական գրառումներին²: Հիշատակարանում Ան. Աբովյանը գրում է. «Թումանյանը գրա-

¹ Էդ. Զրբաշյան, Նորահայտ էջեր Թումանյանի ժառանգությունից, ՏՀԳ, 1963, թ. 12, էջ 69-76:

² Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ)՝ 10 հատորով, հ. 5, Հավելված. Անեկդոտներ Լոռվա կյանքից, Երևան, 1994, էջ 580-588: Մեջբերվող

կան ասպարեզ մտավ «Նոր-Դար» օրաթերթում Դսեղ գյուղի ընդհանուր նկարագրությամբ եւ գյուղացիների նիստ ու կացի մասին մի նամակ տպելով: Այնուհետեւ սկսեց լոռեցիների կյանքից մի շարք անեկդոտներով ողողել «Նոր-Դարի» էջերը»³: Հենց այս հիշատակությունն էլ հնարավորություն է տալիս հավաստելու, որ մամուլում Թումանյանի առաջին տպագիր գործը եղել է ոչ թե «Շունն ու կատուն», այլ Դսեղի աշխարհագրական դիրքի, կենցաղի ու հնությունների վերաբերյալ տեղեկությունները, մի ավանդազրույց եւ լոռեցիների ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսությունների 22 սնուշներ:

Նշենք նաեւ, որ ԺԹ. դարի առաջին կեսը Երոպայում, այնուհետեւ արեւելքի որոշ երկրներում, նշանավորվել էր ազգագրական եւ բանահյուսական արժեքները պեղելու, վեր հանելու, հրատարակելու եւ դրանց մեջ ազգայինի վաղնջական արմատները բացահայտելու աննախադեպ մի շարժումով, որի սերմերը, շնորհիվ Աբովյանի եւ Թադիաղյանի գրական, թարգմանական, մանկավարժական, ինչպես նաեւ ժողովրդական բանավոր ստեղծագործությունների հավաքչական գործունեության, կարճ ժամանակ անց իրենց ծիլերն են տալիս հայկական միջավայրում: Այդ երեւոյթը առավել մեծ թափ է ստանում հատկապես ԺԹ. դարի երկրորդ կեսից՝ ոչ միայն տպագիր մամուլի աշխուժացմամբ, որոնց էջերում սկսում են հաճախակի հրապարակվել պատմական Հայաստանում եւ նրան հարակից տարածքներում ապրող հայության բանավոր մշակութային արժեքները, այլեւ ազգագրական եւ բանահյուսական նյութերի մի շարք ժողովածուների (այդ թվում նաեւ անեկդոտների) հրատարակությամբ:

Անշուշտ, գրական ասպարեզ դեռ ուռք չդրած, սակայն հետաքրքրությունների լայն մտահորիզոն եւ ընթերցանության անհագ ծարավ ունեցող երիտասարդ Թումանյանն իր հնարավորությունների սահմաններում հաղորդակցվել էր դրանց: Նա ոչ միայն ունկնդիրն ու կրողն է եղել իր հայրենի բնաշխարհի ժողովրդական բառ ու բանի, այլեւ պատանեկան տարիներից դրանք գրառելու երազանքներ ու ծրագրեր է ունեցել, որոնց մասին կրկին պատմում են Ան. Աբովյանի հուշերը. «Ցանկանում էինք դեռ ուսում առնել, հետո գնալ գյուղերը, մտնել ժողովրդի մեջ ու գրի առնել հին ավանդություններ, լեգենդներ, հեքիաթներ, առակներ, դյուցազներգություններ, անեկդոտ-

թումանյանական գրառումների, նամակների եւ հուշագրությունների ուղղագրությունը եւ կետադրությունը ներկայացվում է ըստ համապատասխան սկզբնաղբյուրի:

³ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969, էջ 225:

ներ ու առասպելներ եւ հրատարակել: Իսկ գիտեցածներս սկսել էինք գրի առնել եւ կարդալով հրճվում էինք ու ոգևորվում...»⁴:

Ապագա բանաստեղծն ու մշակութաբանը Ան. Արովյանի եւ վերջինիս համագյուղացի ուսուցիչ Եգոր Խարազյանի հետ մտադիր է եղել ձեռնարկել հայ ժողովրդական երգիծական ստեղծագործություններին հանրությա՝ նը հաղորդակից դարձնելու գործը: Մինչեւ ժողովածուի հրատարակությունը նա իր գրառած՝ Լոռու երգիծական մանրապատումներից ու զվարճախոսություններից պարբերաբար տպագրության է հանձնում «Նոր-Դար»-ին, որոնք հրատարակվում են 1887, 1889 եւ 1890 թթ. համարներում:

Որոշ ժամանակ անց, սակայն, Թումանյանը հուսախաբ է լինում, քանզի նրան հայտնի է դառնում, որ «Նոր-Դար»-ում տպագրված իր նյութերը, առանց գրառողի իմացության, նույնությամբ կամ լեզվաճանկան որոշ փոփոխություններով հայտնվել են Սմբատ Շահագիզյանի կողմից պատրաստվող «Ծիծաղի տոպրակ» անեկդոտների ժողովածուում:

Ռուսաստանի Կամենեց-Պոդոլսկում գտնվող Անուշավան Արովյանին 1890 թ. օգոստոսի 27-ին գրած նամակներից մեկում Հովհ. Թումանյանը խոր հիասթափությամբ, բայց միեւնոյն ժամանակ վեհանձն պահվածքով իր վերաբերմունքն է արտահայտում այդ գրքի եւ նրա հեղինակի մասին. «Չգիտեմ քեզ գրել եմ թե չէ, որ ... Սմբատ Շահագիզը՝ անեկդոտների գիրք է հրատարակում⁵. այն գիրքը, որի միտքը ծագեցնելը քեզ է պատկանում, եւ որ պետք է երեքով (իմա՝ Հովհ. Թումանյանը, Ան. Արովյանը եւ Ե. Խարազյանը-Ա. Ս.) հրատարակեինք: Մի մասը արտագրած է «Նոր Դար»-ից, – գրում է Թումանյանը նամակում ու ցավով ավելացնում, – Անունը դրել են «Ծիծաղի տոպրակ»: Անունն ավելի գեղեցիկ է, քան թե յուր վարմունքը... Ես ոչինչ չասացի»⁶:

Ի դեպ, Թումանյանի Երկերի լիակատար ժողովածուի (10 հատոր) 5-րդ հատորի հավելվածին վերաբերող ծանոթագրությունում կազմողները սխալմամբ նշել են, որ «սկզբնապես գիրքը կազմելու գործին պետք է մասնակցեին նաեւ Ան. Արովյանն ու Հ. Թումանյանը: Սակայն հետո շուրավերցի ուսուցիչ Սմբատ Շահագիզյանը հեռացրել է նրանց այդ աշխատանքից...»⁸:

⁴ Անդ, էջ 222-223:

⁵ Խոսքը 1890-ական թվականներին շուրավերցի գավառական ուսուցիչ Սմբատ Շահագիզյանի մասին է:

⁶ Սմբատ Շահագիզյանը «Ծիծաղի տոպրակ»-ը հրատարակել է 1892 թվականին:

⁷ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Նամակներ 1885-1922, Նամակ Անուշավան Արովյանին Թիֆլիս-Կամենեց-Պոդոլսկ, 1890 թ., օգոստոսի 27, Տիֆլիս, 1945, էջ 22: Նույնը տե՛ս՝ ԵԼԺ, հ. 9, 1997, էջ 26:

⁸ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 5, էջ 818:

Այդ կապակցությամբ փաստենք, որ Ան. Արովյանի հիշատակարանում հստակ նշված է, որ սկզբում երկուսով՝ Ան. Արովյանն ու Հովհ. Թումանյանը, այնուհետև՝ երեքով (այդ աշխատանքին ներգրավվում է նաև փորձառու Ե. Խարազյանը) պետք է իրականացնեին անեկդոտների ժողովածուի հրատարակության գործը: Սմբատ Շահագիզյանի խնդրանքը՝ իրեն եւս ներգրավելու այդ աշխատանքներին, մերժվում է. «...*մեզանից խմանալով, որ Խարազյանի հետ մրտադիր ենք երեքով մի ժողովածու հրատարակել, թախանձեց, որ իրեն էլ մասնակից անենք, քանի որ ինքը բավականաչափ անեկդոտներ ունի հավաքած: Չհամաձայնեցինք*»⁹, – թումանյանական իր հուշերում գրում է Ան. Արովյանը:

Իսկ թե ինչպիսի՞ նյութեր են Հովհ. Թումանյանի գրառած ժողովրդական երգիծական ստեղծագործությունները, աշխարհագրական ինչ տարածքներ են ներկայացնում դրանք եւ ինչ որակի ու արժեքի գրառումներ են, ինչպիսի՞ մոտեցում է ցուցաբերում երիտասարդ Թումանյանը ժողովրդական բանավոր մշակույթի հանդեպ, «Նոր-Դար»-ում հրապարակած նմուշները հետագայում շարունակվել են շրջանավել հայոց միջավայրում եւ այլ հարցերի պատասխանները կաշխատենք այստեղ հնարավորինս ներկայացնել:

Ըստ կառուցվածքի՝ թումանյանական ժողովրդական երգիծական ստեղծագործությունների գրառումները երկու խմբի են բաժանվում՝ *անայուժե միահիտասական եւ երկիտասական զվարճախոսություններ*, որոնց զավեշտը ստեղծվում է ուղղակի խոսքի միջոցով¹⁰, եւ *որոշակի սյուժե ունեցող զվարճապատումներ*, որոնցում անսպասելի ծիծաղը դրսևորվում է գործողության եւ ուղղակի խոսքի օգնությամբ¹¹: Ընդ որում սյուժեով զվարճապատումները գերազանցում են անայուժեին:

Լոռու մանրապատում-զվարճախոսությունների թումանյանական գրառումները միատարր չեն եւ սոսկ հայկական մի բնակավայրի պատկերը չեն ներկայացնում: Ճիշտ է, գործող անձինք լոռեցիներն են, մանրապատումներից մեկում նրանց հետ է նաև աշտարակցին, սակայն ընդգրկած հարցերի ու խնդիրների մի մասը նաև այլ տարածաշրջաններին է վերաբերում:

Երգիծապատում-զվարճախոսություններն առնչվում են գյուղի եւ քաղաքի հակասություններին, ժողովրդի ապրելակերպին, ժողովրդական ու կրոնական ծիսակարգին (հարսանիք, թաղում, Զատիկ), տարբեր տարածաշրջանների մարդկանց ու ազգությունների փոխհարաբերություններին,

⁹ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969, էջ 226:

¹⁰ **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ, հ. 5, էջ 580-588, թ. 2, 5, 8, 11, 12, 16, 18, 19 (նյութերը հավելվածում աստղանիշերով են, մենք թվերով համարակալել ենք ըստ հերթականության - Ա. Ս.):

¹¹ Անդ, թ. 1, 3, 4, 6, 7, 9, 10, 13, 14, 15, 17, 20, 21, 22:

ժողովրդախոսակցական բառերի եւ դարձվածքների զավեշտալի դրսևորումներին եւ այլն, ու այս ամենը՝ լոռեցու ինքնատիպ եւ միամիտ խոսքի ու գործողությունների միջոցով:

Միախոսական եւ երկխոսական կառույցներում զավեշտը ստեղծվում է մեկ կամ մի քանի անձանց արտաբերած ուղղակի խոսքի օգնությամբ.

«Մի լոռեցու կալումը լծած եզը կորեղ էր: Երկու օր որոնելուց հետո նա պատահողին հարցնում էր. - Տղերք, կալումը մեջքը թողուր եզն եք տեղեղ, թե չէ»¹²:

Կորցրածին փնտրելիս միամիտ գյուղացու արտաբերած՝ զավեշտ առաջացնող խոսքի հենքի վրա ստեղծված նմանատիպ բազմաթիվ տարբերակներ են շրջանառվել, որոնցից մեկն էլ պատմում է գնացքի վագոնից կախած գուղի (կտորից կարած ուսապարկ) մասին. գյուղացին գործը վերջացնելուց հետո գալիս տեսնում է՝ ո՛չ ուսապարկը կա, ոչ էլ գնացքը, եւ «երկաթգծի երկայնքով անհանգստացած ետ ու առաջ է անում ու հանդիպողին հարցնում.

«Գուդեն ոռին պոեզ չե՞ք տեղեղ...»¹³:

«Ծիծաղի տոպրակ» ժողովածուում ներկայացված գվարճապատումի առաջին մասը թումանյանականն է, երկրորդ մասը՝ դրա տարբերակային դրսևորումը: Թումանյանի գրառման մեջ ընդգծվում է կորցրած եզանը գտնելու տարբերանշանը՝ թողուտ լինելը, ժողովածուում տարբերակիչ նշանի հետ նաեւ կորած մոգու կորստյան դարդից շփոթված տիրոջ անկապ խոսքը. *«Բարի մոգի, բալբալ դաշխա (ճակատին սպիտակ նշան ունեցող) ըրիգու տեսած ըլեք, չալ չաթուն (մնագախառն բրդե կարճ թոկ) պոզին մոգին»¹⁴:*

Ժողովրդի բանավոր խոսքում անորոշություն արտահայտող, այսպես ասած, *բան*-ական կամ *իքը*-ական կառույցների անիմաստ հաճախակի կիրառության հետեւանքով մի շարք անեկոյոտներ են ստեղծվել՝ զավեշտ առաջացնելու համար դրանք գործածելով որոշակի իմաստ արտահայտող կադապարի մեջ: Թումանյանական գրառումում եւս չնայած արտաբերողի խոսքի մեջ անորոշություն արտահայտող բառը ներկայացվում է իբրեւ ընկալելի միավոր, այնուամենայնիվ, երիտասարդ գրառողը բացում է փակագծերը, այսպես ասած, «թարգմանում է», այլապես ոչ բոլոր ընթերցողներին կարող էր հասանելի դառնալ ասելիքը.

Լոռեցի հովիվը ձայն է տալիս մի սարից դեպի մյուսը, իրեն ընկերին:

¹² Անդ, էջ 586:

¹³ Ս. Քոչարյան, Զվարճապատումներ եւ իրապատումներ, Երևան, 2008, էջ 7:

¹⁴ «Ծիծաղի տոպրակ». անեկոյոտներ հայ եւ օտարների կեանքից, աշխատասիրեց դպիր Ս. Ս. Շահազիզեան, Թիֆլիս, 1892, էջ 28:

- Հեյ՛յ Համբո, Հսնմբո, ադա, քե մնադադ, էն ըքանց ըքին աաա ձեր իքն ըքեյ ա իքա ըքեյ, եկեք ըքեցեք, թե չէ էն իքը կը գա կ'ըքի, կասեք դուք եք ըքեյ, ալսինքն, էն Մարկոսանց Ղուկասին աաա ձեր էժը ծնեյ ոլ է քերեյ, եկեք տա-րեք, թե չէ գայլը կըգա կուրի, կասեք դուք եք կերեյ¹⁵:

Ահա նման ինքնատիպ մեկնաբանությամբ լոռեցու մի գվարճախոսու-թյուն ես՝ տպագրված շուրջ մեկ դար անց.

Համբարձումը խորի դեզի վրայից ձայնում է կնոջը.

- Ախ՛ջի՛, Վարդո՛ւշ, օրը ճաշ դառալ, էդ բանը բանովը տուր, բան արա, որ գամ բան անեմ:

Կինը փնթփնթաց.

- Այ սիրտդ սեւանա, հա՛, ոնց էլ հիշում ա, որ չորս ձու ա մնացել տանը¹⁶:

Թումանյանական գրառումներից մեկն էլ սեղմ կառուցվածքում երկխոսությունների միջոցով կարողանում է ներկայացնել թե՛ սարեցիների (տվյալ դեպքում լոռեցիների) ապրելակերպը, նիստ ու կացը, թե՛ թաղման ազգային ծիսակարգին առնչվող մի քանի դրվագներ՝ ժամ ու պատարագ անելը, հոգե-հաց տալը.

Մի լոռեցի ձայն է տալիս խոզարածին.

- Հեյ, Սարո՛ւ, Սարո՛ո՛ւ, ադա, չալ մերունը դվեր արա, դվեր արա՛:

- Ադա ո՛ր չալ մերունը, ո՛ր:

- Էն որ աճարկույունը առչը բոնեյ էր:

- Ընչի՛ միտը դվեր անեմ, ընչի՛:

- Ադա սրալը մեռել ա ժամ անենք, ժան՛, ժան՛

- Ադա խի ա մեռե՛լ:

- Բղորդան ա կերեյ, բղորդան՛¹⁷:

Այս գվարճախոսությունն ասես հիշեցնում է Հր. Մաթևոսյանի սցենա-րով նկարահանված «Մենք ենք մեր սարերը» կինոնկարի վերջին դրվա-գը, երբ ոչխարի հոտը քաղաքի սպանդանոց տանող հովիվները սարեցի գյուղացիներին բարձրաձայն հաղորդակից են դարձնում իրենց կատարած «հանցանքին» ու դրա հետեւանքներին: Ինչ խոսք, գրողն անշուշտ օգտվել է ժողովրդական խոսքի մատուցման նմանատիպ ձեւից՝ ասելիքը խտացնելով այլոց համար գուցե գավեշտալի, բայց սարեցիների համար՝ սովորական-ա-նօրեական երկխոսության մեջ:

¹⁵ **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ, հ. 5, էջ 581:

¹⁶ «Պատմում ու կատակում էր Գալուստ Գալստյանը», Երևան, 1994, էջ 32:

¹⁷ **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ, հ. 5, էջ 582:

Կտրվածությունը կրոնական եւ ժողովրդական ծիսակարգից ու ազգային արմատներից շատ դեպքերում ծիծաղելի միջադեպերի եւ զավեշտալի պատումների ստեղծման տեղիք է տալիս: Թումանյանի գրառած զվարճախոսություններից մեկն էլ առնչվում է Զատիկի ծիսակարգի ժամանակ ասվող *Քրիստոս հարյալ ի մեռելոց* խոսքին եւ *Օրհնյալ է հարությունը Քրիստոսի* -ի փոխարեն արտաբերված զավեշտալի պատասխանին:

*Զարկին լողըցի հովվին ասացին՝ Քրիստոս հարյալ ի մեռելոց – հա՛, մեռելոց, – համաձայնվեց հովիվը*¹⁸:

Շուրջ 100 տարի անց այդ պատումի՝ մեր գրառած տարբերակներից մեկի զավեշտը եւս քրիստոնեական ծիսակարգին անհաղորդ լինելու, ինչպես նաեւ գրագիտության պակասի հետեւանքով է: Եթե առաջինում ծիծաղ հարուցողը կյանքը սարերում անցկացնող անգրագետ հովվի խոսքն է, ապա մերօրյա գրառումը կապված է քաջնազարական մտածողությամբ քաղաքապետի պաշտոնական փոխհարաբերություններին հատուկ խոսքային արտահայտության հետ:

Զարիկի օրը Վանաձորի քաղաքապետարանի աշխատողներից մեկը ներս ա մըրնըմ քաղաքապետի աշխատասենյակն ու ասըմ՝

Քրիստոս հարյալ ի մեռելոց:

Դարբինյանը վրա յա բերըմ՝

- Գնա՛, գնա՛, ախչիկ ջան, ինձ արդեն էդ մասին զեկուցե՛լ են՝

Թումանյանական գրառումներում հանդիպում ենք նաեւ հարսանեկան ծիսակարգին առնչվող երկու ստեղծագործության, որոնցից մեկում ներկայացված է քաղաքի մարդկանց «անսովոր» հագուկապն ու *գարդարվածությունը* տեսնելուց հետո գյուղացու՝ զավեշտ առաջացնող զարմացական խոսքը:

*- Պասա՛, պա՛, պա՛, ձեզ մասրադ, քաղկցիք չիմ էլ նոր են հրսանիք էլե՛լ*²⁰:

Պարզամիտ գյուղացու զարմանքը արդարացված էր. ի տարբերություն քաղաքների՝ գյուղերում մարդիկ նոր հագուստներ էին հագնում եւ զարդեր կրում հիմնականում ժողովրդական տոնախմբությունների կամ էլ հարսանեկան ծիսակատարությունների ժամանակ, ինչն էլ, բնականաբար, կապված էր ԺԹ. դարի երկրորդ կեսերին առկա՝ գյուղաշխարհի մարդկանց սոցիալական ծանր վիճակի հետ:

¹⁸ Անդ, էջ 586:

¹⁹ Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու, այսուհետև մեջբերվող նյութի կողքին փակագծում կնշվի համառոտագրությունը՝ ԱՄՇՀ:

²⁰ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 5, էջ 583:

1997 թ. նմանատիպ մի արտահայտության (կրկին լռեցու, այս անգամ երեխայի շուրթերից հնչած) ունկնդիր եղա Ախթալա կայարանում մի թաղման արարողության ժամանակ: Հնգամյա երեխան, թեքվելով դեպի պապը եւ ցույց տալով փայլուն կոշիկներս, ցածրաձայն ինչ-որ բան շնչաց նրա ականջին: Պապը սաստեց թոռանը, ինչն իմ աչքից չվրիպեց, ու հարցրի. «Ի՞նչ ասավ երեխեն, *Դավիթ*»: Պապը հրաժարվեց կրկնել երեխայի ասածը, բայց երբ ես համատեցի, ստիպված էր կրկնել նրա խոսքը. «*Էդ պապիկի կոշիկները մեռլի կոշիկներ են, չէ, պապի*» (ԱՄՇՀ):

Խորհրդային կարգերի փլուզումից հետո Հայաստանի գյուղերում ստեղծված սոցիալական ծանր վիճակն էր պատճառ դարձել նման զավեշտալի «մեկնաբանության»: Այդ տարիներին գյուղաշխարհի երեխան նոր հագուկապ տեսնում էր միայն թաղման արարողությունների ժամանակ, այն էլ հանգուցյալի հագին....

Ժողովրդական ասույթաբանության կիրառության ժամանակ ասելիքի ականա սխալ արտաբերումը երբեմն զավեշտալի միջադեպերի ու անսպասելի ծիծաղի առաջացման առիթ կարող է հանդիսանալ: Թումանյանական գրառումներում *օրհնանքա-անեծքային* կառուցվածքով է ստեղծված «*Լորցու օրհնանքը*» պատումը, որտեղ խոսակցի կողմից արտաբերված օրհնանքն ընկալվում է նաեւ իբրեւ անեծք.

Մի լորցի անցնելիս հարեւանը հրավիրում է թաժա հաց ուրելու. «Աղւ՛, Սարք դեւրն արի՛, րաք հաց կրրի՛». – Շնորհակալ եմ քի մաւրադ, իադադ եմ, ձեր րաք հացը Ասրո՞ծ կրրի, – պապասխանում է անցվորը²¹:

Օրհնանքա-անեծքային կառուցվածքով երգիծական մանրապատումների հանդիպում ենք նաեւ այլ տարածաշրջանների հայերից կատարված գրառումներում, ինչպես, օրինակ, վանեցիներից Ի. դարասկզբին գրառած «*Ինչըիս տյու իմ շորեր չորցուցիր*» պատումը²², երբ արած լավության դիմաց լավություն անողը «օրհնվում է». «*Ինչըիս տյու իմ շորեր չորցուցիր, ասարվածն էլ քե չորցուցի*» «օրհնանքով»: Նմանատիպ նյութեր գրառել ենք նաեւ վերջին 20-25 տարիներին, որոնցից մեկում «օրհնվում» է Երեւանի Սարի թաղի ոլորաններում ավտոբուսը կանգնեցնող վարորդը՝ մեծահասակ կնոջ կողմից ստանալով «*Ապրեն, բալա ջան, դուն ինձ վեր կալար, թող Ասրված էլ քեզ վեր ունի*» (ԱՄՇՀ) պարգև-օրհնանքը: Մյուսում «օրհնանքը» ուղղված է տան վառված լամպը փոխողին. «*Ապրես, բալա ջան, դուն իմ տունը լուսավորեցիր, Ասրված էլ թող քու ֆոքին լուսավորի...*» (ԱՄՇՀ), կամ էլ՝ «*Վսյ, Վարդ-*

²¹ Անդ, էջ 580:

²² «Պատումն ու կատակում էր Գալուստ Գալստյանը», Երեւան, 1994, էջ 32:

գեա ջան, դու որ մեր ըրեխին կրակիցը փրգեցիր, թող կրակ վեր գա քու վրա» (ԱՍՇՀ):

Ի դեպ, հայ ժողովրդական երգիծապատումներում հանդիպում ենք նաև սրա հակառակ երևույթին, երբ անեծքն է ընկալվում իբրեւ օրինանք.

Քյավառցին արաղը լցնում ա բաժակի մեջ, բաժակի վրա խաչ ա հանում, ասում.

- Էհ, գնալըդ ըլի, յեպ գալըդ չըլի (ԱՍՇՀ):

Այդ անեծքի հենքի վրա ստեղծված գվարճապատումը՝ իբրեւ օրինանք, կիրառվում է նաև հիվանդի՝ հիվանդանոցից դուրս գրվելիս: Սակայն սա էլ հարաբերական է, քանզի այդ անեծք-օրինանք-մաղթանքը ծննդատնից դուրս գրվողներին երբեք չեն ասում:

Հովհ. Թումանյանը հայրենի բնաշխարհի մարդկանց համով-հոտով երգիծանքը միայն ներկայացնողի դերում չի հանդես գալիս: Երգիծական մանրապատում-գվարճախոսություններում արդեն իսկ պարզորոշ նկատելի է ապագա մեծ մտածողի եւ վերլուծաբանի՝ ոչ միայն բանահավաքչական գործունեության ասպարեզում ունեցած հետաքրքրասիրությունը, այլեւ ազգային արժեքների, մասնավորապես հայոց բառ ու բանի հանդեպ ունեցած անհագ սերը, բանագիտական պրպտումներն ու առողջ եզրահանգումները:

Ժողովրդական ստեղծագործությունը մատուցելիս նա նաև այս կամ այն գյուղին ու նրա մարդկանց ոգուն համապատասխան տրված մականունների կամ էլ կրկնակ մականվան, տվյալ պատումի տեսակի, նրա շրջանառվող տարբերակի ու վերջինիս առավել հաջողված լինելու եւ դրա պատճառների վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում, որոշ օտար եւ բարբառային բաների բացատրությունն է տալիս, երբեմն էլ գրական բառն է մեկնաբանում փակագծում նշելով վերջինիս՝ այդ ժամանակ ժողովրդին ընկալելի օտար անվանումը:

Թումանյանի գրառած անեկդոտ-գվարճախոսություններում Լոռու տա-րածաշրջանի գյուղերը ներկայացվում են միմյանց հետ ունեցած փոխհարաբերություններում: Դրանց հերոսները կան Լոռու բնակչությանն ընդհանրացնող *լոռցի*-ներն են, կան Լոռու եւ հարեւան տարածաշրջաններում գավեշտի աղբյուր հանդիսացող գյուղերն (*Կուրթան, Աբրրի*) ու դրանց հայտնի գվարճախոսները (*Սերգո, Համբո*):

Հովհ. Թումանյանը Լոռու գյուղերն ու գյուղացիներին ներկայացնելիս երկու պատումում մատնանշում է նաև նրանց տրվող մականուն-ծաղրանունները՝ *թուրքաւաքանակ* դսեղեցիք (տողատակում գրառողը տալիս է նաև հայրենի գյուղին տրվող երկրորդ ծաղրանուն-մականունը՝ *դսեղցոց մարդաս-*

սրան էլ են ասում²³), սասանափրուն ջալալօղլեցի²⁴, ագոսափսկեր կուրթանեցիք²⁵...

Ի դեպ, մի քանի տարի անց հրատարակված Սմբատ Շահագիզյանի աննկղոտների գրքում տեղ է գտել «*Բորչալուի եւ Լոռուայ գիւղերը իրենց համանիշ բնատրութիւններով*» նյութը, որոնց մեջ 49 գյուղերի շարքում տեսնում ենք նաև վերը բերված գյուղերի ծաղրանունները, սակայն այլ բնորոշումներով: Այսպես, օրինակ՝

Հուգդուն (բազէի մի տեսակ) ուրող կուրթանեցիք,

Գիլան խեղդող դստեցիք,

*Թանգ միկիսրան, տրիցարկի տակը մոմ հալող ջալալ-օղլեցիք...*²⁶

Իր գրառած գվարճապատումներից մեկում²⁷ Հովհ. Թումանյանը նշում է նաև բանահյուսության այդ տեսակի՝ տարածում գտած օտար անվանումը՝ աննկղոտ: Գրական ասպարեզ դեռ ուռք չդրած երիտասարդ Թումանյանը ներքին բնագոյով կարողանում է երգիծական մանրապատումների ժանրային ճիշտ (թեկուզե օտարալեզու) բնորոշումը տալ: Իմիջիայլոց նշենք նաև, որ այդ ժամանակ դրանց ժողովուրդը *սոսակ* էր ասում: Հենց դա է եղել պատճառը, որ վաստակաշատ ազգագրագետ եւ բանահավաք Երվանդ Լալայանը 1903 թ. տպագրած իր՝ Լոռու գվարճախոսներից մեկին նվիրված գրքույկը, որտեղ ընդգրկված են նաև թումանյանական գրառումներից մի քանիսի (թ. 7, 20, 21) հորոպյան տարբերակները, վերնագրել է «*Ժողովրդական սոսակներ. Հորոս*»²⁸: Թումանյանը եւս, Ան. Աբովյանին գրած նամակներից մեկում, համեմատելով մեկի միեւնույն քարոզ-պատարագը կրկնելու գործողությունը, օգտագործում է աննկղոտի՝ ժողովրդի մեջ շրջանառվող «սոսակ» եզրույթը. «Ասում է «Էս չէլավ, մի ուրիշը բերեք» երեխա մկրտող քահանայի *սոսակը*»²⁹:

Բանահավաք Թումանյանը ներկայացնում է նաև աննկղոտներից մեկի աշտարակյան տարբերակը՝ ոչ միայն ընդգծելով վերջինիս առավել հաջող եւ հղկված լինելը, այլև տարածաշրջանի մարդկանց բնորոշ գծերը (*ճարպիկ լեզու եւ սրամրություն*), որոնցով էլ պայմանավորում էր դրա հաջողվածությունը. «*Բայց այս աննկղոտը*, – գրում է Թումանյանը, – *աշտարակցին պատմում է ուրիշ կերպով. վեճը միեւնույն ստարկայի վերա է. միայն այս դեպքում*

²³ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 5, Երևան, 1994, էջ 584:

²⁴ Անդ:

²⁵ Անդ:

²⁶ «Ծիծաղի տոպրակ», Աննկղոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Շահագիզեան, Թիֆլիս, 1892, էջ 143-145:

²⁷ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 5, էջ 583:

²⁸ «Ժողովրդական առակներ», Հորոս, հաւաքեց Ե. Լալանեան, Թիֆլիս, 1903:

²⁹ Հովհ. Թումանյան, ԵԺ, հ. 5, էջ 26:

հաղթողը աշտարակցին է: Աշտարակցիները հայրնի են իրենց ճարպիկ լեզվով և սրամտությամբ: Մեր իմացած դեպքում աշտարակցին վերա է տրվում՝ Ուշի, Օշական, Փարբի, Բյուրական, Թալին, Թալիշ, Մասարառ, գրալի պոչը դնան արա»³⁰:

Ի դեպ, վերջերս Երևանում մեր կողմից այս երգիծապատումի մեկ այլ տարբերակ է գրանցվել, որտեղ յոթ գյուղերի արագ-արագ թվարկման ժամանակ լոռեցին հանդես է գալիս իր բարբառին յուրահատուկ երգեցիկ-երկարացման հնչերանգով, ինչն էլ դառնում է այդ մանրապատումի զավեշտի հենքը.

Հերթը գալիս ա լոռեցուն: Լոռեցին ծոր տալով սկսում ա.

- Էնա հասա՛ն Օձոնը, Էնա հասա՛ն Մարցը, Էնա հասա՛ն Քարինջը..., հեյրո վերջացնում է այսպես՝

- Ես ուրեմեմ, դոն թամաշ արասա՛ն... (ԱՍՇՀ) :

Չնայած Լոռու խոսվածքում երգեցիկ հնչերանգային խոսքը միշտ էլ առկա է եղել, այնուամենայնիվ թե՛ թումանյանական գրառումներում, թե՛ հետագայում տպագրված անեկդոտների այլևայլ ժողովածուներում լոռեցուն բնորոշող նման հնչերանգի միջոցով անսպասելի ծիծաղ առաջացնող երգիծապատում-զվարճախոսությունները բացակայում են: Դրանք հիմնականում վերջին 40-50 տարիների արգասիք են, ինչպես, օրինակ, ստորև ներկայացվող նմուշները՝ գրառված 1960-ականների վերջերից մինչև մեր օրերը.

- | | |
|--|--|
| 1. - Անձրեւ ա գալի:
- Դոանըըը... (ԱՍՇՀ) | 2. - Ներեցեք ծննդատունը որտեղ է:
- Կընատոող... (ԱՍՇՀ) |
| 3. - Մանկապարտեզը որտեղ է:
- Ըրեխաաանց... (ԱՍՇՀ) | 4. - Ձվածեղ սարքեմ:
- Ձվոռով... (ԱՍՇՀ) |
| 5. - Գետի վրա կամուրջ են սարքում:
- Լենքովորր... (ԱՍՇՀ) | 6. - Կոշիկըս սելամըմ ա:
- Ոտիիիղ... (ԱՍՇՀ) |
| 7. - Տղես դիպլոմատ ա աշխատում:
- Ձեռիիի... (ԱՍՇՀ) | 8. - Քանի՛ երեխա ունես:
- Մարթիցըըըն... (ԱՍՇՀ) |

Թումանյանական գրառումներում զավեշտն ստեղծվում է հիմնականում մի բան տեսնելուց կամ որեւէ գործողությունից հետո լոռեցու միամիտ դատողությունն ընդգծող խոսքի կամ էլ գործով արձագանքելու միջոցով.

- Քյոխվա ջան, գլխիդ դուրբան, որ ես խոզ ըլեմ դու շուն, ձեր դոնովն խրթխրթալե անցկենալիս հասնիլ չնա բուղըս ճոթիլ:

³⁰ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 5, էջ 583:

«Չէ, էս քալամի սասածն էլ ա ըղորթ», – վճռեց քյոիվենն եւ տուգանքից ազատեց շնատիրոջը³¹:

- Ըրմանըմ եմ ես ձեզանից, քա մարթիկ չեք, հաց չեք ուրբւմ, էս ինչ դժար իմանալու քան ա, ով որ էս պարը քանդել ա նա կյի տարած: - Ա՛յ, այ, որ սաի քյոիվենն կգիղենա, դարձան միմյանց կանգնողները³²:

Այժմ 130 տարի հետո էլ ենք հեռավոր գյուղերի բնակիչների, մասնավորապես լոռեցիական նմանատիպ «եզրահանգումների» հանդիպում.

Գեղամիջում կանգնած տղաները տաք-տաք վիճում էին, թե Լենինն ինչ գործով էր գնացել Ֆինլանդիա:

- Գնանք Փուրոյին հարցնենք, նա կարդացած տղա յա, կիմանա, - առաջարկում է մեկը:

Փուրոն ուշադիր լսում է կողմերի կարծիքները եւ լուրջ տոնով սատում իր հեղինակավոր խոսքը.

- Լենինը Ֆինլանդիա շար կարեւոր գործով կրկն գնացած, նա հենց ըն-հենց չէր գնա...³³

Թումանյանական հուշապատումներում հաճախ կարելի է հանդիպել պայծառ տիրույթյալք ծիծաղ առաջացնող «գիքորացու» կերպարների:

Մի անգամ Հովհ. Թումանյանը ընկերների հետ Մոսկոյի գեղատեսիլ ձորն է իջնում: Բալա Գիքորը հարցնում է ոչխարներ պահող մի երեխայի.

- Տղա՛ ջան, ոչխարդ ինչ արժի, ուզում եմ մինն առնեմ

- Մի մանեթ մի արասի:

Բալա Գիքորը վճարում է գումարը, ոչխարը վերցնում, եւ գետի ափին նստում են հացի: Վերջում երեխան մոտենում է Բալա Գիքորին, թե.

- Բենի, ոչխարի մորթին ծախիլ չեմ:

- Վեց արասով կծախեմ (դա նույն մի մանեթ մի արասին է):

Երեխան տալիս է ձեռքի եղած փողը եւ վերցնում ոչխարի մորթին:

Թումանյանն իր մոտ է կանչում երեխային ու հարցնում

Դպրոց գնացել եմ, քալիկ ջան:

- Չէ՛, չեմ գնացել:

- Դե փողերդ էլ վերցրու, ոչխարիդ մորթին էլ ու կգնաս հորդ կասեմ՝ քեզ անպայման դպրոց ուղարկի³⁴:

Կրկին վերհիշենք «Գիքորի» նկարահանման համար գլխավոր հերոսի երկարատև փնտրտուքը: Հենրիկ Մալյանը, Սոս Սարգսյանը եւ Սերգեյ Իս-

³¹ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 5, էջ 580:

³² Անդ, էջ 582:

³³ Ս. Քոչարյան, Զվարճապատումներ եւ իրապատումներ, Երևան, 2008, էջ 49-50:

³⁴ Անդ, էջ 81-82:

րայելյանը մոտ ութ հազար երեխաների փորձելուց հետո Սոսի խորհրդով գնում են Դսեղ ու ֆուտբոլ խաղացող երեխաներից մեկին հարցնում.

- Ո՞ր դասարանում ես սովորում, բայիկ ջան, - հարցնում է Հենրիկ Մալյանը:

- Մեր դասարանում եմ սովորում, ո՞ր դասարանում եմ սովորում, - պատասխանում է երեխան:

- Այ սա է Գիքորը, ես գրաւ իմ Գիքորին, - հայտարարում է Սոս Սարգսյանը³⁵:

Այսօր էլ կարելի է հանդիպել լեռնային գյուղերի մարդկանց, հատկապես երեխաների պարզամտության ու գուլալության բազմաթիվ դրսևորումների, որոնք մեր իրականությանն անհարիր են, գուցե նաեւ ոմանց համար՝ զավեշտալի: Թումանյանական այս իրապատումներից շուրջ 80 տարի անց նման մի դրվագի նկարագրության էլ հանդիպում ենք սեւակյան հուշապատումներից մեկում.

Երեւանից Չանախչի գնալիս Պարույր Սեւակը կանգնեցրել է տալիս մեքենան եւ ուզում է ծիրան վաճառող պատանուց մի դույլ հասած ծիրան գնել:

- Բայիկ ջան, ի՞նչ արժի դույլը, - հարցրեց Էմման:

- Հինգ կամ իրեք:

Հո չենք ծիծաղում, հո չենք ծիծաղում

- Ո՞վ ասաց, որ այդ գնով վաճառես, - հարցրեց Պարույրը:

- Ագին ասաց, որ այդ գնով չստնեն, երեքով փութ:

- Գուցե հինգով էինք ստնում, ինչո՞ւ երեք ասացիր:

- Մոյր սսեմ

- Բո ճշրի համար առ քեզ հինգ ռուբլի, - փողը պարզեց Պարույրը:

- Ինչո՞ւ հինգ փվեցիր, - ներեց Էմման:

- Բա այսքան ծիծաղը երկու ռուբլի չարժե՞ր, - պատասխանեց Պարույրը:

- Հիմար երեխա էր, - ասաց Էմման:

- Մաքրուր երեխա էր, - ասաց Պարույրը³⁶:

Անփութենք, Հովհ. Թումանյանը Լոռու բանավոր ավանդույթների եւ բառ ու բանի անմիջական կրողն է եղել, ինչն էլ, անշուշտ, հետագայում ապագա գրողին օգնել է դառնալու նաեւ կրողը ժողովրդի խտացված պատկերավոր խոսքի, իր մեջ ամբարելու նրա կենսասիրությունը, ծով համբերությունն ու անսահման լավատեսությունը, աշխարհի ու մարդու հոգսերն ու ցավերը ծի-

³⁵ Անդ, էջ 103:

³⁶ Գ. Չալիկյան, Ապոլոնի սիրահարը, Երեւան, 2000, էջ 103-104:

ծաղի պրիզմայով տեսնելու շնորհքը՝ առկեցուն ժողովրդական իմաստնությունը:

Տարիներ անց նա էլի էր օգտվելու բանահյուսական գոհարներից, բայց դրանք մատուցելու էր ժողովրդականի մեջ թաթախված թումանյանական չնաշխարհիկ բառ ու բանով, կենդանի ժողովրդախոսակցական լեզվով, էլի էր անդրադառնալու գվարճապատումներին («Սուտիկ որսկանը», «Կիկոսի մահը», «Բարեկենդանը»...), բայց դրանք կրկին ժողովրդին էր վերադարձնելու բյուրեղացրած արեւելահայերենով՝ համեմված համով-հոտով հայոց ժողովրդական խոսքով:

РЕЗЮМЕ

Мало кому известно, что первые напечатанные работы известного армянского писателя Ованеса Туманяна были на юмористические темы о лорийских армянах. Фактически дебют писателя осуществляется в области фольклора.

Туманяновские записи армянских народных юмористических миниатюр и прибауток ясно показывают, что Ов. Туманян был прямым носителем устной традиции и словестного фольклора своего народа.

В записях юмористических миниатюр Туманяна сразу видно не только заинтересованность к аспекту собирательских деятельности будущего писателя, мыслителя и аналитика, его фольклористические искания и здоровые выводы, но и бесконечная любовь к народному наследию, в частности к армянскому словестному фольклору.

SUMMARY

It is hardly known that the first printed works of the prominent Armenian writer Hovhannes Tumanian were in humoristic topics towards Lori Armenians. In fact the debut of the writer was realized in the sphere of folcloristic.

The Armenian popular jokes recorded by Hovhannes Tumanian show clearly that Tumanian had perfectly known the oral tradition and the folklore of his people.

In the funny stories and popular jokes recorded by him, not only the curiosity and talent of the writer in the study of oral tradition of his people is evident but also his huge love towards the national values in particular to Armenian folklore.



КЛАРА АСАТУРЯН

ИАЭ

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ АРХЕОЛОГИИ. РАСКОПКИ ХРАМА ЗВАРТНОЦ АРХИМАНДРИТОМ ХАЧИКОМ ДАДИАНОМ

Храм Звартноц - один из самых ярких и самобытных выражений творческого гения армянского народа в области архитектуры. О Звартноце много написано и напечатано. О нем в далеком прошлом писали армянские историки, о нем пишут сегодня археологи, знатоки архитектуры. Тем не менее, интерес к нему не угасает. И не случайно, что в начале XX в., когда начались раскопки этого храма, они всколыхнули армянскую общественность, о чем свидетельствуют те многочисленные статьи, которые появились в армянской печати. Как известно предшественником в этих ценных раскопках был архимандрит Эчмиадзинской братии, заведующий Эчмиадзинским музеем древностей Хачик Дадиан. Не имевший специального образования он, по свидетельству многих выдающихся людей, отличался большим рвением и любовью к своей работе¹.

В ходе работы в историческом архиве нами были выявлены немногочисленные документы, которые проливают свет на начало и на ход этих раскопок с 1900-го по 1904 год. Это главным образом переписка Дадиана с Императорской археологической комиссией о результатах своих работ².

Раскопкам предшествовала поездка в Петербург. Как заведующий Эчмиадзинским музеем, Дадиан приказом католикоса Мкртыча I был командирован в Петербург для ознакомления с музеями столицы. Здесь, открытым листом Императорской археологической комиссии от 18 апреля 1900 г., он получил «право производства археологических раскопок в течение

¹ О Дадиане и его работах в деталях ср. **Խաչիկ Ժ. Վարդապետ Դատյան**, Հոդվածների ժողովածու, «Արարատի» ժամանակորոշումը, հ. Գ., Ա. Էջմիածին, 2007 (առաջարկը՝ Ա. Ղազիշյանի):

² НАА, ф. 319, оп. 1, д. 352.

1900 г. на землях казенных, общественных и принадлежащих разным установлениям в пределах имений, принадлежащих Первопрестольному Эчмиадзинскому монастырю, с обязательством доставить в комиссию отчет или дневник по производственным раскопкам, а также при особой описи всех находок, наиболее ценные и интересные из найденных предметов, для представления их на Высочайшее Государя Императора воззрение».

Дадиян приступил к раскопкам 29 мая 1900 г. В своем отчете он написал о своей первой находке: «Найден камень (железняк) длиной 3 верш., шириною 14 верш., толщиной 8 верш., с клинообразной надписью на одной стороне в 47 строках. Между 23/24 строками камень сломан пополам. Препровождая при сем фотографический снимок этого камня и эстампаж надписи, имею честь просить комиссию в возможном скором времени выслать мне перевод надписи для издания в армянском журнале «Арагат».

Комиссия сообщила ему, что эстампаж был передан для прочтения и перевода В. С. Голенищеву, который исполнил эту работу. Вскоре Дадиян получил разрешение Эриванского губернатора открыть в Вагаршапате фотографический павильон для съемки видов древностей и, как видно из его последующих донесений, кроме своих отчетов послал в Петербург также альбомы с фотографическим изображением своих находок.

С нескрываемым чувством гордости он сообщает комиссии, что открыл гробницу св. Григория - просветителя и апостола Армении. «Теперь горжусь, – пишет он, – что это великое дело совершилось по милости Императорской археологической комиссии через меня, что открылось первое святое место для всего Гайканского народа и то в пределах матери России».

Получив второй открытый лист от 24 марта 1901 г., Дадиян продолжает раскопки.

Продолжая держать комиссию в курсе относительно своих раскопок, Дадиян излагает соображения о постройке храма: «Патриарх Нерсес III в 654 г., когда основал гробницу св. Григория Просветителя Армении, на том месте раньше была построена церковь Звартноц другим Нерсесом. Так как после постройки гробницы начал строить и патриаршие покои, используя камни церкви Звартноц, разрушенной им.

Только оставлен главный алтарь, часть северной и часть южной стены. Когда при очистке патриарших покоев оказались четыре пьедестала старой церкви, тогда уже смог узнать, что старая церковь Звартноц стояла на четырех колоннах, и у нас по архитектуре армянских церквей, когда церковь

стоит на четырех колоннах, тогда длина церкви в три раза длиннее бывает ширины. Так что, имея под рукой цельный алтарь, ширину церкви и четыре колонны, можно составить реставрацию первоначальной церкви. Так и сделано мною».

Далее он с уверенностью добавляет: «Хотя историк VII века Себеос постройку церкви приписывает Нерсесу Строителю, но раскопки и история Агван доказывают, что церковь Звартноц построена патриархом Нерсесом Великим».

Дадян жаловался в Императорскую комиссию, что он одинок в своей работе, и что было бы целесообразно, если бы комиссия отправила к нему в Вагаршапат одного «опытного и ученого члена для просмотра моих работ, и через содействие и указания которого я имел бы возможность дать общий обзор, отчетность и историческое описание местности и раскопок».

На его жалобу комиссия ответила: «Хотя Императорская Археологическая комиссия не имела еще возможность командировать в Эчмиадзин ученого археолога для осмотра Ваших работ, но из этого вовсе не следует, что она не интересуется ими, напротив, имея в виду сделать результаты Ваших раскопок известными в России, она обратилась к архимандриту Месропу с просьбою изложить в подробной статье о сделанных Вами открытиях, что архимандрит Месроп и исполнил».

Под заголовком «Разъяснение видов и древностей церкви Звартноц св. Григория» Дадян перечисляет некоторые из своих находок, например: «Наружные камни шкапа головы св. Григория с надписями на арабском языке, написанные гвоздем, углем и чернилами.

Черепицы из крыши церкви, часть надписи на армянском языке, изображение человеческой головы и разные украшения, и разные камни, глиняная посуда разных величин и видов, кирпичи, пемзовые камни из купола церкви.

Глиняные лампы и солонки с крестами, глиняная посуда и крышки для нее с разными узорами и украшениями птиц». А из надписей отмечает следующие: «На штукатурках приделов-столбищ и орлиных колонн. На южной стене юго-западного столбища:

1. Греческая надпись,
2. Армянская надпись,
3. Арабская надпись.

На западной стене того же придела сирийская, арабская, армянская надписи, на северо-западном столбище орлиной колонны грузинская. На той же колонне армянская и арабская надписи».

Получив открытый лист, Дадриан продолжает раскопки, 1903 г. Архимандрит Хачик пишет, что «В присутствии г. проф. Марра открыл большую баптистерию в центре храма, имеющую круглую форму в шести ступенях с запада.

В сентябре месяце под главным алтарем оказалось хранилище, с севера и с юга лестницы в четырех ступенях».

Архимандрит Хачик делится своими планами с комиссией: «В настоящем году, если бог даст, dokonчу очистку мусора в окружности храма, составлю окончательную реставрацию храма и построек, а потом приеду с собранными материалами и доложу перед комиссией свои результаты раскопок и их значение в исторической армянской архитектуре». Вскоре после этого он уже работает с Торосом Тораманяном. Вот что пишет он об этом: «По приказу патриарха я занят удалением мусора, а турецкоподанный архитектор г. Торос Тороманян, который в прошлом году изучал армянскую архитектуру в развалинах гор. Ани (четвертая столица прошлой Великой Армении в Эривавской губернии), составляет общий план раскопок, реставрации храма снаружи и разрез с востока и запада».

Звартноц сразу стал местом паломничества, разумеется, в религиозном смысле. Сюда приходили и представители армянской интеллигенции, люди разного общественного положения, известные ученые, литераторы и т.д. В книге отзывов они оставили много лестных слов в адрес архимандрита Хачика, отмечая главным образом его энтузиазм, любовь к Звартноцу и к своей работе. Среди них имена проф. Н. Марра, Т. Тораманяна, Ст. Малхасяна, Сп. Спандаряна, художника П. Терлемезяна, литератора Б. Украинцева, английского филолога А. Гордона и других. 2 октября 1902 г. храм посетил экзарх Грузии архиепископ Алексей, а в 1906 г. наместник Кавказа граф Илларион Ив. Воронцов-Дашков.

Архимандрит Хачик намеревался одновременно заниматься раскопками храма Гагашена в Ани, который был близнецом Звартноца, но для этого ему нужны были деньги. В связи с этим он пишет в комиссию следующее: «Если средств комиссии в этом году не хватит, то вышлите открытый лист, авось мне удастся обратиться к нашим богачам для начала дела».

В 1904 г. раскопки храма Звартноц были прерваны. По сообщению Дадяна мы узнаем, что он «по недоразумению местной полиции был сослан в Тамбовскую губернию гор. Темников с 13 августа 1904 г. по 20 августа 1905 года». По возвращении в Вагаршапат он нашел свои раскопки в самом плачевном состоянии, а переписка с археологической комиссией куда-то исчезла. После возвращения он начинает заниматься раскопками в древней столице Армении Армавире.

ԱՄՓՈՓՈՒՄ

Զվարթնոցի տաճարը հայկական ճարտարապետության ամենանշանավոր հուշարձաններից է, որը վերջին հարյուրամյակի ընթացքում գտնվում է հայագիտության ուշադրության կենտրոնում: Ինչպես հայտնի է, Զվարթնոցի պեղումների առաջին նախաձեռնողը եղել է Ս. Էջմիածնի միաբանության անդամ, Ս. Էջմիածնի թանգարանի տնօրեն Խաչիկ վարդապետ Դատյանը, ով հայտնի է հնությունների հետազոտության նկատմամբ տաժած իր մեծ սիրով եւ նվիրվածությամբ: Հաստատանի ազգային արխիվում պահվում են ոչ մեծ քանակության փաստաթղթեր, որոնք վերաբերում են Խաչիկ վարդապետ Դատյանի 1900-1904 թթ. Զվարթնոցում իրականացրած պեղումներին: Խոսքը հեղինակի՝ Ռուսաստանի Կայսերական հնագիտական հանձնաժողովի հետ ունեցած նամակագրության մասին է: Համապատասխան նամակներում վարդապետը ներկայացնում է հնագիտական աշխատանքի արդյունքները: Այս հաղորդման մեջ շարադրվում է հիշյալ փաստաթղթերի հիմնական բովանդակությունը:

SUMMARY

The temple of Zvartnots is one of the prominent monuments of the Armenian architecture, which deserved an essential attention of Armenian Studies during last century. As it is known, the first excavator of Zvartnots was the member of S. Etchmiadzin congregation, director of the Museum of S. Etchmiadzin - Khachik Archimandrite Dadyan, who has been marked by his great love and devotion towards investigation of antiquities. In the National Archive of Armenia documents of small quantity are kept which deal with excavations realized by Khachik Archimandrite Dadyan in Zvartnots during 1900-1904. It goes about correspondence of the author with the Russian Imperial Archaeological Commission. In corresponding letters the archimandrite reports on the results of his archaeological works. The present report reproduces the main content of the mentioned documents.



ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պարամական գիրք. թեկնածու, ՄՄ

ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԻ ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ (ըստ ՄՄ Հ^ր 7821 ձեռագրի)

Հայ ժողովրդի պատմության արժանահավատ սկզբնաղբյուրներ են մեզ հասած վիմական արձանագրությունները: Կարևորելով դրանց աղբյուրագիտական արժեքը՝ հայ մատենագիրներից ոմանք իրենց աշխատություններում օգտագործել են նաև վիմագրեր. այսպես՝ Սյունյաց մետրոպոլիտ¹ Ստեփանոս արք. Օրբելյանը, որը, ըստ էության, հայերեն վիմագրերի առաջին ընդօրինակողն է, Սյունյաց պատմությանը զուգահեռ վկայակոչել է նաև տարբեր վանքերից հավաքված արձանագրություններ՝ կորստից փրկելով դրանցից շատերը²: Ժ. Դ. պատմիչ Զաքարիա Սարկավազն իր պատմագրության երրորդ գլուխը հատկացրել է Հովհաննավանքի արձանագրություններին ու դրանց հիմամբ կազմել վանքի «Կոնդակը»³: Որոշ վիմագրեր էլ հավաքվել են իբրև փաստական վավերագրեր՝ վանքերի ու եկեղեցիների ներքին կյանքի, գնումների, նվիրատվությունների, ապահարկության եւ այլ արտոնությունների մասին: Սրանով պայմանավորված՝ վանքերում կազմվել են մատյան-քոթուկներ, որպիսիք ունեին Սանահինի, Մաղմուսավանքի, Լիմ

¹ Ըստ Ստ. Մալխասյանցի՝ «մետրոպոլիտ» է կոչվում մայրաքաղաքի արքեպիսկոպոսը. երկրորդ իմաստով՝ նշանակում է թեմի առաջնորդ («Հայերեն բացատրական բառարան», Խ. Երրորդ, կազմեց՝ Ստ. Մալխասեանց, Երևան, 1944, էջ 309):

² «Պատմութիւն նահանգին Միսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910:

³ **Զաքարիա Քանաքեղի**, Պատմութիւն: Կոնդակ Սուրբ ուխտին Յօհաննու վանից, աշխատ.՝ Ա. Վիրապյանի, Երևան, 2015: Հովհաննավանքի միաբան Զաքարիա սարկավազ Քանաքեղցու ընդօրինակությունները հետագայում օգտագործել են Հովհ. Շահխաթունյանցն ու Դ. Ալիշանը:

եւ Կոտոց անապատների հոգեւոր կենտրոնները. ներկայումս պահպանվել է միայն Սանահինի Քոթուկի երկու օրինակ (Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. Հ^մ 3031, 8150), որոնցից վանքի արձանագրությունները հրատարակելիս մեծապես օգտվել է վաստակաշատ հնագետ-վիմագրագետ Կ. Ղաֆադարյանը⁴:

Վիմագրերի առաջին ընդօրինակողներից է նաեւ ԺԷ. դարավերջի եւ ԺԸ. դ. 30-ական թթ. նշանավոր հոգեւոր գործիչ, հայ ազատագրական պայքարի կարկառուն ներկայացուցիչ⁵, մատենագիր, Առանշահիկների թագավորական տոհմի ժառանգ, Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը (1701-1728 թթ.): Նրա թողած պատմագրական ժառանգությունը նշանավորում են իր ապրած ժամանակաշրջանի պատմությունը ներկայացնող «Համառօտ պատմութիւն Աղուանից երկրի» աշխատությունը⁶, ինչպես նաեւ Խաչենի տարածաշրջանի՝ հիմնականում Գանձասարի, Խաթրավանքի ու Դաղիվանքի եւ նրանց շրջակայքի վիմագրերը ներկայացնող տետրը: Եսայի կաթողիկոսի՝ 1718 թ. կազմած հիշյալ տետրը, որը, ցավոք, մեզ չի հասել, Խաչենի տարածաշրջանի վիմագրերի հավաքչության առաջին փորձն է⁷: Անվանի վիմագրագետ Ս. Բարխուդարյանն այն հիշատակում է Սանահինի «Քոթուկից» հետո, ըստ էության, համարելով իբրեւ Գանձասարի ու Դաղիվանքի «Քոթուկ», որը հետագայում ամբողջությամբ ընդօրինակել է Հովհ. Շահխաթունյանը⁸:

⁴ Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը եւ նրա արձանագրությունները, Երևան, 1957: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը վերջերս լույս է ընծայել Սանահինի «Քոթուկ»-ի բնագիրը («Յիշատակարան Սանահինյ վանքից (Սանահինի Քեթուկը)», աշխատ.՝ Պ. Մուրադեանի, խմբ.՝ Գ. Տեր-Վարդանեանի, Ս. Էջմիածին, 2007):

⁵ Եսայի Հասան-Ջալալյանի քաղաքական հայացքների մասին տե՛ս Ֆ. Պողոսյան, Էջմիածնի կաթողիկոսությունը եւ հայ-ոսմական հարաբերությունները XVIII դ. առաջին քառորդում, ԼՀԳ, թ. 4, 1977, էջ 24-36. նաև՝ Զ. Արզումանյան, Եսայի Հասան Ջալալյանի քաղաքական գործունեության գնահատման հարցի շուրջ, ԼՀԳ, թ. 5, 1979, էջ 50-57:

⁶ Եսայի Հասան-Ջալալյանի այս աշխատությունն առաջին անգամ հրատարակվել է 1839 թ. Շուշիում նրա տոհմակից Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանի նախաձեռնությամբ («Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից ի թուականին Հայոց 1160, իսկ ի թուականին Տեառն մերոյ Փրկչին Յիսուսի 1711», Շուշի, 1839): «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» վերնագրով այն վերահրատարակվել է 1868 թ.: Երուսաղեմում:

⁷ Բ. Ուլուքաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 12: Գանձասարի վանքի պատմությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ Բ. Ուլուքաբյանը փաստում է, որ «...Գանձասարի վիմագրերն ընդօրինակելուն, ուստի եւ դրանք իբրեւ աղբյուրագիտական նյութ գիտական շրջանառության մեջ դնելուն ձեռնարկած առաջին մարդը եղել է Եսայի Հասան-Ջալալյանը» (Բ. Ուլուքաբյան, Գանձասար, Երևան, 1981, էջ 77):

⁸ «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմ.՝ Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ XVIII: Որոշ ուսումնասիրողներ Եսայու վիմագրերի տետրի ընդօրինակող են համարում Մայր Աթոռի երբեմնի գրագիր ու ծաղկարար Հովհաննես Դրիմեցուն (Փոթիշանեցի) կամ Հովհաննես եպիսկոպոս Հովհաննիսյան Մշեցուն (Բագրևանդցի): Վերջինիս առումով հայագետ Պ. Հակոբյանը գրում է, որ նա «...1822 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին

Մաշտոցյան Մատենադարանում է պահվում Եսայի կաթողիկոսի վիմագրական ժողովածուի երեք ընդօրինակություն: Ժամանակագրորեն դրանցից առաջինը, որը մեր քննության առարկան է, ՄՄ Հ^մ 7821 ձեռագիրն է՝ գրված Գանձասարի վանքում՝ 1809 թ., Եսայու տոհմակից, 1830-1854 թթ. Արցախի մետրոպոլիտ, Խաչենի իշխան Դանիել հազարապետի որդի Բաղդասար արք. Հասան-Ջալալյանի⁹ ձեռքով: Այդ է վկայում ձեռագրի էջ 18ա-ում պահպանված գրչության հիշատակարանը¹⁰:

«Ի ՌՄԾԸ. (1809) թուին Հայոց, ի Սուրբ Աթոռս Գանձասարու վերային նորոգեցաւ արձաններս ի հին օրինակէ, ձեռամբ Բաղդասար վարդապետի Ջալալեան եւ որդոյ Դանիէլ հազարապետին Տեսուն Խաչենոյ»¹¹:

ընդօրինակել է Հաղբատի և Սանահնի բազմաթիվ արձանագրություններ, իսկ ավելի վաղ՝ պատճենավորել Ե. Հասան-Ջալալյանցի ժողովածուն» (**Պ. Հակոբյան**, Հայկական վիմագրերը և Խաչատուր Աբովյանը, ՊԲՀ, թ. 2, 1971, էջ 47): Եսայու ժողովածուի ընդօրինակումը Հովհաննես Դրիմեցուն վերագրելը, թերևս, պայմանավորված է վերջինիս՝ Հաղբատի վանքին նվիրված աշխատության մեջ առկա հետևյալ նկարագրությամբ. «Ելեալ ապա ի քաղաքէ անտի յամենանն Յունիսի 1822 ամի Տեսուն բովանդակ եղելովքն ընդ իւր, հանդիպէր նախ ի Գանձասար վանք հոջակաւոր, և գաւորս ինչ կացեալ անդէն...» («Յովհաննու Դրիմեցոյ պատմութիւն հոջակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին», հրատ.՝ Հ. Համագասպ Ոսկեան, Վիեննա, 1965, էջ 136): Նշված տեղեկությունից Բ. Ուլուքբայանը ենթադրում է, որ, հավանաբար, 1822 թ. հունիսին Գանձասար ժամանած թափորի մասնակից ու վեհարանի գրագիր Հովհաննես Դրիմեցին ամենայն բարեխղճությամբ արտագրել է Եսայի կաթողիկոսի տետրակը (**Բ. Ուլուքբայան**, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 13. տե՛ս նույնի՝ «Գանձասար», էջ 79):

⁹ Արցախի արդյունաշատ հոգևոր գործիչ, մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանի գործունեությանը հատուկ անդրադարձել է Գրիգոր Տեր-Հովհաննիսյանը՝ Մուրացանը (**Գր. Տեր-Յովհաննիսեանց**, Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալեանցի համառոտ կենսագրություն. «Փորձ» ազգային և գրականական միամետաղ հանդես, թ. 5, 1880, Տիֆլիս, էջ 131-164): Դառնացած լինելով Իբրահիմ խանի բռնություններից՝ Բաղդասարը հորեղբոր՝ Սարգիս արքեպիսկոպոսի (հետագայում՝ Աղվանից կաթողիկոս) և հոր՝ Դանիել բեկի հետ 1792 թ. Գանձասարից հեռանում է Գանձակ, ապա՝ Հաղբատ (երբ Դանիելը փորձում է Գանձասարից հարստությունները վերդարձնել, սպանվում է Իբրահիմ խանի ձեռքով): Միայն 1805 թ., երբ արդեն սպանվել էր Իբրահիմ խանը, Բաղդասարը մի քանի մեղիքների հետ վերադառնում է Գանձասար ու ձեռնամուխ լինում անխնամ վիճակում հայտնված վանքի բարեկարգման գործին: Մինչև 1812 թ. Բաղդասարը զբաղվում է հիշյալ գործով ու ետ վերադարձնում վանքի հալիչտակված կալվածքների մեծ մասը (**Գր. Տեր-Յովհաննիսեանց**, նշվ. աշխ., էջ 145-153). հենց այս շրջանում, փաստորեն, նա հասցրել է ընդօրինակել Եսայի կաթողիկոսի հավաքած վիմագրերի տետրը:

¹⁰ Հիշատակարանը տևական ժամանակ անհայտ է մնացել հայագիտությանը, հավանաբար, ձեռագրի բովանդակության մեջ գետնեղված լինելու պատճառով: Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակում գրագիրը թվագրված է ԺԹ. դարով, իսկ գրիչն ու գրչության վայրը՝ անհայտ («Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Բ., կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1970, էջ 617): Պ. Հակոբյանը ևս ձեռագիրը համարում է անհայտ ընդօրինակողի գործ (**Բ. Ուլուքբայան**, Գանձասար, էջ 78): Հիշատակարանը վերջերս գիտական շրջանառության մեջ է դրել պատմաբան Ա. Մաղալյանը (**Ա. Մաղալյան**, Արցախի մեղիքությունները և մեղիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007, էջ 22, ծանոթ. 43):

¹¹ ՄՄ ձեռ. Հ^մ 7821, էջ 18ա:

Հիշատակարանում վկայված «*վերաբին նորոգեցաւ արձաններս ի հին օրինակէ*» արտահայտությունը, թերեւս, պետք է հասկանալ հին օրինակից վերստին արտագրվեց, ընդօրինակվեց իմաստով: Պատմաբան Բ. Ուլուբաբյանի կարծիքով՝ ՄՄ Հ^մ 7821 ձեռագիրը, որն ընդգրկում է Եսայի կաթողիկոսի տետրակի գրեթե բոլոր վիմագրերը, «...անմիջապես կատարված է բնագրից, որովհետև ընդօրինակողը առաջին էջի վերևում նկարել է կաթողիկոսական կնիքը՝ նշելով, որ բնագրում կնիքը հենց այստեղ էլ գտնվել է»¹²: Անձանոթ լինելով հիշատակարանին՝ Պ. Հակոբյանը նշում է, որ խնդրո առարկա ձեռագիրը գրվել է Հովհ. Շահխաթունյանցի համար՝ 1830-ական թթ., եւ որոշ բացթողումներով ու լրացումներով տեղ է գտել նրա «Ստորագրութեան» երկրորդ հատորում¹³:

Բարեբախտաբար, ձեռագրում չեն անտեսվել եւ երկիցս ընդօրինակվել են նաեւ Եսայի կաթողիկոսի նախագաղափար օրինակի հիշատակարանները (էջ 10ա, 11ա)։

*«Նորոգեցաւ արձաններս ՌՃԿԷ. (1718) թուիս, յունվարի ԻԵ. (25), ձեռսմբ Եսայի կաթողիկոսի»*¹⁴:

*«Քրիստոսի ծառայ Եսայի կաթողիկոս Աղուանից եւ սրբոյ աթոռոյն Գանձասարայ ձեռսմբ իմով նորոգեցի արձաններս ի հին օրինակէն ի նորս փոխարկեալ վասն հասարակութեան սորս. ՌՃԿԷ. (1718) թուիս»*¹⁵:

Ձեռագրում ամփոփված է 102 գրություն, որոնցից 3-ը գրչության ու գաղափար օրինակի հիշատակարաններն են, 5-ը՝ ձեռագրերից քաղված հիշատակարաններ, 2-ը՝ փաստաթուղթ-հրամանագրեր, 92-ը՝ վիմագրեր՝ ընդօրինակված հետևյալ վանքերից ու եկեղեցիներից.

Գանձասարի վանք - 38 արձ. (որից 2-ը կրկնվում են)

Դադիվանք - 7 արձ.

Խաթրավանք - 6 արձ.

Մեծիրանից Ս. Հակոբ - 9 արձ.

Ծարի վանք - 2 արձ.

Հավասպուրուկ վանք - 2 արձ.

Գրչավանք - 1 արձ.

Ս. Եղիշե առաքյալի վանք - 5 արձ.

Ճալեթի Ս. Ասրվաձաձին - 4 արձ.

Հերհերի Ս. Գրիգորիս - 1 արձ.

¹² Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 12, ծանոթ. 11:

¹³ Պ. Հակոբյան, Հայկական վիմագրերը եւ Խաչատուր Աբովյանը, էջ 45:

¹⁴ ՄՄ ձեռ. Հ^մ 7821, էջ 10ա:

¹⁵ Անդ, էջ 11ա:

Հոռեկալանք - 2 արձ.

Դասարակերտ - 1 արձ.

Դարարասի Ս. Ասրվածածին - 1 արձ.

Քոլայրակ - 1 արձ.

Պատավաճոր գյուղապետ - 1 արձ.

Շահրուզադ - 1 արձ.

Վաճառ - 2 արձ.

Խորակերաց վանք - 1 արձ.

Նոր Վարագալանք - 2 արձ.

Գոշալանք - 3 արձ.

Հաղարծնի վանք - 2 արձ.

Հավելնք, որ ձեռագրի ընդօրինակումն արված է խնամքով, գրչությունը դարաշրջանին հատուկ միասյուն շղագիր է՝ սահմանագծված սև թանաքով, ունի բաց մանուշակագույն դրոշմագծերով մոմլաթե կազմ, մեջքը՝ կապույտ լաթ, միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ թուղթ:

Եսայի Հասան-Ջալալյանի ընդօրինակած վիմագրերը պարունակող տետրի մյուս երկու արտագրությունները՝ ՄՄ ձեռ. Հ^մ 9923 եւ Հ^մ 4537, 1822 թ. են: Դրանցից առաջինի հիշատակարանի համաձայն՝ Եփրեմ Ձորագեղցի (1810-1830 թթ.) կաթողիկոսի օրոք՝ 1822 թ., Եսայի կաթողիկոսի՝ 1718 թ. հավաքած արձանագրությունները բուն օրինակից վերստին ընդօրինակել է Հովհաննես եպիսկոպոսը՝ Գանձասարում եղած ժամանակ. «Յաւի Տեսուն 1822, յամենանն յոյիսի մէկին, ընդ արքագնակապարս Եփրեմ կաթողիկոսին մինչ էսք ի Գանձասար հրաշալի վանս, տեսի գրագում վանորէից, եկեղեցեաց եւ խաչից հնագոյն արձանաց օրինակս ժողովեալս ի միում հին տեսր ձեռամբ Եսայի կաթողիկոսին Աղուանից, ի թուականութեանն Հայոց ՌՃԿԷ: (1718), գոր եւ օրինակեցի կրկին իմով ձեռամբ: Խ[ոնսարի] ծխաւայլ Զօհաննէս եպիսկոպոս, երբեմն գրագիր Սրբոյ Էջմիածնի»¹⁶:

Բ. Ուլուբաբյանն այս ձեռագիրը համարում է առավել ամբողջական՝ գրված Ս. Էջմիածնի գրագիր Հովհաննես Դրիմեցու ձեռքով, որը, ինչպես վերը նշեցինք, մասնակից էր եղել կաթողիկոս Եփրեմ Ձորագեղցու՝ 1821-1822 թթ. Հայաստանի հյուսիսարեւելյան շրջաններ կատարած այցին¹⁷: Պետք է փաստել, որ ՄՄ Հ^մ 9923 ձեռագիրը վերջից պակասավոր է (ունի 12 թերթ), հետեւաբար, այն չի կարող համարվել ամբողջական, երբ քննվող ձեռագրի մոտ 100 միավորից այստեղ պահպանվել են շուրջ 60-ը:

¹⁶ ՄՄ ձեռ. Հ^մ 9923, էջ 2ա:

¹⁷ Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 78-79:

Ինչ վերաբերում է ՄՄ Հ^մ 4537 ձեռագրին, ապա ըստ համառոտ ձեռագրացուցակի՝ այն ընդօրինակվել է 1828 թ.¹⁸ Աստապատի Ս. Ստեփանոսի կամ Կարմիր վանքում, իսկ գրիչ-հավաքողը Հովհաննես Շահխաթունյանն է¹⁹։ Հիմք է ընդունվել ձեռագրի հետևյալ հիշատակարանը. «*Ի մայր գրքարանէն Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի զայս արձանագիրս ընդ իսկ պատմարանութեանն Շահրիարցի աղայ Գեորգեան Յօհաննէս վարդապետին հանեալ տարեալ էր ի Պոլիս տիրացու Առաքելն. ուրանօր տունեալ յիշեալ Յօհաննէս վարդապետին առ ի օրինակել եւ զօրինակն վերադին մոծանել ի Սուրբ Աթոռն, զոր զկնի բերելոյն ասար ստեալ գրեցի ասարանօր յամի Տեսոն 1828, ապրելի 18: Գրագիր Յօհաննէս եպիսկոպոս Սրբոյ Էջմիածնի*»¹⁹։ Հիշատակարանում Ս. Ստեփանոս վանքը վկայված չէ, սակայն, թվում է, թե այս ձեռագիրը Շահխաթունյանցի ձեռքով է գրվել։ Մատենադարանի ավագ գիտաշխատող Ա. Տեր-Ստեփանյանը²⁰ նկատել է, որ ձեռագրի 1ա էջում գետնոված հիշատակարանը այլ բան է հուշում. «*Յամի Տեսոն 1822, յամենանն յոյլիսի մէկին, ընդ սրբազնակաարար Եփրեմ կաթողիկոսին մինչ էսք ի Գանձասար հրաշալի վանան, տեսի գրագում վանորէից, եկեղեցեաց եւ խաչից հնագոյն արձանաց օրինակս, ժողովեալս ի մի հին տետեր, ձեռամբ Եսայի կաթողիկոսին Աղուանից, ի թուականութեան Հայոց ՌՃԿԷ. (1718), զոր եւ օրինակեցի կրկին իմով ձեռամբ: Ես՝ իս[ոխարի] ծ[առայ] Օհաննէս եպիսկոպոս, երբեմն գրագիր Սրբոյ Էջմիածնի*»²¹։

Եւ եւ՝ Սրբոյ ընդհանրական Աթոռոյ Էջմիածնի յերնոր միաբան Բարսեղ խոնարի եպիսկոպոս, յառաջնորդութեան իմոյ, որ ի վերայ չորեցունց վանորէից եւ ի վերայ Հայոց Արքայապետականի եւ բնականի, որք յերկրին Նահիջեանտու եւ Ագուլեաց, գրի զոյն տետր օրինակաց հնագոյն արձանաց առնթեր վերոյ յիշելոյ Օհաննէս եպիսկոպոսի եւ ինդրեալ ի նմա, երոս օրինակել ի վանս Սրբոյն Սրեփաննոսի Կարմիր սասցեալ»²² (ընդգծումը՝ Ա. Հ.)։ Հստակ երևում է, որ գրչագրի առաջին մասը կրկնում է նախորդ ձե-

¹⁸ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ա., կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաքյան, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965, էջ 1232:

¹⁹ ՄՄ ձեռ. Հ^մ 4537, էջ 35բ:

²⁰ Մատենադարանի ավագ գիտաշխատող Ա. Տեր-Ստեփանյանը հրատարակության է պատրաստել «Վիմագրերը Մատենադարանի ձեռագրերում» խորագրով մի աշխատություն, ուր տեղ են գտել Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուի՝ ամբողջական կամ առանձին վիմագրեր պարունակող ձեռագրերի բնագրերը, այդ թվում նաև՝ մեր խնդրո առարկա ձեռագիրը:

²¹ Հիշատակարանի այս հատվածը գրեթե նույնությամբ կրկնված է նույն ձեռագրի էջ 12բ-ում (ՄՄ ձեռ. Հ^մ 4537, էջ 12բ):

²² ՄՄ ձեռ. Հ^մ 4537, էջ 1ա:

ռագրի հիշատակարանը, իսկ երկրորդ մասը պարզում է, որ Բարսեղ եպիսկոպոսը (ով համառոտ ձեռագրացուցակում իբրեւ ստացող է հիշվում) Հովհաննես եպիսկոպոսից խնդրել է իր ընդօրինակությունը՝ Կարմիր կոչվող Ս. Ստեփանոս վանքում այն վերստին ընդօրինակելու նպատակով: Ձեռագրերի համեմատությունը պարզում է, որ խոսքը, ըստ էության, ՄՄ Հ^մ 9923՝ ներկայումս պակասավոր ձեռագրի մասին է, որից եւ արտագրվել է ՄՄ Հ^մ 4537-ը: Ընդ որում, նույնությամբ արտագրվել է նաեւ առաջինի գրչության հիշատակարանը, իսկ 1828 թվակիր վերոնշյալ գրությունը պետք է ընդունել իբրեւ հետագայի հիշատակարան:

Նկատենք, որ Եսայի կաթողիկոսի գրառած վիմագրերի արտագրությունից հետո այս ձեռագրում տեղ են գտել նաեւ վիմագրական այլ ընդօրինակություններ (Սանահինի, Հաղբատի եւ այլ վանքերից), որոնք հետագայում հրատարակվել են Շահխաթունյանցի «Ստորագրութեան» համապատասխան բաժնում²³:

Հաշվի առնելով այն, որ վիմագրերի մասին տեղեկություններ կարող են հաղորդել նաեւ մատենադարանյան ձեռագրերը, իբրեւ Եսայի կաթողիկոսի կազմած ժողովածուի մեզ հասած առաջին ընդօրինակություն՝ նպատակահարմար գտանք գիտական շրջանառության մեջ դնել ՄՄ Հ^մ 7821 ձեռագրի քնագիրը՝ համեմատությամբ վիմագրերի առկա հրատարակությունների: Արձանագրությունների մեծ մասը հրատարակված է Ս. Բարխուդարյանի կազմած «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի Արցախի²⁴ պրակում եւ ունի գիտական հրատարակություններին հատուկ գրչանկարներ ու լուսանկարներ: Այս հանգամանքը նկատի առնելով՝ իբրեւ սկզբունք, այսօրինակ

²³ Ըստ հիշատակարանների՝ այս վիմագրերի ընդօրինակողը Մայր Աթոռի գրագիր, ծաղկարար, խորհրդական Հովհաննես եպս. Հովհաննիսյան Մշեցին է: Հաղբատի ու Սանահինի վիմագրերն ընօրինակելու առնչությամբ նա մի քանի հիշատակարան է թողել տետրում, որոնցից երկուսը վկայակոչում ենք. «Սանահնյ վանից արձանագիրքն են այսօրիկ ի Յոհաննէս եպիսկոպոսէ արքայ Էջմիածնի գրեալ անսխալ 1822 ամի Տեառն, սեպտեմբերի 20» (ՄՄ ձեռ. Հ^մ 4537, էջ 25բ). «Յամի Տեառն 1822, սեպտեմբերի 20, մինչ զհետ սրբազնագոյն Եփրեմ կաթողիկոսին Ամենայն Հայոց եկի ի Սուրբ Նշանի վանս, որ ի Հախապատ, ի մասին ծանրակոյտ պարտուցն գնացեալ ի Սանահին, գրեցի զամենայն արձանագիրքս, յորում կային իմով ձեռամբ վասն ապագայի հարկաւորութեան խնդրողացն..., որ եմ քնիկ միաբան Սրբոյ Մայր Աթոռոյն Ամենայն Հայոց Կաթողիկէ Էջմիածնի միանգամայն գրագիր եւ ծաղկարար եւ խորհրդական անդամ սուրբ ժողովոյ նորա, խոնարհ ծառայ Յոհաննէս եպս. Յոհաննէսեան Մշեցոյ, որ էր հասակաւ քառասուն եւ հինգ ամաց սպիտակ պեօք, զի ի ՌՄԻՋ. (1777) թոնջ եւ յավուր ծաղկազարդի ծնեալ եմ ի մօրէ մանուկ: Հանդիպօյթոյ այսմ տեսեր յիշման արժան հրամայել աղաչեմ զձեզ միով Հայր մերի» (ՄՄ ձեռ. Հ^մ 4537, էջ 31բ):

²⁴ Որոշ վիմագրեր տեղ են գտել «Դիվան»-ի II (կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1960), III (կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1967), նաև VI (կազմ.՝ Ս. Ավագյան, Հռ. Ջանիդարյան, Երևան, 1977) պրակներում:

վիմագրերը համեմատել ենք միայն «Դիվան»-ի հետ²⁵ յուրաքանչյուր արձանագրության տակ նշելով նախկին հրատարակությունների տեղերն ու տվել լրացուցիչ ծանոթագրություններ, իսկ այն վիմագրերը, որոնք դուրս են մնացել «Դիվան»-ից կամ ընդգրկված են չպահպանված վիմագրերի կազմում, համեմատել ենք նաև մյուս հրատարակիչների՝ Հովհաննես եպս. Շահխաթունյանցի, Սարգիս վրդ. Ջալալյանցի, Մակար եպս. Բարխուդարյանցի, Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանի, Խաչիկ ծ. վրդ. Դադյանի, Կ. Ղաֆաղարյանի, Բ. Ուլուբաբյանի, Ս. Կարապետյանի ընդօրինակությունների հետ եւ անհրաժեշտության դեպքում տարբերությունները նշել տողատակում:

Համեմատությունը պարզում է, որ Եսայի Հասան-Ջալալյանի ընդօրինակությունները թեպետ հեռու են վիմագրագիտության մեջ կիրառվող ներկայիս պահանջներից (որոշ վիմագրեր արտագրված են թերի, կրճատումներով, տողերի խառն հաջորդականությամբ, օգտագործված չեն վերձանության պայմանական նշաններ, չունեն գրչանկարներ ու լուսանկարներ եւ այլն), այդուհանդերձ, իր ժամանակի համար եւ նույնիսկ այսօր հատկապես Արցախի պատմության համար անփոխարինելի սկզբնաղբյուրներ են: Իզուր չէ Բ. Ուլուբաբյանը նշում, որ «տետրի մեզ հասած ընդօրինակությունների համեմատությունը առկա բնագրերի (վիմական արձանագրությունների) հետ՝ ցույց է տալիս, թե Հայոց Աղվանքի պատմիչն ու հոգևոր վեհապետը որքան ճիշտ ու անթերի է արտագրել արձանագրությունները, որոնք եւ անփոփոխ մտել են տեղագրողներ Հ. Շահխաթունյանցի, Սարգիս Ջալալյանցի եւ այլոց գրքերը»²⁶:

Տարբերությունները տրված են տողատակում՝ հետևյալ համառոտագրություններով.

Պ2 - «Դիվան հայ վիմագրության», պրակ II, Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի շրջաններ, կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1960:

Պ3 - «Դիվան հայ վիմագրության», պրակ III, Վայոց ձոր. Եղեգնաձորի եւ Ազիզբեկովի շրջաններ, կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1967:

Պ5 - «Դիվան հայ վիմագրության», պրակ V, Արցախ, կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1982:

Պ6 - «Դիվան հայ վիմագրության», պրակ VI, Իջևանի շրջան, կազմ.՝ Ս. Ավագյան, Հո. Ջանիդադյան, Երևան, 1977:

²⁵ Բացառություն են կազմում ձեռագրում ընդգրկված Նոր Վարազավանքի երկու արձանագրությունները, որոնց համեմատության համար հիմք ենք ընդունել Կ. Ղաֆաղարյանի ուսումնասիրությունը, ինչպես նաև՝ բուն Աղվանքից որոշ վիմագրեր, որոնց տարբերությունները տրված են ըստ Ս. Կարապետյանի ընդօրինակման. աշխատություններում վիմագրերը հիմնականում ուղեկցվում են գրչանկարներով ու լուսանկարներով:

²⁶ Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 78:

Շհիս. - **Յովհաննէս եպս. Շահխաթունեանց**, Ստորագրություն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխ.՝ Ա. Տեր-Ստեփանյանի, Ս. Էջմիածին, 2014:

Ջլ.1 - «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան», մասն Ա., աշխ.՝ Սարգիս վարդապետի Ջալալեանց, միաբանի վանաց Սանահնի, ի 1841 ամի, Տիփսիս, 1842:

Ջլ.2 - «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան», մասն Բ., աշխ.՝ Սարգիս վարդապետի Ջալալեանց, միաբանի վանաց Սանահնի, Տիփսիս, 1858:

Բրիս. - **Մակար եպս. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երեւան, 1999:

ՄՏՄ - «Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինությունները», գրեց՝ Մեսրոպ մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան, Երուսաղէմ, 1938:

Դդ. - **Խաչիկ ծ. վրդ. Դադեան**, Մեծարանց, որ եւ Ս. Հակոբայ վանից արձանագրությունները. «Բանասէր», Պարիզ, 1901:

Ող. - **Բագրատ Ուլուքարյան**, Գանձասար, Երեւան, 1981:

ՂՖ. - **Կարո Ղաֆադարյան**, Շամշադինի 1935 թվի հնագիտական գիտարշավը. «Էջեր հայոց միջնադարյան մշակույթի եւ պատմության», I, գիտ. ժառանգություն, հ. 5, Երեւան, 2007, էջ 231-307:

ՍԿ - **Սամվել Կարապետյան**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, գիրք I, Երեւան, 1997:

Նախընտրել ենք տողատակում նշել միայն անհրաժեշտ տարընթերցումները. ժամերի կամ օրերի թվաքանակի՝ մի դեպքում տառերի թվային համարժեքով, մեկ այլ դեպքում բառերով արտահայտումը, համառոտագրված կամ «պատիվ» նշան կրող բառերի ամբողջական գրությունը, բառավերջի / կիսաձայնի առկայությունը, հնչյունական չնչին տարբերությունները թողել ենք նույնը:

Արձանագրություններում առկա առանձին բառեր ու բառակապակցություններ, որոնք ավելացվել են ընդօրինակողի կողմից եւ, հետեւաբար, տեղ չեն գտել «Իփվան»-ում, տողատակում արտահայտել ենք «Դ - չիք» տարբերակով: Որոշ արձանագրություններ էլ առկա են հրատարակություններում, սակայն, դուրս են մնացել Եսայի կաթողիկոսի տետրից: Ենթադրելի է, որ դրանք հետագայում ավելացրել են տեղագիրները՝ ի դեմս Շահխաթունյանցի:

7821

**ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆ,
ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ**

Ա. 1ա-20ա [Լճագործինակութիւնք
վանուց, եկեղեցեաց Խութայ, Խաթրայ,
Ծարայ, Գանձասարայ, Հաւապտկոյ,
Եղիշէի Ս. Առաքելոյ, Վաճառու, Գօշայ,
Հաղարծնի եւ այլք]

ա. 1ա Խութայ վանքի երկու երեսի
խաչի արձանն է.

Անուն¹ Աստուծոյ, ես՝ տէր Գրի-
գորէս², տղայութեամբ եկի ի գուռն
եկեղեցւոյս, շատ աշխատանք արա-
րի, իշխանութիւն Շահ Թահմազին³ էր,
զվանքս տուին⁴ տրոնու, ես՝ դապուլ⁵
չարարի. գնացի⁶ նոր⁷ շէնն, շինեցի
Գ. (3)⁸ ջաղաց, Գ. (3) պախջայ⁹ եւ
եկի ի գուռն սուրբ Առաքելոյս, շինե-
ցի զխութ¹⁰, որ եկեղեցւոյս մալն քաշէ¹¹,
զպաղուպախջէս¹² եւ զջաղացներս¹³ եւ
այլ ամենայն աշխատանքս եկեղեցւոյս
վախմ տուի: Արդ, ով ոք այս գեղարան-
քերս¹⁴ եւ զիմ վախմներս հանել ջանայ ի

Սուրբ Առաքելոյս ԳձժԲ. (318) հայրա-
պետացն նզոված է, մասն եւ բաժին ընդ
Յուդայի եւ Կայենի եւ խաչահանուացսն
առցէ եւ մեր մեղացս Տէր է: Եվ ով որ
շէն պահէ եւ զմեզ յիշէ՝ վարձս ի Քրիս-
տոսէ առցէ. ամէն¹⁵:

Նյարք. Շիխ., 451, Ջլ.1, 200, Բրխ., 269,
Ժամոթ. 1, Դ5, 215 (արձ. 763՝ Դաղիվանք):

Ծնթ. «Դիվան»-ում այս արձանագրու-
թյունն ընդգրկված է չպահպանված վիմագրերի
կազմում: Ս. Բարխուդարյանը ծանոթագրում է,
որ այն վերցրել է Եսայի կաթողիկոսի ձեռագրի
արտագրությունից:

բ. 1ա-2ա Այս է արձան եւ զախմի
գրեր Սուրբ Դաթէի առաքելոյն, որ է
Խութայ վանքն.

Շնորհիւն¹⁶ ամենակալին Աստուծոյ¹⁷
եւ միաձնի Որդւոյ¹⁸ նորա |1բ| Յիսու-
սի Քրիստոսի եւ պարգեւօք¹⁹ ամենա-
սուրբ Հոգւոյն²⁰, ես՝ Արգուխաթուն²¹,
նուստ աղախին Քրիստոսի, գուստր
մեծի իշխանաց իշխանին Քրդին եւ
ամուսին Վախտանկայ, թագաւորացնոյ
տեառն Հաթերքոյ եւ ամենայն վերին
Խաչենոյ, յուսով մեծաւ շինեցի զՍուրբ
Կաթողիկէս²² ի տեղւոջ²³ հանգստարա-
նի առն իմոյ եւ զաւակաց իմոյ Հասա-

¹ Բրխ. - Յանուն

² Ջլ.1 - Գրիգոր

³ Շհ. - շահ Թահմազին, Ջլ.1 - Շահթահմազին

⁴ Ջլ.1 - առին

⁵ Շհ., Դ5 - դաբուլ, Բրխ. - Ղաբուլ

⁶ Ջլ.1 - գնացի

⁷ Բրխ. - նոր, Ջլ.1 - նորա

⁸ Ջլ.1 - չորս

⁹ Ջլ.1 - պաղջայ, Շհ., Բրխ. - բաղճայն, Դ5
- բաղջայ

¹⁰ Շհ., Ջլ.1, Բրխ. - զխութ (խութայ վանք)

¹¹ Ջլ.1 - չիք

¹² Բրխ. - զբաղուբաղճէս, Շհ., Դ5 -

զբաղուբաղճէս

¹³ Շհ., Բրխ., Դ5 - զջրաղացներս

¹⁴ Ջլ.1 - գեղերս

¹⁵ Շհ., Բրխ., Դ5 - վերջում թուին :Թէ: (1558)

¹⁶ Դ5 - շնորհիւ

¹⁷ Դ5 - աշնուհետեւ՝ Հաւր

¹⁸ Դ5 - Որդոյ

¹⁹ Դ5 - պարգեւաւք

²⁰ Դ5 - Հոգս

²¹ Դ5 - Արգուխաթունս

²² Դ5 - Կաթողիկէս

²³ Դ5 - տեղոջ

նայ՝ անդրանիկին²⁴ իմոյ եւ Գրիգորի, որ ի Տէրս²⁵ կեսօրեայ²⁶ վաղճանելոց²⁷, զի վասն²⁸ մեղաց խրատեաց զիս Աստուած եւ էբարձ²⁹ ի գլխոյ իմոյ զերկոսեան պսակսն վայելուչ³⁰, զի անդրանիկն իմ Հասան սպանաւ ի թուրքաց պատերազմին վասն քրիստոնէական հաւատոյս եւ զկնի երից ամսոց³¹ զկրտսեր որդին իմ Գրիգորն ի³² Տէրն կոչեցեալ զպարտ բնութեանս հատուցանելով վճարեաց ի զկենցաղոյս³³ եւ փոխեցան առ Քրիստոս սուգ անմխիթար թողալով³⁴ թշվառացելոյ³⁵ մօրս³⁶ իւրեանց։ Այլ զի ի կենդանութեան իւրեանց յոյս ի մտի եղեալ նոցա շինել զեկեղեցի յայսմ տեղոջ, եւ ոչ ժամանեցին վասն արագահաս լինելոյ ի վերայ նոցա մահուն, եւ³⁷ ինձ աւանդեցին անդարձիւ կատարել զփափագ սրտից նոցա եւ իմ յանձն առեալ մեծ յուսով եւ շատ³⁸ աշխատութեամբ շինեցի զքաւարանս ի փրկութիւն³⁹ հոգւոց⁴⁰ նոցա եւ իմ⁴¹ դստերաց⁴² եւ ամենայն զարմից։ Արդ՝ աղերսիւ հաչցեմ, որք երկրպագէք սրբոյ խորանիս, յիշել յա-

ղօթա⁴³ ձեր զվերոյգրեալս⁴⁴ ի սմա։ Կատարեցաւ⁴⁵ ի թուականութեանս Հայոց ՈԿԳ. (1214) ի փառս Աստուծոյ |Չա| եւ ի նորոգութիւն սուրբ ուխտիս եւ սահմանք⁴⁶ ժառանգութիւն⁴⁷ սուրբ⁴⁸ եկեղեցոյս զեօղս⁴⁹ եւ ագարակս իւրեանց սահմանօքն⁵⁰ զԱպահեն⁵¹ զեղնարածանց, զԲչանց⁵², զԿանանչաորն⁵³, որ ի Վայոց⁵⁴ ձոր եւ յերկու տունս Արփա⁵⁵։ Հաստատեցաք կամակցութեամբ եղբարցս զաւագ խորանի պատարագն յանուն վերոյգրելոցս⁵⁶ կատարի⁵⁷ անխափան, եթէ որ յայսմ վճռի հաստատունոյ խափանումն առցէ⁵⁸ յիշխանաց կամ առաջնորդաց տեղւոյս⁵⁹ կամ որ ու իցէ, խափանեսցի յոյս նորա, որ առ Քրիստոս, եւ դատապարտեսցի յԱստուծոյ։

Տրատք. Ծիխ., 450-451, Զլ.1, 199-200, Բրխ., 266, ՄՏՄ, 87բ-88ա, Դ5, 198-9 (արձ. 708՝ Դադիվանք)։

Ծնթ. Ծախխաթունյանցի աշխատության մեջ սույն վիմագիրը ներկայացված է երկու մասից։

գ. Չաբ Որդիք եւ թոռունք Դոփայ եւ վախմ նոցա.

²⁴ Դ5 - անդրանիկիս

²⁵ Դ5 - որ եւ ի Տէրն

²⁶ Դ5 - կիսաւրեա

²⁷ Դ5 - վախճանելոց

²⁸ Դ5 - աշուհեաեւ իմ

²⁹ Դ5 - եբարձ

³⁰ Դ5 - վայելուչ

³¹ Դ5 - աշուհեաեւ եւ

³² Դ5 - Գրիգոր

³³ Դ5 - կենցաղս

³⁴ Դ5 - թողլով

³⁵ Դ5 - թշուառացելո

³⁶ Դ5 - մաւրս

³⁷ Դ5 - չիք

³⁸ Դ5 - չիք

³⁹ Դ5 - վասն փրկութեան

⁴⁰ Դ5 - ոգոց

⁴¹ Դ5 - աշուհեաեւ եւ

⁴² Դ5 - աշուհեաեւ իմոց

⁴³ Դ5 - յաղաւթս

⁴⁴ Դ5 - զվերագրեալսն

⁴⁵ Դ5 - աշուհեաեւ՝ Սուրբ Քաւարանս

⁴⁶ Դ5 - սահմանեցաք

⁴⁷ Դ5 - ժառանգութիւն

⁴⁸ Դ5 - չիք

⁴⁹ Դ5 - զեւղս

⁵⁰ Դ5 - սահմանաւքն

⁵¹ Դ5 - աշուհեաեւ եւ

⁵² Դ5 - զԲճանց

⁵³ Դ5 - զԿանանչաւորն

⁵⁴ Դ5 - Վայո

⁵⁵ Դ5 - տունս յԱրփա

⁵⁶ Դ5 - վերագրելոցս

⁵⁷ Դ5 - կատարել

⁵⁸ Դ5 - առնէ

⁵⁹ Դ5 - տեղոյս

Դոփ բարեպաշտուն՝ դուստր Սարգսի իշխանաց իշխանին, սա ունէր ամուսին իւր զբարեպաշտ իշխանն⁶⁰ զղարա⁶¹ Գրիգորն եւ որդի սոցա⁶² քաջ եւ յաղթող⁶³ զօրավարն⁶⁴ եւ մէծ իշխանն Հասան տէր Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շաղվաքո⁶⁵ եւ այլ բազում գաւառաց եւ քան⁶⁶ առաւել սիրէր զգէօղն⁶⁷ Ծար, հայրենիք եւ պարգեւք քաջութեան, որ են գինք արեան տուեալ աշխարհակալացն Հայոց: Սա ունէր զկին⁶⁸ Մամբան՝ դուստր Քրտին եւ որդի սոցա⁶⁹ զբարի Գրիգորն եւ ամուսին իւր Ասփայ՝ դուստր Կոմսի Տարսաիճին, իշխեցողի⁷⁰ կողմանն Սինեաց եւ սա բազում ընչիւք եւ ծախիւք փարթամացոյց զսուրբ ուխտն զԴատի⁷¹ վանս եւ զԽաթրի վանս⁷², զի շինեաց զտաճարսն, որ է զարպասներն⁷³ /Չբ/ եւ այլ բազում արգիւնս արար եւ միւս որդին տէր Յօհաննէսն, որ շինեաց զսուրբ ուխտն Գէտամէջ, եւ որդի Գրիգորին Վահրամն, որդի սորա Սարգիսն, զոր բազում արգիւնս արարեալ եւ մի ի բազմացն այս է՝ զգեղեցիկ զանգակներն⁷⁴ ի Դատի⁷⁵ վանս, ի Խաթրի⁷⁶ վանս,

ի Գէտամէջ, ի գէօղաքաղաքն⁷⁷ Ծար եւ է մինչեւ ցայսօր⁷⁸: Որդի սորա Հասանն եւ այս Հասանէս բաժանին Դօփա ցեղն, որք են այսօրիկ⁷⁹ Շահանշէն⁸⁰ Ուլուբէկանց պապ, Աղպուղէն⁸¹ Այտինեցոց պապ⁸², Ճհանշէն⁸³ Ջհանշեցոց պապ⁸⁴ եւ որդի Հասանայ՝ Աղբուղէն⁸⁵ եւ որդի սորա Տուրսունն⁸⁶ եւ որդի սորա Այտինն եւ ի ժամանակի սորա ի զօրանալ⁸⁷ իսմայէլացոցն⁸⁸ եւ ի նուազիլ տուն⁸⁹ Հայոց ցիր ու ցան լինելն իշխանացն Հայոց, յարեան այլազգիքն եւ զմուլքն մէծ իշխանին Հասանայ պէթալմալ արարին⁹⁰: Գնաց պարոն Այտինն ի դիւան եւ երեք ամ աշխատեաց եւ բազում ինչ տուեալ ազատեաց ի ձեռաց այլազգացն⁹¹ զվանորայքս եւ զշինարէնքն⁹², զոր Տէրն ամենայնի տացէ զվարձս վաստակոց իւրոց:

Տրատ. Շխւ., 452, Զլ.1, էջ 201-202,

Բրխ., 267-268:

Ծնթ. Արձանագրութիւնից առաջ Ս. Զալալյանցը նշում է հետեւյալը. «Արձանագրութիւնը տայն վանաց, զոր հանի ի էին ձեռագրոյ եղելոյ ի գրաւրան Բաղդասար արքեպիսկոպոսի եւ մեարապօլսի վիճակին Գանձասարոյ»: Այսինքն՝

⁶⁰ Զլ.1 - չիք

⁶¹ Շհւ., Բրխ. - զՂարա, Զլ.1 - զԽաթրայ

⁶² Զլ.1 - նոցա

⁶³ Զլ.1 - յաղթաւղ

⁶⁴ Զլ.1, Բրխ. - զաւրավարն

⁶⁵ Զլ.1 - Շաղվաքու

⁶⁶ Շհւ. - քան զամենայն

⁶⁷ Զլ.1 - զգեղեղն, Բրխ. - զգեհաւղն

⁶⁸ Զլ.1 - չիք

⁶⁹ Զլ.1 - նոցա

⁷⁰ Զլ.1 - իշխողին, Բրխ. - իշխողի

⁷¹ Շհւ. - զԴատի, Զլ.1 - Ստաթէի

⁷² Զլ.1 - չիք

⁷³ Բրխ. - Դարպասներն

⁷⁴ Բրխ. - զանգականին

⁷⁵ Զլ.1 - Տաթէի

⁷⁶ Զլ.1 - Խթրի

⁷⁷ Զլ.1 - գեղաքաղաքն, Բրխ. -

գեղաքաղաքն

⁷⁸ Զլ.1 - ցայսօր

⁷⁹ Զլ.1 - այնօրիկ

⁸⁰ Զլ.1 - Շահանշահ

⁸¹ Շհւ., Բրխ. - Աղբուղէն, Զլ.1 -

Պապաբուղին

⁸² Զլ.1 - Յայտինեցոց Պապ

⁸³ Շհւ., Բրխ. - Ջհանշէն, Զլ.1 - Ջահանշէն

⁸⁴ Զլ.1 - Շահանշեցոց Պապ

⁸⁵ Զլ.1 - Ապուղէն

⁸⁶ Զլ.1 - Դուրսուն

⁸⁷ Զլ.1, Բրխ. - զաւրանալ

⁸⁸ Զլ.1, Բրխ. - Իսմայէլացոց

⁸⁹ Զլ.1 - նուազել տանն, Բրխ. - տանս

⁹⁰ Զլ.1 - Բեթալմալաթ արին

⁹¹ Զլ.1, Բրխ. - ալլազգեաց

⁹² Զլ.1 - չիք

մենք գործ ունենք ոչ թե վիճադրի, այլ ձեռագրի հիշարարարանի հետ, ըստ այդմ էլ այն դուրս է մնացել «Դիվան»-ից: Ս. Բարխուդարյանն այն համարում է հեղափոխական լրացում՝ արված Շահ-խաթունյանցի կողմից (ԴՆ, էջ 216-217):

դ. *Ջբ-Յա Կաման ամենակալին Աստուծոյ եւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, այս մեր գիրն է իշխանական հրամանի.*

Ես՝ *Տուրսուն*⁹³, *Ալթիս*⁹⁴, *Պոօշ*⁹⁵, *Գրիգոր*, *Հասան* եւ *Էղբարք* եւ *որդիքս մեր*, *զայս հաստատ սիկիլս*⁹⁶ *տուաք տէր Աւագ եպիսկոպոսին եւ իւր Էղբարք Մանուէլ Յա արեղային, որ մեր հայրենի աթոռն՝ զԴադի*⁹⁷ *վանս, զԽաթի*⁹⁸ *վանս, զԳէտամէջն, որ մեր գերեզմանատուն է*⁹⁹ *ի մեր պապանցն մեզ մնացած, վասն սոցա լաւ միամտութեան համար, զի վանօրայքս*¹⁰⁰ *մարդ չկայր*¹⁰¹, *որ յառաջն գայր*¹⁰² *եւ շէն պահէր եւ գեկեղեցիքս*¹⁰³ *լուսաւորէր: Այս պատճառէս երես գրաք եւ զայն սուրբ աթոռին*¹⁰⁴ *ի նոքա ապասպարեցաք*¹⁰⁵ *եւ գերկու իշխանութիւնն, որ է եպիսկոպոսութիւնն եւ պարոնութիւնն*¹⁰⁶ *էլ հենց ի նոսա յանձնեցաք, որպէս առաջին մէծ կաթողիկոսն*¹⁰⁷ *մէծ տէր Զաքարիային*¹⁰⁸, *տէր Աթանասին*

*եւ տէր Ասրգսին էր*¹⁰⁹ *տուեալ զԴադի*¹¹⁰ *վանս, զԽաթի*¹¹¹ *վանս, զՀաղպաթ*¹¹² *իւր վիճակաւն*¹¹³, *նոյնպէս եւ այս հոգեւոր*¹¹⁴ *տէր Գրիգոր կաթողիկոսն*¹¹⁵ *զայս երեք աթոռս հաստատեաց վիճակաւ եւ շրջաբերական թղթիւ:*

Կրտս. Շնխ., 452-453, Ջլ.1, 202, Բրխ., 268, ՄՏՄ, 97, ԴՆ, 216 (արձ. 764՝ Դադիվանք):

